



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Զ. ՈՐԹՈՒՆԻ	Երբ գնացմանը կ'ուշանամ	,
Գ. ՊԸԼՏԵԱՆ	Ապաստան	
Մ. ԻՇԽԱՆ	Յուշեր Լեւոն Շանթի կեանքէն՝	
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Ընդերկրեայ տառապանք	
Ս. ԿԻՐԱՆՈՍԵԱՆ	Բամաստեղծներու ըմբոստ սերունդը եւ իր քիւրեղեայ ճայնը	
* * *	Ժանդարմական վարչութեան գեկուցումը հայերի յեղափոխական շարժումներէ մասին	
Ա. ՏԵՐ ՄԻՆԱՍԵԱՆ	Տեղեկագրի ոտքեր	
Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ	Զ. Խալափեանի «Մեռնող-յառնող»ը	
Կ. ՇԱՀԻՆԵԱՆ	Պերթու Պրիսթի դիւցազներգակ քաղաքին ըմբռնումը	
* * *	Նշմարներ	
* * *	Բովանդակութեան ցանկ	

Բազմ

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Ի. ՏԱՐԻ. ԽԻՒՆ ԴՆԵՑԻՄԵՐ 1981 ԳԼԵՐՈՒԹ

Զ. ՈՐԲՈՒՆԻ

ԵՐԲ ԳՆԱՅՔՆԵՐԸ ԿՈՒՅԱՆԱՆ

«Հոգին տուր՝ զագոսն կ'ապրի»
«Մեր հեանքը», ՀՐԱՑ ԶԱՐԴԱՐՈՒՄ

Ներկայ գրութիւնը, իր մահուանէ քանի մը ամիս առաջ Զ. Որբունի մեքենագրած ու պատրաստած էր «Բազմին» շրջանի մտադրութեամբ: Ատենին, Լեւոնյանի հետ թղթատարային կապերու խղով պատճառ կ'ըլլար, որ առաջումը յետաձգուէր: Վրայ կը հասնէր անխուսափելին: Հետեւաբար այս հրատարակութիւնը տեղի կ'առնէր որոշ ուշացումով, քայքայ հեղինակի կամքին համաձայն:

Գրութեան տակ գրուած թուականներին կարելի է դուռնակի արգէն, որ եղածը 1947ին կ'ուստ մնացած էր մը ամբողջացումն է 1980ին: Ընթերցողը կը եւմարէ անմիջապէս, որ «Երբ ցնացները կ'աշտանան» կը բացուի վէպի մը լայնքով, կը կտտի յանկարծ, մինչ պատումը կը շարունակուի ու կը հասնի իր աւարտին: Վէպի յատկապէս մըն է արբանածը, աւելի քան ընդարձակ պատմութեւ մը, որուն կը պահուին ազատուող յետագարձ անտրոփները: Պը հասկցուի ինչու, հակառակ տարածան թուականին եւ քննարկին վրայ բերում որոշ ընդլայնումներուն՝ գրութիւնը կը պատկանի Որբունիի արտագրութեան միջին տարիներուն, ընդմէջ «Փարսը» եւ «Եւ Եղի» մարզային:

Գ. Գ.

Յանցանքը զնայցիւնը չէր, որ ուշացաւ, այլ՝ կնոջը, որ գանգաւանցաւ
երբ իրիկուն եղաւ:

— Ատեղիդ ծակին փակեք—մնացեք ես: Ամէն տեղ ես պիտի վազեմ: Աս

digitised by

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
Ա.Ր.Ա.Բ. ԳԼԵՐՈՒԹ
29-85 Բ

տա՛ր, ան բե՛ր: Օր մը որանց սա ասեղիդ ծակը ձգէիր: Աղջիկը մինակ իմս չէ, չէ՛մ գիտես քի քեզի ինչպէ՞ս կը սիրէ:

Գարեգին Սեւիւլեան դժկամակութեամբ հնազանդեցաւ: Ձէր սիրեր օրուան ընկերքը վաղուան ձգել: Ծնորհիւ իր այդ ճշդապահութեան է, որ մեծ վատահոթիւն կը վայելէր գործատէրերուն մօտ եւ աստով ալ հին սովորութիւն մը եղած էր, որ կիներ պիտի բերէր ու տանէր կարի խոշոր ծրարները: Ինչը աստուան մութն ու լուսին կ'ելլէր ու կ'անցնէր կարի խոշոր սեղանին առջեւ, մինչեւ ուշ տակն, իրիկուան կերակուրէն ալ շատ վերջը: Այդպէս էր եղած երկու տասնեակ տարիներէ ի վեր, երբ Պոլսէն հեռացաւ, որքանոցին հետ, անցաւ Սուրիա, յետոյ Յունաստան: Եունաստանէն ետք եկաւ-իսկաւ Փարիզ ու հաստատուեցաւ Մոնմարթրի բարձունքին վրայ:

Օրական տասնըհինգ-տասնըվեց ժամ աշխատելէ վերջ ո՛չ ժամանակ եւ ոչ ալ ուժ ունեցած էր, սակ, դուրս ելլել ու թեւերը փարտելով երկրն-նար Կոնստանտինուպոլիս: Այնքան յոգնած կ'ըլլար, որ երթալ գործը տուն բերելու համար ըրած տեղափոխութիւնները կատարեալ ճանճոյթ էին եւ ցաւ մը՝ կորսուած ժամանակին համար: Կանուխ ամուսնացած էր եւ ազատած էր այդ վաղվաճակներէն: Տարիներ շարունակ կիներ, Սաթենիկը, ինքն ալ որբու-հի մը, քաջարար կը կատարէր իրեն բաժին ինկած դուրսի բոլոր գործերը: Գարեգին, կարի մեքենային կամ սեղանին առջեւ նստած՝ դաւաթ մը ջուր խմելու համար իսկ տեղէն չէր ելլեր: Աչքը սեղանին՝ կը կարէր ու կը կա-րէր: Օր մը գլուխը վերցնելն ու նստած տեղէն՝ պատուհանէն դուրս արեւ-ւին նայելը, կամ քանի մը աստղ համբելը ամառ գիշերուան մը խորունկ երկնակամարին վրայ, անկարելի, անմարտնչի բաներ եղած էին: Ատիկա պարսպ մարդու գործ է: Կ', ի՞նչ պարսպ մարդու, պարսպ մարդ կա՞յ ե-զեր եւ ըստ Գարեգինին, որ ինքնիրենը մտածելու սովորութիւն ունէր մի-տայն, կեանքի պայքարին հետ հազիւ գլուխ կ'ելլուի եզեր:

Երբ Սաթենիկը քիչ մը պատուհանին առջեւը կենար ու հոգեզմայլ դի-տէր դուրսի խաղաղ ու փայլուն արեւը, չէր կրնար զսպել սրտին զեղումը ու կ'ըսէր.

— Ա՛խ, Գարեգին, ի՛նչ աղուոր օդ կայ դուրսը:

Սեւիւլեան պատասխան կու տար սրտնեղած.

— Ատոնք փոր չեն կշտացներ, աղջիկս, դուն սա Հայ լայնփին ծրարը տա՛ր մէյ մը ու վերադարձիդ փրկուցնէն անցի՛ր:

Գլուխը վեր անցած շատաւ, երբ Սաթենիկ իր սրտնեղութիւնը յայտ-նեց: Մեքենարար ընդունեց, որ, ի հարկէ, աղջիկը իրենն ալ էր եւ յետոյ՝ չէր կրնար գիշերանց ձգել, որ կինը դուրս ելլէր մինակը: Իրեն կը վայելէր կայարանէն աղջիկը երթալ առնելը: Բայց ասանկ, սէզոնին սկիզբը, երբ գործերը իրար կը հրմշտեն: Ինչ ազէկ պիտի ըլլար, եթէ վարդուհին տա-նըհինգ օր առաջ վերադարձած ըլլար Նիսէն, գործերու թեթեւ եղանակին: Ինչ չէր ուզած Փարիզէն հեռանալ նոյնիսկ Օգոստոսի մոռթ սէզոնին, մեր-ժելով իր Նիս բնակող որքանոցի ընկերոջը հրաւէրը եւ դահացած էր միտայն վարդուհին զրկելով դպրոցները գոցուելէն անմիջապէս վերջ, Յունիս տա-նըհինգ կրցած էր կիներ համոզել՝ ըսելով, որ խարուելու չէր, տակաւին դրամ վատակելու ժամանակ էր, քանի սա կտրոնները կային:

— Գալ ամառ կ'երթանք, Սաթենիկ, կտրոն-մարոն տեղէն վերցուած կ'ըլլայ ու չէնք-նորհեմ մոռթ սէզոն կ'ըլլայ նորէն առաջուան պէս, — աւելցուց Գարեգին՝ կնոջը սիրտը առնելու համար: Բայց չըսու իր թաքուն

ղգացումը: Հիւանդագին այն վտիւր, որ ունէր տունէն հեռանալու: Իրեն ա-
նանկ կու գար, թէ վերադարձին տունը-տեղը պիտի չդռնէր: Այնքան տուն
փոխած, այնքան տեղ փոխած էր, որ հիմա ունեցածին կառչած կը մնար,
ինչպէս բաղնիք՝ կողմնի հակալ բունին: Այս զգացումը մնալուն բնակիչն էր
անոր սրտին: Շարժանկարի պայտած իրիկունները այդ զգացումը իր պահուած
անկիւնէն յանկարծ դուրս կու գար ու յայտնի կ'ըլլար սրտի անպիտան զո-
ղով մը, որ միայն տուն վերադարձին կ'անհետանար:

Գարեգինին ձեռքերը արագ-արագ կը գործէին, ուշի ուշով անոնց հե-
տեւող աչքերուն տակէն: Ահա՛, այդ աչքերէն մէկն էր, որ վերցուց, հետե-
ւելով Սաթենիկին, որ շարունակ կ'երթար-կու գար՝ կերակուրի պատրաս-
տութիւնով զբաղած: Անոր մարմնին վրայ ծանրութիւն մը տեսաւ, հիշող այն
պահուն, երբ նայուածքը անկէ կը ընկեր ձեռքի գործին: Բացակայ նայ-
ւածքով աչքեր ունէր Սաթենիկ: Դունչը կախ էր, բերնին ելքերը ինկած:
Ո՛չ մէկ գիծ, ո՛չ մէկ ձեւ կար անոր վրայ, որ դէպի վեր թռիչք մը ուր-
եւորէր: Ամբողջ անձը կարծես վար կը թափէր՝ հողի կանչին ունկնդիր:
Հողը այդպէս կամայ-կամայ, խորշով առ խորշով, իրեն կը կանչէր իր վը-
րան կոխոտող տրարածները: Սեւեւեւեւան ներսիդին ցնցում մը ունեցաւ:
Այդ կէտը իր Սաթենիկին էր, որ այդ պահուն իրեն անծանօթ մէկը թուեցաւ:
Ի՞նչ շուտ անցեր էր անողոք ժամանակը, որ կը քաշէ ամէն բան իր շուրջը:
Սիրտը ճմլուեցաւ եւ միւս աչքն ալ վերցուց Սաթենիկին վրայ: Երկու աչ-
քերն ալ թաց էին:

— Հիմա լմնցայ, Սաթենիկ, ճանս, — ըսաւ Սեւեւեւան Գարեգին,
կարծես թէ ատիկա իր գործընթին եւ իր կարեկցութեան ամէնէն փափակ
արտայայտութիւնը եղած ըլլար:

Ծաշէն ետք սկսաւ հագուել զանդաղ շարժումներով, հարսնիք դաշո-
ղի մը նման, եւ ինձամբով, հակառակ որ ժամանակը արդէն ուշ էր: Փող-
կապին ընտրութիւնը աւելի երկար տեսց, քան հագուելը: Ձկամութիւնը չէր
իր զանգագութեան պատճառը, այլ այն մտածումը, որ եկեր էր ուղեղին
մէջ ու կը պտտէր ոլորտէ ոլորտ: Կոշիկը յոգնած դէմքը, ուսերուն կորու-
թիւնը չէին հեռանար մտքին մէջէն: Անոր ժամանակէն առաջ ծերացած երե-
ւոյթին մէջ չէր ուզեր իր իսկ պատկերը տեսնել, բայց նայուածքը զազտա-
պողի կ'իյնար հայելիին մակերեսին վրայ ու մէկէն կը փախէր: Անդադրում
էր թեւեւ մըն էր ան հայելիին դէպի փողկապը ու փողկապէն նորէն դէպի
հայելին: Այսպէսով կը խուսափէր ինքզինքին հանդիպելէ հայելիին մէջ ցո-
լացող դէմքին վրայ: Բայց յանկարծ չկրցաւ շտեմել աչքերուն տակ կազմը-
ւած թոյլ ուսերը, քթին խորոցած կլորութիւնը, եւ աչքերը մեծ-մեծ բա-
ցած պիտի մտնէին հայելիին, եթէ յանկարծ չքաշուէր կնոջմէն, որ անհամ-
բեր կը հետեւէր ամուսնին տեսնացող շարժումներուն, մերթ րնդ մերթ ժա-
մացոյցին ուղղելով նայուածքը:

— Սաթենիկ, — ըսաւ Գարեգին, միտքերը խառն-տկելու համար, —
ո՛ր է ան տեւ դիմերով կառ-կարմիր գրավաթս, աղուոր կ'երթայ աս ալիւ
մարիմին հետ:

— Ձեռքիդ նայէ՛, — պատասխանեց Սաթենիկ թեթեւ հեղանջով մը,
— դուն ալ ինծի պէս խափեր ես:

Գարեգին նայեցաւ ձեռքին: Փողկապը արդարեւ ձեռքին մէջ էր: Ուրե-
նայ ինքն իր վրայ եւ այս անգամ անպարկեշտ:

Երբ դուրս ելաւ, վերջացող Սեպտեմբերի իրիկուան զովութիւնը խա-
ծաւ անոր տաքած այտերը: Վրան աշխուժութիւն մը եկաւ եւ քիչ մըն ալ

վհատեցուցի՜ զազափարներ ցրուելու մխաճով՝ վերյիշեց տառնըհինգ տարի առաջուան երկտասարդը, որ հաստատուն քայլերով կ'իջնէր այս փողոցէն՝ երթալու համար իր գործատէրերուն մօտ։ Այդպէս իջաւ Լըտիւք փողոցի դառնվարէն։ Այդ վաճառաւոր փողոցը արդէն շատոնց կորսնցուցած էր իր ետուզեողը։ Միայն արճարանները բաց էին։ Վարը, Մոնմարթի երթեւեկը աւելի մեծ էր։ Ուանութները լեցուն էին գնորդներով։ Ճաշարաններն ու սրահարանները կը վիտային յարաճուն բազմութեամբ։ Քանի մը քայլ եւս՝ եւ ահա պուլվարին ամբոխը կուլ տուաւ զինքը։ Պափլիկներն ու արարները ոկտան դառնալ անոր շուրջը՝ աչքերնին միշտ ոտտիկաններուն հետամուտ, բաներ մը կը փոփային իրեն՝ ճամբրիկեան սիկարէթ, շըվիճկ կով, չուշուրա։ Բոլորն ալ ամերիկացի գինուոյներուն կողմէ հայթայթուած։ Գարեգին աչք մը անգամ չնետեց անոնց վրայ։ Ամբոխը ճեղքելով քայլեց դէպի գետնուղիին առաջին կայանը՝ մեթրօ Փիկալ, ուրկէ Քոնքորտ պիտի երթար ու հոն փոխելով՝ Վենսէնի գծով պիտի հասնէր Հարաւային կայարանը, կառ տր իրեն։ Բայց հող դարձանք մը մտաւ մտքին մէջ։ Ինչո՞ւ համար այս օտար քաղաքէն ճգնուելու ցգայնութիւն չէր ունեցած։ Ժամանակին, նոյնիսկ գետ երկէ, կար ալդ գլայնութիւնը եր մէջ։ Երբ դուրս կ'ելլէր, կը զգար, որ քաղաքը, հակա զաղաքը գլխուն վրայ պիտի չըջուէր։ Հողին մարմինին հետ կը պզգիկնար, կը սեղմուէր, կը կծկուէր, պահուրտելու անկիւն մը կը փնտռէր։ Ուանութներուն արտասովոր տեսարանները, ան ալ գիշերով, փարթած սրճարաններու անդադրում յաճախները, ամբոխին ժխորը՝ խառնուած կառքերու թոհուրոհին, լոյսերու շողով վառնումը, մոնտաւանդ շորս կողովդ դարձող կիներու բազմութիւնը, որ շարունակ ականջներուդ կը մրճան՝ «եկու՛ր, եկու՛ր» կամ՝ «կու՛ս, կու՛ս» իրենց դիտներն ու բաց կուրծքերը քթիդ տակէն անցնելով. այո՛, այս բոլորը վախ կը պատճառէին իրեն։ Ի՞նչ պիտի ընէր, եթէ բան մը պատահէր իրեն, գրպանին ունեցածը օրուան մը ապահովութիւնն անդին ո՛չ մէկ խոստում կ'ընծայէր։ Այս տեսակ մտածումներու մէջ մարդ սիրտը միշտ դողով ու շարունակ ինքն իր մէջ կորսուելու վախով կ'ապրէ։ Վախն ու դողը աղքատին բաժինն է այս աշխարհի վրայ։ Գարեգին աչքերը դոց ապրեր էր զոռւշանալով կեանքի զանապառ ու զարմանազան հրաւերներէն։ Իրեն կը թուէր, թէ մինչեւ հիմա իր կեանքը գողութիւն մըն էր, գողցուած բան մը, որուն վրայ մարդիկ աչք կը դոցէին։ Տեսակ մը արտօնեալ գողութիւն։

Մեթրոյին դուրսը երկտասարդ կին մը աչք ըրաւ իրեն, ի հարկէ ո՛չ բոլորովին երկտասարդ, անոնք պուլվարին վրայ էին ողկոյցներով, իրենց բոլոր բարեմասնութիւնները պարզած գրօշակի պէս, իսկ այս մէկը, ինչպէս թովորական է, արդէն երեսունի վրայ ոտք դրած՝ կողմնակի ճարպիկութիւններ ընելու համար մեկուսացած էր։ Այդպէս ալ բրաւ։ Երբ Գարեգին մեթրոյին անդուխին կը գիմէր, կինը հոն կեցաւ, շրջազգեստը վեր առաւ եւ Գարեգինին քթին տակ դրաւ իր ձիւնի պէս ճեփ-ճեփմակ ու մտաւ գիտար։ Գարեգին հպարտ չէր այդ հրաւերէն, բայց տրամադրութիւնը յանկարծ փոխուած էր արմատապէս։ Այդ պահուն հասկցաւ, թէ իրապէս բան մը վտիւռուած էր իր կեանքին մէջ։ Վրան տարօրինակ համարձակութիւն մը կար։ Ձէր գիտեր, թէ ուրկէ՞ կու՛ս պար, իր մէջէն՝ ելած էր, թէ դուրսէն մէջը մըտած էր. նոյնիսկ ձեռքերը վեր առաւ եւ անոնցմով կուրծքը չօշափեց՝ փրկատու համար այնտեղ անոր բնակավայրը։ Ձէ՞ որ ամէն բան կրնար գնել, նոսեւ ահա կրնար, իր նամակի թուղթի նման ճերմակ գիտար։ Կրնար ուղղածը գնել։ Ատիկա գնելէդ վերջ, մնացեալը հայտէ՛, հայտէ՛... ի զուր

տեղը չէր տեսնացած հարստութիւնը այս դժնդհակ տարիներու ընթացքին ու յանկարծ վախի զգացումը անյայտացաւ իր մէջէն: Նոյնիսկ ինքզինքը երբ-տատարդ զգաց: Ի՞նչ կարելի օրութիւն ունէին աչքերուն տակի կապտուուն ուռերը: Յոգնութիւնը, անշուշտ քիչ մը շատ կ'աշխատէր, բայց հիմա, եթէ ուզէր, քիչ աշխատելով ալ կրնար ապրիլ: Ու յետոյ, տեսնենք, թէ ճիշդ էր: Ինքն Սաթենիկին խուզարկու հայտնաբերեց ընկալին, լաւ մը պիտի նայէր հայելին մէջ: Հաւանարար պատրանք էին այդ ուռերը: Ինքնախարհութիւն: — Օ՛հ, — ըրաւ ինքնիրեն, — Սաթենիկին ըսածին պէս ալ խռճտծ չեմ եղիր:

Ու հաճոյութեամբ մը նայեցաւ իրեն ժպտացող կնոջը, որ նոյն պահուն աչք կ'ընկր մեթրոյին սանդուխներէն իջնող ծերունիի մը: Գարեգին մէկէն ի մէկ մտայեցաւ: Քայլերը աբազացնելով իջաւ դեմնուղին:

— Ա՛հ, — կը մըթմըթար Վարդուհին, — քրէնը...

Երբ կայարան հասաւ, թէթեւ մը երազկոտ, շուարելով վազեց դէպի ներքին ֆարափները: Նայեցաւ կայարանին ճակատը բազմած խոշոր ժամադրոյին, որ ճիշդ այդ պահուն ոկսաւ ժամը տասը զարեւել: Ուրեմն տասը վայրկեանէն շոգեկառքը հոն պիտի ըլլար: Լաշն շունչ մը քաշեց, այնքան վախեցած էր, որ կրնար ուշ մնացած ըլլալ, իրեն այնպէս թուեցաւ, թէ ժամեր անցեր էին տունէն մեկնելէն ի վեր, բայց յանկարծ կայարանին բարձրախօսը պոռաց.

— Այլօ՛, այլօ՛, Նիտի կառախումբը ժամ մը յապաղում պիտի ունենայ: Եւ յայտարարութիւնը կրկնուեցաւ:

Ուրեմն ժամը տասին տասը անցած կառախումբը պիտի դար ժամը տասնեմէկին տասը անց, Դեռ ժամէ մը աւելի կար: Սկսաւ ֆարափին վրայ երթարդալ: Ուռնեւրամ բազմութիւնը կը նօսրանար՝ սպասումէն ձանձրացած: Շատեր ուշի ուշով թեթեւ կը կարդային՝ անոր էջերուն մէջ թաղուած: Ինքը թերթ շունչէր գրպանը: Տունը հայերէն թերթ մը կար, բայց եթէ քովն ալ ըլլար՝ կարդալու պիտի չհամարձակէր, ուրիշներուն աջէն օտար ըլլալը չհասկցնելու համար: Պահ մը գնաց մինչեւ ֆարափին վրայի լրագրախոսանոթն է՛նչօղը, բայց ինչ օգուտ, պարզ մեակահետքիւն մը պիտի ըլլար յաշաւարիշներուն, քանի որ շնորհքով Փրանսերէն կարդալ չէր գիտեր, խօսածն ոյ «փութի Ե՛կլը» կը նմանէր եւ փոխանակ ժամանակը անցնելու՝ բնթերցանութիւնը պիտի քրտնեցնէր գինքը: Եւ իրեն համար մինչեւ այդ անձանօթ հաճոյքով մ'ընէ, որ աչք պարտացուց լճի պէս փուռած թերթերուն վրայ: Օրաթերթերուն ըով էին լաբաթաթերթերը, դունսաւոր զարդաթերթեր, որոնց կողքերուն վրայ մերկ սրունքներով, նոյնիսկ մերկիրան կնիկներ կային ու, մէկէն, ահա, «ժօօժօ» ըրաւ մտքին մէջէն կայծակի արագութիւնով վազող բան մը, որ իջնելով սրտին մէջ՝ կարծեա ճեղք մը բացաւ հոն: Կողքին վրայ գրուած աչք ծակող գիրերով «NUES» բառը կար խոշոր գիրերով: «Այսինքն՝ մերկ կնիք» թարգմանեց Գարեգին ինքնիրեն համար աւ մինչդեռ պատկառանքով մը նայուածքը կը հեռացնէր անկէ, երեսակայութեան մէջէն անցաւ մեթրոյին գլխուն երիտասարդ կինը: Հիմա կը դիտէր վերի դարակներուն վրայ շարուած անհամար գիրքերը: Զինքը զարմացնողը այն եղաւ, որ ճամբորդներ անդադար լրագիրներու հետ գիրքեր ալ կը գնէին: «Ահա աւտանկ, ըրաւ Սեւիկիւն ինքնիրեն, բանաստեղծ պիտի ըլլա՞ս, մեծ ժողովուրդի բանաստեղծ ըլլալու հա՞: Ու յիշեց արգահատանքով, թէ ինչպէ՞ս հայ գիրքերը գրեթէ բոնի կը ծախուէին: Սիւնեոյնն է, թէ՛ դրողները կը բերէին, թէ՛ անոնց բարեկամները: Ահա այս արգահատանքն է, որուն ուրիշ-

ներ կամ իրենք՝ գրողները ողբերգութիւն անունը կու տային, ծածկելու համար իրենց բուն իսկ մտածումը: Գարեգինի մտքին մէջ հայ գրողը տեսակ մը մութացկան էր եւ եթէ գնելու անգամ ըլլար, ձեռքը առաջ չներ հրթար գիրքը առնել կարդալու: Այդ ձեռով ծախուած գիրքը կը կորսնցնէր իր պատկառանք պարտադրող հանգամանքը: Այդ պահուն դարակներուն վրայ դիզուած գիրքերուն զիմացը խորին յարգանքով կեցած էր: Գարեգին անգնին կսկիծով մը յուզուեցաւ հակառակ անոր, որ այդ ցաւը հայ ծնած ըլլալու զղջումն էր միեւնոյն ատեն: «Ի՞նչ ըրած ենք Աստուծոյ, որ հայ ծնած ենք», կ'ըսէր ձայն մը ներսէն, իբրեւ թէ հայ ծնած ըլլալը պատիժ մը եղած ըլլար: Եւ ընդոտտ յարժամով մը առաջ գնաց ու մասովը ցոյց տալով՝ լրագրավաճառէն ուզեց գիրք մը, որուն կողքը ուշադրութիւնը գրաւած էր: Խորհրդաւոր քան մըն էր, սեւ գիծակ մը, խաչածեւուած սուրերու կեղծոնին: Յատկօրէն չէր կրնար ըմբռնել, թէ ինչո՞ւ համար գնած էր այդ գիրքը, զոր ո՛չ ինքը եւ ոչ ալ իր կէնը սլիտի ուզէին կարդալ, իսկ Վարդուհիին համար զայն անյարմար կը դռնէր, ճիշդ այդ զիմակէն եւ սուրերէն կուսնելով պարունակութիւնը: Բայց եւ այնպէս արտի հանգստութիւն մը ունեցաւ: Զարմանալի գոհունակութիւն մը:

— Գիրք սլիտի առնե՞ս, ասանկ սլիտի առնես, ուղածիդ պէս, — խորհեցաւ եւ ուղղակի բողոք մը արձակեց պարտադրեալ կերպով իրեն ծախուած հայ գիրքերուն դէմ: «Քաջալերելու համար է եղեր»:

Գիրքը թիւին տակ՝ ետ դարձաւ: Ժիշդ զիմացն էր անհամար երկաթադիւծերուն, որոնք զուգահեռաբար կամ դիրար խաչածեւելով, կատարեալ ոտառայի մը պատկերը զծած՝ կը հեռանային դէպի խորհրդաւոր անծանօթը, որ կընար արեւին տակ պնտացող կապոյտ ծով մը ըլլալ, մանիշակագոյն երկինք մը եւ կամ ալպան բարձրաբերձ լեռներն ու անդին՝ Իտալիան: Արուարձանները սպասարկող շողեկառքեր իրարու ետեւէ կը սահէին դէպի քովի քաղաքները, բայց աւելի տպաւորիչ էին մեծ գծի շագեկառքերը, որոնց զանգուածային շողեմեքենան մութ ու ծուխ հանելով, հեռաւորութիւններով բեռնաւոր «օֆ», «ֆ» կ'ընէր, յագնութիւնը թող տալով մէկէն քարափին եղբարք ու կ'անշարժանար: Ծամբորդները թութի պէս կը թափէին անկէ: Քարափը յանկարծ կը խճողուէր խուճապահար ամբոխով: Նշեկտրասայլ բեռնատարներ, բեռնակիրներ կը վազէին, մարդոց աղմուկը կը խառնուէր զանգակներու ճողոցներուն եւ տօնական մթնոլորտի մը մէջ շուրած նայուածքներ իրար կը փնտռէին, կը գտնէին ու քանի մը վայրկեանէն կը պարպուէր քարափը, որուն երկայնքին կը մնար մինակ ու լուռ, լքուած, անպլտ քանի մը նման, պարապ կառաչարը: Գարեգին խորունկ լուռն քաշեց՝ կարծես վերջ մը գնելու համար իր անկերջ մտածումներուն, որոնք չէր գիտեր, թէ ուրկէ՞ կու գային եւ ո՞ւր կ'երթային անկող հիւրերու պէս: Բայց լաւ էր այդպէս՝ ձգել միտքը ազատ, որ հոսի կարկաշուն առուակի մը նման ողորկ խճաւորներուն վրայէն, խոտի շիւղերուն տակէն, գաշտներու լուծեան մէջէն, գլխաւորապէս ու գուրթուն: Բայց ահա մտապատկերներու նոր շարան մը ծագեցաւ մտքին մէջ, երբ ծուխին հոտը ունդերէն ներս մտաւ՝ ընած օդին խառնուած, այնքան ճամբորդութիւն թելադրող բան մը կար կայարանին հոսին մէջ:

— Ի՞նչ խենթութիւն բրինձ չգացինք, — ըսաւ ինքնիրեն՝ խորհելով Նիսի բնկերոջ հրաւէրին:

Ու դալ մտառուան համար երկար-բարակ ծրագիր պատրաստելով՝ գնաց Նիսի շողեկառքին հասնելիք քարափը: Ճասնրմէկին քառորդ կար տակաւին:

Ժամանակը չէր ուղեր անցնել: Ժամացոյցին մեծ պաշար մէկէկէմէկէկէ կ'անցնէր վայրկեաններուն վրայէն ու մէկ գիծէն միւսը Գարեգին քանի՛-քանի՛ մտածումներ եւ զգացումներ կ'ունենար: Չարմացաւ ժամ մը չտեսած այդ ժամանակամիջոցին այդքան բաներ զգացած ըլլալուն: Սիրտը մշտաւորապէս աղբիւրի կը նմանէր, կը հոսէր, կը հոսէր: Երբ նորէն քարափին վրայ երթալու գալ սկսաւ, աղբիւրը կը հոսէր, բայց ո՛չ մէկ պատկեր կը կադուէր մտքին մէջ: Ժամանակներուն պատշաճօրէն պակսէր էին: Անոնք, որ դեռ հոն էին, կարգացեր էին թերթերը ու կը ձանձրանային բացառապէս կերպով: Յօրանջելով, դանդաղ եւ օրօրուն քայլերով քարափին լայնքն ու երկայնքը կը շարժուէին: Նստարանի մը քովէն անցած ատեն Գարեգին շնաշխարհիկ մտածում մը ունեցաւ: Եթէ կարը հետը բերած ըլլար, ահա կը նստէր ու նստարանին վրայ ու թել կը նետէր: Այն ատեն կը տեսնէիք, թէ ինչ շուտ կ'անցնէր ժամանակը եւ նոյնիսկ կարճ կու գար: Եւ խնայող ինքն իր վրայ: Բայց նստաւ, խնդալով հանդերձ նստաւ, ի հարկէ աւանց կար կարելու, միայն թէ նորէն իր արհեստն էր, որ օգնութեան եկաւ իրեն: Սկսաւ աղջիկէն անցնողներուն հազուատները քննել, մերթ սքանչանալով ոճանց վրայ, սրբազրեւով ուրիշներ, ընդհանրապէս սերտելով առաւելութիւններն ու թերութիւնները, ձեռնադրութեան դաս կ'առնէր, երբ միտքը դնաց կ'ինկրուն: Ինքը՝ արհեստի մարդ էր, հազուատներով միայն կը պարծնէր: Ի՞նչ աշխատանքներն կար կ'ինկրուն, քա՛ւ լիցի, անոնց հազուատներուն մէջ, ձեռի եւ գոյնի ի՞նչ տպագրութիւն, ի՞նչ երեսակայութիւն, եւ երանի կու տար կարուհիներուն, որոնք զիրենք ամէկ մարմնի մասնաւոր յատկութիւնն ու զնշանակութիւնը արժեւորելու արուեստը, հոս՝ կուրծքը, հոն՝ լանջքերը, փէշին ետեւի սա ճեղքը, որ սահմանաւոր է գուշակի տալու սրունքներն ու բուժմանը կտրուցիւնը, եւ մէկէն սարսուռ մը անցաւ մարմինէն: Անոր մտածումը աւելի մայրաքաղաք էր սրունքներէն վեր ու կը թափառէր գաղղ ու թուշային մարթին երկայնքն ի վեր: Բայց ինչո՞ւ համար զայն բաղդատութեան դրաւ: Սաթնիկին մարմնին հետ եւ փոքրիկով մը յիշեց անային ատօրեայ կեանքը: Հիմա, ահա, ինչքան շտրկակալ էր կնոջը, որ իրեն տուած էր այս արձակուրդը, այս սրտի արձակուրդը, որ զնացքին ուշացումին պատճառով անհամեմատօրէն կ'երկարէր, կը յաւերժանար: Ինչպէ՞ս չէր խորհած երբեքից այսպէս հոգեկան արձակուրդ տանելու մասին: Վհա, — քսաւ ինքնորեն, — հարուստները, բանաստեղծները այսպէս են, ու ոտքերը երկնցուց, տարածուեցաւ՝ աւելի խորապէս ըմբռնելու համար այդքան թանկագին վայրկեանները: Միայն թէ անկիւն մը, մտքին մէջ, երկրորդ մակարդակի մը վրայ պարզուեցաւ ընտանի պատկերներու խումբ մը: Վա՛նկ, գնա՛, որ աւելի ուր տեղը, — կ'ըսէր կնոջը ձայնը, — կերակուրը պաղեցաւ, ասեղէն չիս կրնար բաժնուիլ քեզ մը, որ անգամ մըն ալ տաք կերակուր ուտենք, աղջիկը զպրոց պիտի երթայ...»: Այո՛, Վարդուհին: Ինչպէս մոռցեր էր Վարդուհին: Ձէ՞ որ աղջիկը տունելու համար եկած էր կայարան: Ահա տեսաւ զնացքին կայարան մտնելը: Աչքերը պատուհաններուն մէջ՝ աղջիկը կը փնտռէին ու չէին տեսներ: Այնքան բաղդութիւն ու աղմուկ, ո՞ր մէկին հասնիս: Բաղդութիւնը փոթորիկի պէս դուրս կը թափէր կառաւարէն՝ սարսափելիօրէն խնդելով քարափը: Բարեբախտաբար լսեց աղջկան ձայնը, որ կը կանչէր՝ «Քա՛նկ, քա՛նկ, հոս եմ»: Երբ տեսիլքը ցնդեցաւ պարապ կայարանի միջոցին մէջ, Գարեգին դողաց: Անոր աչքերը հանդիպած էին խոթոտ նայուածքով կնոջ մը դէմքին: Գեղակապմ կ'ին մըն էր, սեղմուած կապոյտ թայօրի մը մէջ, սպիտակ գլուզով, որ անոր թուիս դէմքին շատ կը

վայելէր: Գլուխը բարձր բռնած, հպարտ, շրջակայքին անտարբեր, կ'երթար-կուռ դար ջարտախին վրայ կ'թռտ քալուածքով մը, որ զինքը այնքան հեռակէտց կը դարձնէր: Արհամարհոտ չէր, միայն վերէն կը նայէր իր շուրջը-րոյրին վրայ: Գարեգին, յափտակուած, կը նայէր, կը դիտէր անոր սքանչելի մանաւանդ, փարթամ կուրծքը, անշուար դէմքին եւ թաւ, սեւ յօնքերուն տակ նուազկոտ աչքերը: Տեսաւ, որ ուրիշներ ալ ըզմանքով կը հետաքրքրուէին անով, նոյնիսկ կիներ, որոնք զայն իրենց նայուածքներուն ցանցին մէջ կ'առնէին, մինչդեռ ինքը անուշադիր, հեռակայ, կը շարունակէր ման գալ կըտաւոր շարժումներով:

Մէքենարար քաղեց կնոջ քայլերուն վրայէն, թաղելով նայուածքը ա-նոր նայուածքին մէջ, ամէն անգամ, որ կը հանդիպէին ետդարձին: Կնոջ բարկ նայուածքը չէր խռովեր զինքը՝ կատարելուպէս հողեզմայլ վիճակի մէջ ըլլալով: Հետաքրքրութիւնը ներքին խայտանք մը կու տար իրեն եւ կիներ՝ զգալով զայն, սուր ակնարկով մը կը փոխադարձէր, առանց սակայն որեւէ զիծ մը շարժելու դէմքին վրայ: Նայուածքներու այս խաչաձեւման վրայ էին, երբ բարձրախօսը, երկրորդ անգամ ըլլալով, պրտաց.

— Այլո՛, ալլո՛, Նիսի դնացքը ժամ մը եւս պիտի ուշանայ:

— Ի՞նչ, — աղաղակեց Գարեգին ինքզինքէն դուրս ելած, — Ի՞նչ բռաւ: Բայց որովհետեւ կնոջմէն դատ ուրիշ մէկը չկար քովը, Գարեգին խօս-քը անոր ուղղած էր եւ կիներ քարէ հանդարտութեամբ մը պատասխանեց.

— Գնացք ժամ մը եւս պիտի ուշանայ:

— Ըլլալիք բան չէ, — բարկացաւ Սեւիկիան, — երկու ժամ յադա-պում, մեթրոն դուրսեցաւ, ժամ մը քալելով տուն, յոգնած աղջիկս, սոյո, տիկին, աղջիկս Նիսին կու գայ, արձակուրդի դոցած էր, բայց առանց մեթ-րոյի, տիկին, թաքսիներն ալ քիչ են:

— Կարեւորութիւն չունի, պարոն, չ'արժէր ջիղերը յոգնեցնել ոտոր համար: Կը կարծէ՞ք, թէ դնացքը աւելի շուտ պիտի գայ, եթէ բարկանաք: Սիսին օր կը պատահի, չկայ օր մը, որ շողեկառքը աստիճանի հասնի: Կամուրջ-ներ կան փլած եւ շողեմեքներնքը մաշած են պատերազմէն:

— Բայց, տիկին...

Ձկնցաւ շարունակել, խօսքը բերանը մնաց, անոր համար, որ կիներ զը-ւարթ հեզանք մը ունեցաւ:

— Զարմանալի էք, — կ'ըսէր ան, — դուք՝ այրերդ, երեխաներ էք, միշտ պէտք ունիք մօր մը ներկայութեան, այսինքն՝ կնոջ մը, միեւնոյնն է, ձեր հոգիին խաղաղութիւնը զանելու համար:

Գարեգին խօսք չգտաւ պատասխանելու: Բոլորովին նորութիւն մըն էր իրեն համար մտածումի այդ կալուածը: Անձանօթուհիին թուի դէմքը զար-մանալի գեղեցկութիւն մը կը օտանար, քանի կը խօսէր: Անմեղութեան պէս թոյն մը կար անոր ձայնին մէջ: Սեւ աչքերուն նայուածքը խորհրդաւոր երե-ւոյթ մը կու տար սուր զիմաստութիւն ու բարեկազմ, սլացիկ հասակը, բաւ ձեւուած թայտօրին մէջ աւելի թպրտուն ձուկի կը նմանէր:

Հիմա նստած ձեռնասայլի մը վրայ, որ քարափին մէկ անկիւնը կը սպասէր դնացքին գալուն եւ կզակը կոթնեցուցած դատակին Փրանսուհին կը դիտէր հայ դերձակը պաղ՝ այլ հետաքրքրի անտարբերութեամբ մը: Միշտ ոտքի, Գարեգին նայեցաւ անոր: Կնոջ դէմքին վրայ ո՛չ մէկ զիծ կը շարժէր, մինչ իր նայուածքը անայլայլ՝ դեռ կը շարունակէր պնդել անոր աչքերուն դիմ: Այնքան մանկական բան մը ունէր անոնց արտայայտու-թիւնը, որ քիչ-քիչ ցուակցական շեշտ մը արթնցուց կնոջ երեսին վրայ: Գա-

բնդին չէր հեռանար, կեցեր էր հոն, կնոջ առջեւը, եւ կը նայէր առանց կշտանալու, իսկ կինը հայեացքը կ'ուղղէր հեռուոր կէտի մը իրբեւ թէ մարդը հոն, իր առջեւը չըլլար: Երբ որակայն անգամ մըն ալ անոնց տկնարկնե-րը իրարու հանդիպեցան, Սեւեիւնան անտեղիտալի փափաք մը ունեցաւ խոսելու: Ոչինչ, եթէ նոյնիսկ իր խօսքերը անխմառ ըլլային:

— Դո՛ւք ալ մէկու մը կը սպասէք, — հարցուց վերջապէս:

— Օ՛հ, իմ նորութիւնն չէ, — պատասխանեց կինը, — իմ կեանքն է:

— Բայց ինչո՞ւ...

— Այսպէս, ճակատագիր: Երկու իրիկունը անգամ մը հոս եմ, ժամը տասը տասը անց հասնող շողեկառքին կը սպասեմ, ինչպէս դուք հիմա:

— Բայց ինչո՞ւ, — կրկնեց Գարեգին տնձկութեամբ:

— Ինչո՞ւ, ամուսինիս փափաքն է: Ամուսինս շողեկառքին մեքենա-վարն է, հետեւաբար մէկ գիշերը նիս կ'անցընէ, միւսը՝ հոս: Իր ըսածին նայելով՝ համբերութիւնը մինչեւ այս կայարանը կը դիմանայ եղեր: Ատոր համար ալ կը փափաքէ, որ վերադարձին հոս ըլլամ: Հիմա հասկցա՞ք:

Կինը հատիկ-հատիկ կ'արտասանէր բառերը, կարծէք տղայ մը եղած ըլլար իրեն հետ խօսողը:

— Հասկցայ, — ըսաւ Գարեգին:

— Կառքէն իջնելուն պէս թեւս կը մտնէ ու հանդարտ քայլերով տուն կ'երթանք, միշտ ոտքով, — շարունակեց կինը, որ չեա գիտեր՝ կը դուար-ճանա՞ր, թէ կը խօսէր, որպէսզի մարդը հեռանար: Տարօրինակ զգացում մը զամուսնի էր հոն: Միայն զնացքին ժամանումը կրնար զայն բամբել կնոջմէն, իսկ զնացքը չէր դար: Անուշ երազանք մը կար անոր հոգիին մէջ:

— Կ'երևի ձեր ամուսինը կը պաշտէ ձեզ, — ըսաւ ու միտքը ինկաւ Սաթիկի: Արդե՞ք ինքն ալ կը սիրէր շողեկառքի մեքենավարին պէս: Արդ-ե՞ք Սաթիկին ալ գինքը կը սիրէր, ինչպէ՞ս իրիկունները կայարանը անցը-նող սա կինը: Երկար հառաչ մը փրթաւ կուրծքէն. տխուր էր իր ընտանե-կան կեանքին պատկերը, որ այդ պահուն արագօրէն սահեցաւ երեւակայու-թեան ապիւնէն: Եւ հրաշալի սէր մը կը դուշուկուէր այս զոյգին մէջ, որ, գիշերանց, թեւ թեւ կ'երթար ամայի փողոցներէն, համբոյր տալով ու առ-նելով, մինչդեռ կինը, միշտ նստած սայլին վրայ, թեւերը կուրծքին՝ խա-շաճելուած, գառնօրէն կը հեզնէր:

— Ա՛հ, սէ՛ր, սէ՛ր, ատունք սուտ բաներ են, պարզապէս կեանքին պատրանքը, համ մը տալու համար ստեղծուած: Ամուսինիս համբերութիւ-նը ուղիորութիւն մըն է՝ կայարանէն տուն սրտին զեղումները պատմելու հա-մար: Տուն եկածին պէս անկողին կը նետուի ու կը թաղուի մեռելի քունի մը մէջ: Հետաքրքիր եմ ոսկայն գիտնալու, թէ արդեօք նո՞յն ձեւով կը վարուի նիսի կնոջը հետ ալ:

— Ինչո՞ւ, ի՞նչ դիտէք, որ կին մը ունի հոն:

— Գիտնալու պէտք չունիմ, — պատասխանեց կինը հաստատակամ չեւտով մը, — այս այսպէս է: Մարդը քանի՞ տեղ փոխէ, այնքան կին կ'ու-նենայ: Նոր տեղ մը հասա՞ւ, առտլին գործը կ'ըլլայ նախ կին մը ճարել ի-րեն: Այսպէս է, սիրելի պարոն, այրը չի կրնար ապրիլ առանց կնիկի, ինչ-պէս տղաքը՝ առանց մօր:

Լուռ մնաց Գարեգին: Բառեր կը փնտիկը կնոջ պատասխանելու հա-մար եւ չէր գտներ, աւելի ճիշդը՝ գտած բառերը կը փախէին, չէին բռնը-ւեր: Միայն բան մը կը կուսէր այդ խաղին մէջ՝ եւ կուսածն ալ տաքու-թիւն կու տար իրեն, որովհետեւ կը կարծէր, որ անուղղակի խօսքերով ան

կոչ կ'ընէր իրեն, մանաւանդ երբ կ'ինը յոգնած՝ ոտքերը դրաւ ձեռնասայլին անիւին վրայ, պարզելով Գարեգինի աչքերուն առջեւ իր ցանկալարոյց սըրունքները: Նոյն պահուն Սեւկիւլեան զգաց, որ իր հոգին գացեր-հեռացեր էր, քուրջի վերածուած մարմինը ձգելով իր հոգած տեղը: Կինը այս միամիտ մարդուն վրայ նետեց կողմնակի սուր նայուածք մը եւ հառաչելով աւելցուց.

— Ի՞նչ ընել, պէտք է հետզհետէ կեանքին:

Յանկարծ հոգին խուժումի մը պէս յայտնուեցաւ Գարեգինի մէջ՝ քստաթիւն ձեւին տակ, մեքենայ կնով համակերպութիւնը մէկ վայրկեանի համար զայն իր կնոջ տեղը առնելով, որովհետեւ անոր համակերպութիւնը նոյն ատեն արդեօք կ'ըլլար իր մտքին մէջ վխտացող բառերուն գութաւ հլլեալուն, երբ պիտի ուզէր նստիլ սայլին վրայ կնոջը քովի: Եւ այդ յորդոզ բառերով մխիթարել զայն: Եւ ահա կ'ինը իրեն հարց կու տար, օտարի մը պարզ հետաքրքրութեամբ, կոտորելով բնագիշտ պահուն ամբողջ անկողնելի հմայքը:

— Դուք ի՞նչ էք, — հարցուց:

— Ի՞նչ, — ըսաւ Գարեգին զննուելով:

— Ի՞նչ ազդութեան է քեզ:

— Ե՞ս, ազդութիւն չունիմ:

Եւ իսկայն զզջաց ըսածին վրայ: Հիմա ի՞նչ պիտի մտածէր կինը: Մարդ մը, որ ազդութիւն չունի: Շատ անգամ ուռաւ կ'ըսէր անունին հնչականութեանը համար: Գարեգին, որ Թրքորդքիի, Տուռաքիի պէս բան մըն էր: Հայեր՝ որ թուրքին այդպէս կ'ըսեն իրենց հայ ըլլալը ծածկելու համար, ինչպէս մեղք մը, մոլութիւն մը, ամօթալի հիւանդութիւն մը կը պահեն:

— Ինչպէ՞ս թէ ազդութիւն չունիք, — հարցուց կինը զարմանքով, — առանց ազդութեան մա՞րդ կ'ըլլայ:

— Գաղթական եմ, — պատասխանեց Սեւկիւլեան՝ անլուրի ձայնով մը:

— Հայ էք, — ըսաւ միւսը, առանց նշմարելու, որ դիմացինին այտեւրը կը կարծրէին ամօթէն, ինչպէս երբ տղայ մը յանցանքի վրայ կը բռնուի: Նեղուած էր Գարեգին: Հիմա նորէն պիտի ստիպուէր պատմել ջարդեալու, լիկումներու պատմութիւններ: Կինը պիտի տխրէր զթուրեամբ, աչքերը բացած յայտնէր եւ ինքը, աւելի խեղճ երեւոյլու ձգտում մը պիտի ունենար: Բարեբախտաբար կ'ինը վրայ բերաւ:

— Ես իթալիէ կողմը կը բնակիմ, մեր թաղը շատ հայեր կան, շարաւար աշխատող են:

Այս խօսքերը իմանալով՝ Գարեգին արթնցաւ իր թմբիրէն եւ գրեթէ Լրախտապարտ էր կնոջ, որ զինքը նեղ կացութենէն մը կը փրկէր: Դէմքը անգագաթ կ'արձակէր հիմա: Այո, հայերը աշխատասէր ժողովուրդ են: Հպարտ ատու, ինքն ալ աշխատանքով առաջ եկած մարդ էր: Փոխանակ ջարդերու պատմութիւն ընելու, պիտի ըսէր իր աշխատանքի հերոսի պատմութիւնը, եթէ այդ պահուն քարափին վրայ անսովոր շարժում մը տեղի ունեցած չ'ըլլար: Երգեկապը հեռուէն ուղղակի սուրալով կը հասնէր, կը մօտենար ծուխ ու մօխ հանելով: Սպասողներու բազմութիւնը խոնուած քարափին եզերքը ուրախ ճիւղեր կ'արձակէր: Երբ շոգեկապը հասաւ քարափին ծայրը, մէկէն դանդաղեցաւ ու եկաւ երկնցաւ, անշարժացած, քարափին ի վեր: Անմիջապէս ղենակները բացուեցան: Պատուհաններուն մէջ զլխու անտառներ կային եւ անոնց մէջէն ձեռք մը, որ Վարդուհիին ձեռքն էր, սուր կանչերով կը քանար Գարեգինին ուղարկութիւնը գրաւելու: Քափա, փափա, հոս եմ, կը կանչէր Վարդուհին հօրը, որ զլուրը վեր առած՝ ամբոխին մէջ

աղջիկը կը փնտռէր: Մեծ էր ժողովը: Ամէն մարդ ժխտող կը հրմշտէր, բայց աղմուկը սկսաւ նուազիլ, երբ բազմութիւնը քիչ-քիչ ելքի ուղղութեամբ հոսեցաւ: Գարեգին գրկեց աղջիկը: Յետոյ մէկ ձեռքով պալուսակը, միւսով աղջկանը ձեռքէն բռնած դուրս ելաւ:

Ըսել է, որ հետո չէր հոսկէ իրենց փողոցը, եթէ այսպէս կարելի է ըսել Փարիզի պէս մեծ քաղաքի մը համար, բայց անշուշտ բոլոր համեմատութիւնները յարգելով: Ձէ՛, կառք պիտի չտանէր, միտքը դրած էր. երբ կառք մը անցաւ քովէն, աղջիկը պոռաց՝ «հայրիկ, թաքսին»: Հայրիկը չանդրուողա՞ծաւ անգամ աղջկանը կանչին, որովհետեւ ինքն ալ ճիշդ այդ պահուն սկսած էր իր հաշիւները ընել եւ մտած էր անոնց ծոցը: «Մօ՛, — բրաւ, — ոյս ի՞նչ ճամբայ է եղեր, քալէ-քալէ՛ ճամբան չի հասնիր կոր»: Յղած տեղը կեցաւ, Վարդուհիին պալուսակը դեպի դուռ ու ձեռքերը իրարու հետ չփեց: Աղ ձեռքին մատներուն վրայէն ցաւի հետքը անհետացուց եւ այս անգամ բարձրաձայն ըսաւ ղէ՛մքը աղջկան կողմը դարձնելով՝ «Ասկէ Հիւսիսային կայարանը հրկար չէ, քալելով տասը վայրկեան կ'անէ: Քալելն ալ տղէկ բան է, արունքներուն եւ գիտներուն մկանները կը զարդանան»: Երբ զոյգստէ բառը լեզուին ծայրը հկաւ, չհասկցաւ, թէ ինչպէ՞ս բառը իրապէս հղաւ երկու ժամ առաջ Պառպէս մեթրոյին գլուխը կեցած կնոջ գիտքը, այո, ան էր, նոյն կինը, գիտքը քիչն տակ դրած իրեն կը նայէր՝ «կու դա՛ս հաբ-ցընելով: Մէկ ձեռքով չընդգետին ծայրը վերցուց, եւ բացաւ վարի մասը անբան ներքոյն, ինչպէս երբ կը բանան վարդապետի մետաքսէ վարագոյրը միւս կողմը երկարած հուրիին վրայ. քիչ մնաց պիտի պոռար՝ «Պաք, — հա-բը, — հոտած», երբ Վարդուհիին խոսքով ձայնը հասաւ ականջներուն, այս անգամ քիչ մը ջղախնայած, ինչպէս Սաթիկիլը ամուսինին հետ՝ տասըճիւղ տարեկան աղջիկն ալ մօր լեզուն ու զրգուռած ձայնը առած էր ընդհանրապէս, երբ հօրը հետ կը խօսէր: Երկուքն ալ Գարեգինը եթէ ոչ յետամնացի, զոնէ միամիտի տեղ առած էին: Դուրս չելլելով ու մարդու հետ չխօսելով, զաղափարներու փոխանակութիւն շունհետալով եւ անդադար առելին ծակէն մտնելով-ելլելով, միտքերը ինքզինքին հետ միայն փոխանակելով՝ դռնփակ աշխարհի մը մէջ կ'ապրէր: Եւ ինչ որ հոն ինքն, այլեւս գուրս գալ չէր գիտեր, ներսը կը մնար, ինքն իր վրայ դառնալով շարունակ, մինչեւ գլխապտոյտ: «Բող է հզեր, ամմա ի՞նչ բող», ըրաւ սրտնեղած եւ իրեն թուեցաւ, թէ Սաթիկիլին եզրակացութեան կը պատասխանէր: Կատքերու բանակ մը փրթաւ մէկէն լայն պողոտային վրայ խելագար ու զգուշի աղմուկ մը հա-նելով ճիշդ այն պահուն, երբ կարմիր լոյսը կանաչ հղաւ. իր ձայնը, որ այս անգամ մա՛նաւանդ գմայլանքով է, որ բարձրացուցած էր, կառքերու այդ արշաւին զալմաղալին մէջ բարեբախտաբար գնաց կորուսեցաւ: Վարդուհին անկէ բան մը չիմացաւ «մեղրի պէս մաղ ունէր, ամմա այդ պալտընները, միւսի պէս ճեղ-ճերմակ պալտներու»: Ի հարկէ, քանի ժամանակը կ'անց-նէր՝ ներքին աշխարհի պատկերները իրենց գեղեցկութեան կատարելութեան կը հասնէին, պատուական բաներ կ'ըլլային եւ ինչո՞ւ չէ՞ գեղեցկութիւնը տիրակալելով ջիղերուն գրգիռ տեղի կու տար իր ներսը լեցուող զարման-քին: Այնպէս որ՝ զերձակ Գարեգինը արունատաղէտ կը դառնար, եւ յան-կարծ որոշում տուաւ, այսպէս, մէկէն ի մէկ. մտքին մէկ ծակ ու ծուկին մէջ տարինելով պահուած բան մըն էր, որ դուրս կը բերէր: Առաջին ապ-շութին ունեցողը ինքը եղաւ. «Ձէ, մեղա՛յ, մեղա՛յ, անպայման դերձակի խանութ մը բանամ եւ անանկ հագուստ կարեմ յաճախողներու եւ յաճա-խարդուհիներու, որ քէյֆերին տեղը ըլլայ միշտ»: Այս խօսքին պատճա-

առ՜ով էր, որ ծնաւ կայսրանի սիրուն եւ լազուարդ զոսթիւմ-թայէօր հա-
զած ու իր ամուսինին պատրանաթափ սպասող կինը, որ հին բարեկամի մը
պէս սկսաւ կանչել՝ «Եկա՛ւք, եկա՛ւք»։ Պատճառ չկար, որ չգար։ Երբ ամէն
բան ուղեղին մէջ տեղի կ'ունենայ, գիւրդին է։ Եւ ալազիկ հասակով կինը մօ-
տեցաւ, միայն թէ երեսակայական քարոտախոտակի վրայ, մէկէն ի մէկ վըճ-
ռական շարժումով աւրուած պատկեր մը եղաւ ան եւ ձեռքը ձուլուեցաւ
Վարդուհիի ձեռքին մէջ։ «Հայրիկ, Պառպէս եկանք»։ «Եկանք» ըրաւ Գարե-
գին կապոյտ զոսթիւմով կնոջ, որ ի սիրութիւն իրեն՝ դէմքին վրայ ներո-
ղածիտ ժպիտ մը գետեղելով կունակէ իրեն դարձուց եւ հեռացաւ։ Բաւական
ստեն մեկնողին ետեւէն նայեցաւ աչքերը սեղմօրէն քթիկով, սա տարբե-
րութեամբ, որ նայուածքը, այսինքն՝ ներքին նայուածքը ուղղուած էր ներ-
քին աշխարհին։ «Ջարմանալի, — պոռաց Գարեգին, — ես բոլոր համեմա-
տութիւնները կորսնցուցեր եմ, աղջիկս, Հարաւային կայսրանը Հիւսիսային
կայսրանէն այսքան հեռու ըլլալը ծոցեր եմ»։ Վարդուհին հօրը այդ գար-
մանքէն նեղուած՝ բացապանչեց՝ «Փափա, — ըրաւ Վարդուհին ձայնին մէջ
կտորտուկ մը գնելով հակառակ իրեն, — ստեղծէ ծակէն դուրս ելած լուսին,
որ համեմատութիւններ պահես։ Կէս ժամէ ի վեր կը քայլենք կոր վալիքս ձեռ-
քով, պոռաւ։ Ոչ, հիմա մեթրօ առնելու պէտք պիտի չունենանք»։ Հոս, պուլ-
վարին վրայ եւ զոյմտի փողոցները գիշերային բազմութիւնը կը վխտար։
Հոս, այսինքն՝ պուլվար Պառպէս Թոլլընուաւ, մեթրոյին օդային ուղիին
տակ, ամբօթին հոսանքին եզերքը։ Կարծես Սէն գեորգի եղբորը ըլլային, պահ
մը կանգ առաւ եւ վճարար Գարեգին որոշեց։ «Ա՛յ կը բաւէ բանաստեղծի
պէս երազներուն ետեւէն վազել»։ Քիչ մը պիտի հանգչէին։ Պայուսակը պու-
տին դրաւ, ձեռքերը իրարու շփեց, բայց յանկարծ օդային մեթրոն ե-
կաւ, սարսափելի դողդօց հանելով։ Գարեգինը իր տեղէն խուսապահար ցատ-
կեց՝ «Sans blague!» պոռաց։ Հարկա՛ւ կատակ չէր։ ստիպուեցաւ փախչիլ,
հիմա նոր կառաչար մը պիտի գար, յետոյ՝ ուրիշ մը, միշտ այսպէս կարը-
տելով ժամանակն ու միջոցը։ Ճամբայ ելան պուլվարին դիմացի կողմը անց-
նելու համար, երբ գետնայարկ մեթրոյին մուտքին ասջեւ ահաւ ձեռքի
գոյն ունեցողէ կինը, որ կարծես գիտամբ ըրածի պէս, դէմքին վրայ անուշ
ժպիտ մը կը գծէր, ըսել ուզելով՝ «Նորէն դո՛ւն, օր մը պիտի դաս աշս սը-
բունքները լղելու»։ Նեղ պահու մըն էր, Վարդուհին արդէն դիմացը անցեր
էր, ինքը պիտի սպասէր յաջորդ կարմիր լոյսին։ Առժամաբար գնաց կորսե-
ւիլ խարտեալ կնոջ ծոցին մէջ, բարեբախտաբար կարմիր լոյսը բացուեցաւ
ցիցին գլուխը, ինք հասաւ Վարդուհիին, իր աղջկան, որ այդ պահուն, ան-
գիտակցաբար, ազատաբարի դեր խաղաց հօրը համար։ Գարեգին աղջկան
թեւը առաւ եւ քայլեց, բայց պուլվարին վրայ խոնուած բազմութեան մէջջէն
անկարելի էր արագ երթալ, եւ այդ էր, որ անցորդին լայնօրէն առիթ կու-
տար պըճըլ-պըճըլ նայելու բազմութեան քայլը դանդաղեցնող հանրային կի-
ներուն վրայ, որոնք մէկ նայուածքով կրնային քառասուն ժարդ ողտալ ի-
րենց աչքերուն ճառագայթներուն մէջ։ Պայուսակը ձեռքը եւ Վարդուհին թե-
ւին աակ՝ մաս առաջին կողմնակի փողոցը, որ աւելի բոցանոց մըն էր, ա-
մէն մէկ դուռի առջեւ ողկոյններով աղջիկներ կանգնած էին, որոնք միւթ
ծածող բերաններ ունէին կարծես, ամէն մէկ անցորդի համար կը կրկնէին
միեւնոյն բանը՝ «Կու դա՛ս»։ Բայց Գարեգինի իրապէս ճերթալընուն կամ զգա-
լուն մտածելէ աւելի, որովհետեւ անոնք խորհրդաւոր եւ անձանօթ բաներ
էին, իրրեւ դերձուկ անոնց պզտիկ ու կարմիր ներկուած բերանները մատնոց-
նէրու կը նմանցէր։ «Ա՛յլ ուր նայէ, — կ'ըսէր ինքներեն, — բերանը մատնոց-

ցի կը նմանի: Վարդուհի, աղջիկս, — կ'աւելցնէր, յանկարծ սրտնեղած, — աչքերդ դոցէ, մի' նայիր, այս ուրտեղները ինկանք: «Ի՞նչ ինկանք, — պատասխանեց Վարդուհին, որ հօրմէն աւելի վարժուած էր այս ամէնօրեայ տեսարանին, դպրոց դասցած-եկած ատենը, — արդէն եկանք, ահա մեր փողոցը, մեր խաղաղ փողոցը»: Փողոցը դարձան ու գտնուեցան քսանընթաց պատին առջեւ. փողոցը մարդ-մարդաւանջ չկար, լոյս ալ չկար, գոնէ այդպէս կը թուէր՝ բաղդատարար միւս լուսապայծառ փողոցին: «Ի՞նչ է, — ըրաւ, — լոյսը կտրեր են, քիչդ ծայրը տեսած չունիս», բայց երբ դուռը բացին, իր-րեւ պատսխան իր գանգատին՝ մատը դրաւ ելեկտրական կոճակին վրայ եւ լոյսը վառեցաւ: «Այս ուրտեղները մնացիք, — բացազանչեց Սաթենիկ, — աչքերս դրան վրայ մնացին, եկո՛ւր մէյ մը քեզի պազնեմ, աղջիկս, աս ինչ-քան կարօտցեր եմ, ա՛հ, ուտեմ աս թուշիկներդ: Նիսը քեզի լաւ եկեր է, արաբի պէս ալ տեւցեր ես: Եկուր կաթով սուրճ մը առ պատկէլէդ առաջ, բան մը կ'է՛ր: Գարեդին, դո՛ւն ալ եկուր, տաք բան մը առ, դուն թէ՞յ կ'ուզես»: «Ձէ, Սաթենիկ, ես յոգնած եմ, պիտի պտակիմ, վաղը ոռոտուն շաա դործ ունիմ, միայն թէ քեզի միտքս պիտի ըսեմ, վաղը երբ դուքս ելլես, Ծածմն-մածմնսի միջոցով խանութ մը գտիր ինծի, տեսնես թէ ի՞նչ ճոթիւմ եւ ի՞նչ ճոթիւմ-թայֆօր պիտի կարեմ»: Գարեգին անկողին մտաւ: Իրապէս յոգնած էր եւ անմիջապէս նետուեցաւ անկողինին վրայ, գլուխը առաւ թեւերուն մէջ, խարտեաչ կնոջ իրեն նայուածքին ընծայած ճեփ-ճերձակ գիտար իրրեւ բարձ ու քնացաւ, քնանալէն առաջ ստիպուեցաւ իրմէ անկախաբար իրեն պարտադրուող պարիկին բռնի կերպով գիմադրել:

Ձ. Ծ. ՈՐԲՈՒՆԻ

1947-1980, Փարիզ

Գ. Պ Ը Լ Տ Ե Ա Ն

Ա Պ Ա Ս Տ Ա Ն

... Մարոյին...

Գետինը որ զիտեմ անգտանելի

դէմքդ քար
այքդ քար բեկեալ
ուրկէ քարը խած կը նայի ծովուն
ծովուն որ աղերով կը կախուի թարթիչներէդ
հեռաւոր
աղօտ
ուշող իր շարժուն մկանստ թոյրերով թռիչքներով ձուկերու
եւ թոյներով մետաղի
պատռածքը ծովուն ճեղքի վերքի պէս ճակատիդ
երբ աղէտը խլեց քեզմէ ամէն յուշում
այքդ քար բեկեալ
փորուած դէմքին մէջ քարին

ան է հոն, ցած, ուր կը քնանաս կը հսկես, ուր մարմինդ կը գտնէ
իր ձեւը, տաք ու զով խորութիւնները անկողնին, սաւաններուն ծփանքը քեզ
ընդունող մինչ զլուսնդ կը կտրէ կատարները ալիքներու ճամբորդող անհու-
նապէս իրենք իրենց մէջ. կը բարձրանայ սեւ մօտեցող պանգուածին հեռա-
ցող, կայուն անմատչելիօրէն խիտ գիշերին անոր, որուն վրայ դնէիր զլուսնդ
ինչպէս ինկող բարձի վիհին, ան է հոն, ցած, քեզ կըող երկիրը քերթուածին,
նախկին, առաջին վայրը վայրերուն, գետինը ծայրագնաց գետնէն վար, ուր
կը խարսխուի ծանրութիւնդ անկեղծօրէն

բաղեղներու թաւ ճիւղարձակումներ ծածկող գմբէթող գրատող ցանցող կանգուածը քարային ուր դռնէն այրած խունկերուն խոնա-տութիւնը կը խորանայ կը սեւնայ

եւ յանկարծ լռութենէն անջատուող հոն միշտ ամկոփուած կրկնուած ու մըմնջող մենախօսութիւն մը իբրեւ որ կ'արեւի

կը բացուի ապառ ամբողջ բիւզանդիոնը բացարձակ գոյներուն կենդանի ողողող ռիթմօրէն յորդեցնող չափագրութիւնը պատերուն անտեղի անջրպետին մէջ

ոսկի փայլատակումն է ստոր-երկրեայ միւս արեւուն որ կ'ընէր այս վայրը բնակելի պարապ

ինչ որ կը փնտռէ կը խռամփի պատկերէն ուր ըլլար պարագրկելի պատ-կանէիը անոր

մինչ կը կենաւ սեմին ձեռնանիշ գացող ընտանի կրակին անմատչելի

վայրը թերեւս օ վայրաբնակ սահմանը տրուող անսահմա-նելիին

Պորոս անցք ու ելք ու բացուածք ընդունելու ինչ որ կու գայ, նաեւ օրօրուող, որորներ եւ ճերմակի տօն մը մակագրուող պատուող ջուրերուն վրայ, այրուածքը բլուրներու իմաստին, առաջին աղէտներուն, մարմինը ընդունող մարմինը որ ցանկաց, ջը-րանցքը իրիկուան հոսումներուն ուրկէ համաստեղութիւններ պիտի մտնեն, քերթուածը թարգմանութիւնն է դուրսին, խուժումը դուրսին անունէն մինչեւ սկիւբը մինչեւ ծագումը իրմէ ու ինձմէ սկսող դէպի նախ քան ծագում

հանքն է ան հասարակ տեղիքը Ատտիկէի կամ Պարոսի մարմարին, արձաններ որոնց պարապ աչքին մէջ շնչունցաւ մարդը գութան վարող դէմէն, ապառաժը քերծուած, փորուած, քերթուած շերտաւորումներէն, կոտորող ինչպէս կաղ հռետորական հաւաքաբանութիւնները Արիստոտելի Topikէին, մացառներ որ կը ծածկեն խորութիւնը թափած ու ջէկ հո-ղին, բղջախոհական ձեռք մթին օ Ափրոտիթէ օ Մարիամ սրբաժպիտ, առա-

կող դիմազնութեամբ, կը կրէի երկնեցի քոյոր խոյակները երազող սլացքը սիւներուն, էի մայր արգաւանդ եւ եմ մնացող անուն, ամէն տեղ անուն է միայն, երեսակայական, լուսանկարին տակ փոխադրեալ ձորն է ան բոլոր հոմանիշներովը աղբին, վայրարկու, քակոր, շամփին, կճիւր, կտես, փշկու, կղկղանք, կոյի գոյութիւն, սրբան, սահման, որ կը մատնեն անգիտակից ոչ մէկ նախասիրութիւն, ինչ որ կ'անջատուի քեզմէ, կը սրբացուի, հոն ուր կը հասնի կը պարպուի ուրկէ կը սկսի քաղաքա-կրթութիւնը քաղաքին, լեզուն, օ ծովահայեաց գերեզմանոցը կառքերուն բեռնատար պարապով, մետաղէ կակուղ լաբիւրինթոս անխնէրու սեւ արեւներով ծակերով, աղին ու ժանգին ու նախադասութեան կորուստին ուր կը փոխադրուին բոլոր փոխաբերութիւնները, կիրքը, դրամը, մարդը իբրեւ իրենց կեդրոնին, հանգոյցին, հետախօս մը կոտորած կը կախուի ընկալուչէն սպասող տիեզերագնաց հաղորդումներուն որ հնչեցնէ հառաչը պիւթիական, վարը կ'այրի անդադար կը ծխէ կոյտ մը անորոշ, ցրուելով ամսա-թերթերը պատկերներու շրջաբանութեան, հողի, բառի յօրանջ մը, կը նայի անդամահատ լուսարկը ինքնամուղ՝ աթենասեան խրոխտութեամբ, կը ճչայ հասարակաց սպասարկութեան բանոտրի սպաննող բախին տակ, կը կծկէ սրունքը փլատիթէ որուն առջեւ հնաբան աչքը հսկայ կը խոկայ իր խոհը ամենակալ, աչքը որ այստեղ կը գտնէ գիտցաւ հասարակ տեղիքը խօսքին անդրափոխեալ ի վայր, մօտակայքն է ան բերթուածին, անոր մտեր-մութիւնը անհիւրընկալ

Քարափին վրայ ուր իրիկնային ամբոխը կը տարբադադրուի շռայլօրէն գոյներու աղի աղմուկին կը նայիմ ծագող հեռաւոր մութի կէտին որ կ'աճի կ'ընդլայնի ու մէկ միափառ համայնագնաց կը շրջա-փակէ այբը նայող եւ քարափը կը լուծուի ջուրերուն երկնքին հետ կ'ըլլայ վիհ եւ սեղանը կը հեռանայ ձեռքերէն չկայ եւ բերնիս մէջ խռնուած քառեր կը վխտան կ'ուտին կը ճնշեն կը հոսին կ'որ ջրապը-տոյտ ինքնահողով դարձող անդադար միեւնոյն ոլորացումը ինքնա-խոյս միշտ բխող պիտի պայթին մինչ խորէն կը մեծնայ մտաշարող կէտը մութին ներսէն աւելի ներսէն որ ըլլար առկախ լարծուն գաղափար, շուքը, պիտի առնէ պիս իր խոհուն բարձրաբիւր խորհուրդին բեւեռացը-նող եւ մարմինս չկայ եւ սարսափը եւ վախը եւ անձկութիւնը թափառող աղիքներու մէջ, խաղաղ ու թեթեւ ահաբերումը անոր անծիր որ կու գայ կը խցուի աչքիս մէջ եւ խոցումը վախին եւ մտացրումը վախին եւ յան-կաքժ ճեղքի մը մէջ լուսաւորող կուրցնող մտածումը մութը աղէտին անմտածելի կը պրկէ կը սպառէ պիս անպաշտպան պիտի ջնջէ պիս կրկին. ան է, նախկինը, ան, տիրող անճանաչ անտիրելի տանող պիս իր մէջ ու սիրող ու շտրուող, ան, ոչինչ, գրեթէ ոչինչ, աւետող ինչ ընդարձակուող անապատ ուր բնակէի ժխտուած, բայց պատկերէն անդին անընտել ընտանի մերժող ինծի իր բառը բիրտ որուն դէմ կ'ընկրկիմ կ'ընկրկէ կը պզտ-նէ կը պատռէ պիս կարծես ըլլայի բզկտուող աշխարհացրիւ մարմին

անմարմին, կը վազեմ կը փախչիմ տուն բանտարկուելու դրան ետին իդ
հետ իր մէջ իբրեւ մեռեալ ու կենդանի ու ապաստող դէմք, դրան ետին,
կը գրեմ ինչ որ կու գայ իբրեւ մութ իբրեւ զիշեր ու վիհը քարա-
փին իբրեւ ջնջումը աղ՛տ՛ն մտածումին աղէտ անտէր անսուգ եւ անսպաս

եւ ժողովուրդ անժողովեալ

եւ անոնք գլխուդ վրայ օդագնաց կրուած սկաւառակ կղզիներ
էին եփած բուրոդ խմորի անուշի երեսներ արեւելք մը մանրանկարչական
որ մանկութիւնդ կը տանէր փողոցներէն փութէն տուն երբ տուն էինք
կ'ապրէին թաւ թաթիւումը շաքարին կը բաշխուէին մաս առ մաս բաժա-
նումով բազմացող իբրեւ մի՛ սփռումը մարմնի հացին
կղզիները կը միանան ծովուն տակ

ցանկապատը որուն վրայէն ապակիի կոտորտանքներ շեղբեր կը
փայլատակեն, բոցեր սուր, վարագոյր սուրհներու սուրացող աչքերէդ

եւ հատող միջոցը մատներդ անօթի, պահող պարտէյր յուսախաբու-
թեան պէս

ուր թերեւս սերկեւիլը կ'եփի կարմիր որուն վրայ կը հակի
դէմքը կ'նոջ սեւազեատ կամ հոր մը նռնենիի շուքին կը խորանայ
մինչեւ բխումը խօսքին հեռացող անհունօրէն խուսափող խօսքին տակ
կամ գիրք մը բացուող կրակին դէմ

այքդ հոն անթուն յոգնած եւ միշտ
նայող տեսնող ոչինչ, հմայուած անծանօթով, կը գոցես, ինչ որ կու
գայ կրնար գալ, իրերը կը ծնին իրենց սփռումին մէջ, քեզմէ առաջ,
տեղեր, այլախոյս ունկնդիր կը նայիս սահմանին

նախաձայն երկիր օ
աննկարագրելի աննշան նախ քան հովը հովուն մէջ ի պահ դրեալ ա-
ւանդ որ անունը կը թաղէ, որ է երկ, երբեումը մատուցուող ծածկու-
մին, հոն ու հոս, հորիզոնային ու կրուած, երկնումդ

կը համբերես կը
սպասես նշաններուն յայտնարար ի սպաս անոր անտեսանելի որ ջլլար
թերեւս եկող գրաւող ու արգիլուած, քեզ առաջնորդող դէպի մանկու-

թիւնը քերթուածին միշտ անդին մատներուդ ցանկութենէն բերնէդ,
մօտ, քեզ յորդեցնող, որ կը մոռնաս

Երբեմն ապաստան մըն է քառանկիւն ներքին պարտէզով ուր
կարմիր խիսկուսը կը տոգորուի մութէն կը բացուի կ'աճի կը
մտնէ աստեղային ճիւղերուն

Կամ պատշգամը հովազնաց որուն դէմ
կը բարդուին կը խուծեն փոխակերպուող մակարդակումները ծովուն
պաշտպանուած

«Երկիրը որ մնաց ետին
այն է որ պիտի գայ»

մերթ հրուանդանն է մինակ
վիս յանձնող այլադարձ ափ մը հողի անյոյս ու ցամաք ու վայրա-
պար անապաստանումին

Նայող անդադար նայող անդին դէպի վայրը
առանց վայրի

հաւասարումը հոս քանդակումին ու քանդումին

մէջէն կը քալեն խուլ ու պիւրկ արմատները ամուլ նշենիններուն
Եւ դարափներէն խոպան հողային ծաղկումը զմբէթներուն կը մակար-
դակուի հոյակոն ուր լեռը կ'արտաբերուի որքան ջնջուի

զիտեմ ա-
նոնց մութին խոնարհութիւնը խոհուն յօրինող կարմիր տխրութիւնը
սաղաւարտաւոր սուրբերու պահող հեռուն մարած արեւ մը փեռել-
տումի

այբին մէջ հոն մօտիկ հոն ճերմակ ճառագայթող ճիւղ քարին

որքան յայտ-

նըւիմ այնքան կը ցրուիմ

քերթուածը որթին ասեղնագործող կը
կրծէ խարիսխը սիւնին պարածածկելով բարձրաթիչ խոյակը քերծը-
ւած

քանդումէն քանդակում հաւասար հոսանքը հողին

կը չափեմ անոր կալուածը լուսեան չորութիւնը բառերուն
աղի խաւերը խորութեան եւ շերտերը շուքի
կ'իշխեմ անոր այրած
շեշտաւոր դարաւիներուն սեպացեալ
զիտեմ վայն անսահման ու փախչող
իամպի անապետի ամպերէն
կը շրջափակէ պիտ վերարկուի պէս կրակէ
կը պոռայ բիւրերու կը խորացնէ անօթութիւնը իր չբացումին
կ'ար-
տաքսէ լեռը լոյսին դէմ — լայնալիճ ժայռ տեղահան եւ անշարժօրէն
խուժող օդին մէջ — կը նետէ պիտ վտանգին մտերմութեան
օ բաց-
ւածքը անբաւ ուր կը բնակիմ կը սիրեմ անկեալ ու բարձր փշրուած
ունկնդիր անոր չափին կշռոյթին առկախ եւ վայրին պիտ նախորդող
կ'ապրիմ կենարար անոր անապաստանումը էական

կը մեքենագրէր կղզին հեռացող ցամաքէն ափ մը ջուրով,
նարնջաստանները ազոտ, խնկող, սրճարաններու աղմուկը տարբա-
ղադրուող ձուկի համերուն մէջ, ամէն ծառ ու լուղորդ, քարափը,
մեկնող դեպիներու հրահաւ ու միթական արագութիւնը մետաղէ
պատող միջնադար, մեծքարային ճերմակը, ճերմակը տուններուն
թառած հոն բլուրին վրայ իբրեւ կատաղի յայտնատեսութիւն
ճգնումի հաճոյքին մէջ, որորագնաց, շաղակրատող յունարէնը ծի-
ծաղող եսքիլէսէն մինչեւ լողափ ու ծեփծեքուն, բարակ տան-
տիլուիին, խորշումած, հակած, ոսպ ստղկող, իրիկունը յասմիկ-
ներուն ծակծկուած մտնող ճաղերէն, խտացող, սղուող, սուրացող
մէկէն մատներէն, ձողիկներէն, քարացող, հողը կարմիր կամ այրած
հողը իր կայքերուն, չորութեան, մարմնին մէջ տարածուող
ջերմութեամբ, լուսեամբ կը բեւեռագրէր, ունկնդիր նոյն ձայ-
նին պինք կոշտը, նոյն ժպիտին, նոյն ու մէկ աղէտին, հոս ըլ-
լալու երանութեան, կղզին իբրեւ արջիպեղազոս խօսքին մէջ ուր
գտաւ գետինը, ցրուածքը աշխարհին, ապաստան — բայց այս բոլորը
կը թուին ջնջուած ըլլալ ընդմիջտ եթէ էր

Գ. ՊԸԼՏԵԱՆ

Մ. ԻՇԽԱՆ

— Նստե՛, հեղի քսելի՛ք ունիմ:
Պահ մը յոնց, հայեցաւ տշեքուս, հազաւց,
աղա շարունակեց:

— Լսեցի, որ հեղի ինչ-որ պաշտօն հն տը-
ւեր կուտակցութեան մէջ, ճիշդ է:

— Այո, պարոն Շանթ, դժբախտաբար միշտ
է, ես չէի սեղեր, հակառակ կամայիս պարտադրե-
ցնմ:

— Այդպէս կ'ըլլայ, տղա՛ս, ետևառակ կամ-
քիդ տեղի կու տաս: Եւ անգամ մը, որ տեղի տը-
ւիր՝ կը գլորիս-կ'նորթաս: Կեանքը ամառք է,
կեանքի ամառք կը ճգնէ հեղ, երբ չգիտեալս բնու-
թիւնը մամբայ... Դուք գրական շնորհներով օժ-
տուած տղայ ես, ի՞նչ գործ ունիս կուտակցական
պաշտօններու վրայ... ժողովներ, անվերջ ժա-
րովներ... մեզ չէ՛ ուժերուդ: Այդ գործերը ու-
րիշներ այ կրնան կատարել, հեղմէ շատ աւելի
լաւ եւ աւելի սիրով:

Մ. ԻՇԽԱՆ



ՅՈՒԾԵՐ Լ. ԺԱՆԹԻ ԿԵԱՆՔԷՆ

Դ. — ԴՐԱՊԱՆՏ ԵՒ ԱՆՀԱՒԱՏ

Լ. Շանթի մտածելակերպին վրայ Գէորգեան շեմարանի կրօնաբոյր
մթնոլորտը որեւէ ազդեցութիւն չէր կատարած: Հաւատքի ոչ մէկ կայծ կար
անոր հոգիին մէջ. ոչ իսկ յաւիտեանեան խորհուրդին եւ այս աշխարհի ի-
րականութեան միջեւ տատանող կասկածամտութիւն: Ամէն ինչ յստակ ու
պարզ էր իրեն համար: Գերմանական գիտութեան դրապաշտ դաւանանքով
սնած միտք՝ կը հաւատար միայն տարվիտեան յեղաշրջական տեսութեան:
Նիւթն է, որ աստիճանական հոլովոյթով կը վերածուի կեանքի եւ կեանքը՝
հոգի: Ուղեղն ու ջղային դրութիւնը մարդկային մարմնին մէջ հոգեկան ե-
րեւոյթներ կ'արտադրեն, ինչպէս երկկամուրջը՝ մէջ:

Երբ սկսաւ հոգեբանութիւն աւանդել մեզի, այնքան շեշտուած ձեւով
կը ներկայացնէր հոգի ըստած երեւոյթին բնախօսական հիմունքները, որ
ցնցումի ենթարկուեցաւ պատանի հոգիս: Եւ կը սիրէի հաւատքով անանիւ-
տատուածային ուժի մը ներկայութիւնը, տիեզերքի վերել, գեղեցիկ, ներ-
շնչող, զօտեպնդող, խաղաղեցնող ակնկալութիւն մըն էր: Օր մը, ընդվզած,
դասի տւարտին դացի քովը եւ հարց տուի իրեն.

— Ուրեմն, պարոն Շանթ, ըստ ձեր տեսութեան հոգիի անմահութիւն
դոյութիւն չունի՞, հանդերձեալ կեանք չկա՞յ...

— Ո՛ր, տղաս, ոչ, — պատասխանեց առանց վարանելու, — կրօնա-
կան ըմբռնումով երեւակայուած անմահութիւն դոյութիւն չունի, ամէն ինչ
հոս կը սկսի եւ հոս ալ կը վերջանայ: Նիւթէն եկածը նիւթին կը վերադառ-
նայ...

Սրեկի Շանթի այդ վայրկեանին նշմարեց նախաձեռն մէջ եւ դէմքին վրայ ուրուագծուող յուսահատութիւնը եւ մեղմ ժպիտով մը աւելցուց։

— Դէ՛, ի հարկէ, նիւթը անմահ է. հողը չի կորսուիր։ Մենք այդ հողին կը խառնուինք. հողին մէջ փռչի հատիկներու կը վերածուինք եւ կը զոյատեւենք իբրեւ նիւթ։ Եթէ նման անմահութիւն մը կը գոհացնէ քեզ՝ աւիկա իրականութիւն է...

— Ո՛ւ, — ըսի զառնութեամբ, — նման անմահութիւն մը մահ կը նշանակէ, վերջնական եւ ամբողջական մահ։

— Դէ՛, ի՞նչ ընենք, այդպէս է, այդպէս ենք ստեղծուած, աւելին ունենալ՝ մեր ձեռքը չէ։

Ըսաւ ու գնաց։ Եւ մնացի յուսահատութեան հետ միմիայն։ Ուրեմն հողին նիւթ էր եւ պիտի խառնուէր հողին, ուրեմն ամէն բան կը վերջանար այս աշխարհին մէջ... Ի՞նչ հիասթափեցնող եւ յուսաբեկիչ հաստատում 16-17 տարեկան տղու մը համար...

Լ. Շանթի նման նկատումներ չունէր. կը նախընտրէր բարձրաձայն յայտարարել իր համոզումը, իր դաւանած զապախարը, քան թէ ոսկեգծեղ զառնութիւն պատճառող երեւոյթ մը։

Վիճելի հարց է անշուշտ Շանթի ճանախելի ճշմարտութիւնը։ Դաւրեմէ ի վեր մարդիկ կը փիլիսոփայեն այդ հարցին մասին եւ հաւատքի ճամբով կը լուծեն կամ չեն լուծեր հանդերձայի խորհուրդը։ Կան ճշմարիտ հաւատացեալներ, կան բացարձակ անհաւատներ եւ կան տատնողներ։

Շանթի դիմագիծը յստակ էր։ Ն. Աղբալեան, Շանթի գործակիցը, տատնողներու դասուն կը պոսկանէր։ Գէորգեան ձեռնարանի դրոմը կար վրան որոշ չափով։ Անուագն կը սիրէր եկեղեցւոյ խունկն ու ժողով, շարականներն ու աւանդական սովորութիւնները։ Աղբալեանի համար թերեւս եկեղեցին ազգային տուն էր, մշակոյթ, մատենա եւ սրբազան մատենադրութիւն, բայց նոյն ատեն հոգեկան ուղիւմի խորան մը կը ներկայացնէր։

Շանթ կարծես մերկացած էր այդ բոլոր խորհուրդներէն, կրօնաւունջ ամէն տեսակի զգացումներէ։ Զեմ կրնար ըսել, թէ մասնաւոր հակակրօնք ունէր կրօնականներուն հանդէպ. սակայն համակրանք ալ չունէր։ Իրեն համար մարդն էր արժէքը, աշխարհական ըլլալ թէ կրօնական, իսկական մարդը աշխատէ՝ ինչպէս ինք կ'ըմբռնէր, իր մտաւոր բարձրութեամբ, հոգեկան հարստութիւնով եւ նկարագրի առաքինութիւններով։ Սքեմը, շքանշանները, սլաշտանական հանգիստաւոր տարազները ոչ մէկ բան կ'աւելցնէին մարդու արժանիքին վրայ։

Կրօնական ըմբռնումով Շանթ անհաւատ մըն էր որոշապէս։ Ո՛ւ Աստուծոյ կը հուստար, ո՛չ երկինքի, ոչ ալ անոր խոստումներուն։ Բայց Շանթի անհաւատութիւնը զինք չէր առաջնորդած կեանքի անհիթելիքի հաղափարին, կամ մարդու ոչնչութեան յուսահատեցնող ըմբռնութիւն։ Ընդհակառակն, հողին լեցուն էր կեանքի գեղեցկութեան սիրով եւ մարդ արտաբան ըմբռնութիւն հաւատքով։ Առանց կրօնի ինչպէ՞ս կըցած էր լեցունել իր ներաշխարհը ինքնաբաւ այս հաւատքով, որ աշխարհային ըլլալով հանգրժ, նուազ զօրաւոր չէր։ Մարդը տիեզերքի կեդրոն, տիեզերքի բարձրագոյն ստեղծագործութիւն — ահա՛ Շանթի ըմբռնումը։ Որով՝ ամէն մարդ պէտք է ջանայ արժանի ըլլալ իր կոչումին ու բարձրութեան, սիրելով պեղեցիկն ու ճշմարիտը։ Այս ճիշդին համար պէտք չունի աստուածներու օժանդակութեան։ Անոնք տկարներու համար են եւ տկարներու ստեղծած խոսքերը։ Զօրաւոր մարդը, իսկական մարդը ինքզինք կը կերտէ ու կը կատար-

բեկագործ է աստիճանական վերելքով: Ինք բնութիւն ծնունդ եւ բնութիւնը զինք ստեղծագործող գերագոյն զօրութիւն:

Այնքան կտրուկ ու վճռական էր Շանթի իր այս կեցութեան մէջ, որ աստիճան իսկ օրէն ձեւաբանը գրաւ ամբողջութեամբ լայնի՛ք դաստիարակութեան հիմքերու վրայ: Այնպէս որ մեր ծնողներէն շատեր զժգոհ էին անշուշտ այս զանաւորութեան եւ աղօթագրութեան հաստատութեան որոշեցրած ուղղութեան, բայց կը բախէին Լ. Շանթի անդրաւելի կեցութեան:

Ն. Աղբալեան կ'աշխատէր մեղմ մեղմ հակազդել. — «Ախր, Լեւոն, չի լինի. հայ քրիստոնէայի դասակներ են սրանք. պէտք է մի քիչ ծածոթանան հայաց եկեղեցւոյ կարգերէ հետ»: Աղբալեանի այս պնդումներուն վրայ էր, որ ի վերջոյ Շանթ թոյլ տուաւ, որ Միջինքին վերի դասարանի աշակերտները եկեղեցի առաջնորդուին՝ Արեւագալի շարականները լսելու:

Յատկանշական դէպք մը, զոր չեմ մոռցած մինչեւ այսօր: Կիլիկիոյ Աթոռին նահապետը հանգիստացող Սահակ կաթողիկոս վախճանած էր. քաղաքի բոլոր հայ վարժարանները այս առթիւ փակուած էին ի յարգանս մեծ ննջեցեալի յիշատակին: Շանթ ձեւաբանը բաց կ'ուզէր պահել: Ուսուցիչներու խումբ մը տեւաբան մտաւ բողոքելու, Ն. Աղբալեանի գլխաւորութեամբ: Շանթ իր սովորական կտրուկ խօսքերով յայտարարեց. — «Ի՞նչ հարկ կայ զՎրացը փակելու, ինչո՞ւ գտները տուէն»: Աղբալեանի դէմքը խոթուած էր. — Բայց, ախր, Լեւոն, հայոց կաթողիկոսն է վախճանուել, պէտք է մասնակցել սուգին եւ երեսաների մէջ արթուն պահել աւանդական յարգանքի զգացումները:

Շանթ մտիկ չըբաւ: Աղբալեան գլխարկը գլուխը դրած մեկնեցաւ զբարձրէն ու զայս չըբաւ այդ օր:

Ահա տարբերութիւնը Գէորգեան ձեւաբանը աւարտած երկու մտաւորականներու, որոնք գործակից էին եւ արտակից ընկերներ:

Կը յիշեմ, Շանթի գործերուն նուիրումը դասախօսութիւն մը կազմակերպուած էր Համալսարանի կողմէ: Պիտի խօսէր Ն. Աղբալեան: Լ. Շանթ ներկայ էր անձնապէս: Բոլորս ալ լարուած հետաքրքրութեամբ կը սպասէինք, թէ անուանի քննադատը ի՞նչ պիտի բռնէ հռչակաւոր գրապէսի մասին:

Աղբալեան բեմ բարձրացաւ, կտոր մը թուղթը մեկնեց. իր սովորութիւնն էր դասախօսութեան յատկագիրը պատրաստել եւ արձանագրել ամփի մեծութեամբ թուղթի մը վրայ: Դասախօսութիւնը տեւեց աւելի քան ժամ մը: Աղբալեան վերջուէջ Շանթի կեանքին գլխաւոր փուլերը, անոր կրած ազդեցութիւնները իջմամբնի Գէորգեան ձեւաբանին, Գերմանիոյ համալսարանական շրջանակներէն եւ ի վերջոյ եզրակացուց:

— Լ. Շանթի գրականութեան ընթերցումը երիտասարդութեան համար հիասթափեցնող է: Բայց եւ այնպէս մեր երիտասարդութիւնը պէտք է տեսնի նրա միջոց:

Ի՞նչ ըսել կ'ուզէր Աղբալեան «հիասթափեցնող» որակականը գործածելով: Ինչո՞ւ այդպէս կը բնորոշէր Շանթի գրականութեան ոգին: Մեզմէ ոմանք չհասկցան պատճառը, ուրիշներ ընդվզեցան:

Այսօր կը խորհեմ, թէ Շանթի գրականութիւնը «հիասթափեցնող» կոչելով, Ն. Աղբալեան ուզեց ասուել լարաւոր շեշտել անոր տուն տուն ոգիին ներքին ճեղքուածքը՝ արտին եւ մտքին միջեւ:

Բայց աւելի յաւ է, որ մէջբերենք Ն. Աղբալեանի դասախօսութեան եզրակացութիւնը, այնպէս՝ ինչպէս սպուռեցաւ այդ օրերու մամուլին մէջ. —

«Լ. Շանթի միտքն ամէն ինչ նկատուել է ուժերի անիմալտ եւ անիմալ-

հուրդ խաղ․ սիրտն այդ խաղերի մէջ մօտ է գեղեցիկին։ Շանթի համար օւժն ինչ պատրաստ է եւ հիասթափում։ Կեանքն այդ վիճակների յաջորդական շարանն է։ Այս աշխարհն ունայն է եւ խաղ անհիման ուժերի, բայց լուսագոյն խաղն արուեստն է եւ լուսագոյն սէրը ստեղծագործ ազիների մտրմութիւնը, օրից ծորում է արուեստի գործը։

«Լինելով խստօրէն շեշտուած անձնականութիւն՝ նա ոչ թէ յարմարած է կեանքին, այլ կեանքին տուիքները յարմարած են իրան՝ իր անձնականութիւնը շեշտելու համար։

«Լ․ Շանթ մեծ մտաւարակն է, խորամիտ եւ խորհմատ։ Իր նիւթը ոչ թէ հայ կեանքն է, այլ մարդը հայի մէջ, հայի մարդկայինը կամ պարզապէս մարդկայինը։

«Լ․ Շանթի գործը հմայաբափ է անում խորամուկս քնքերցողին, ուղովհետեւ ներշնչումը չէ, որ իշխում է իմացականութեան վրայ, այլ պատմաաւիտիքի իմացութիւնն է, որ գումարաբաժան է ներշնչման ծաղիկները․ ուստի իր անձերը ուրաւագոյն են։ Հմայաբափ է ամուսն անու գիտութիւնը։ Բայց ոչ մէկ ուժ կարող է յաղթանարել կեանքին մղումին, որ գալիս է տիեզերքի խորքից եւ անցնում մեր միջով։ Պէտք է անցնել գիտութեան եւ Լ․ Շանթի երկերի բովից՝ աւելի ներուժ տալովու համար այս կեանքին։

Յոյց տալու համար, թէ ո՛ր աստիճան Շանթ հակում ունէր հոգեկան երևույթները բնախօսութեամբ բացատրելու, պատմեմ հետեւեալ զբոսադն ալ․—

Այն օրերուն, երբ աշակերտութեան թիւը սահմանափակ էր ձեմարանի մէջ, Լ․ Շանթ սովորութիւն ունէր միզմէ իւրաքանչիւրը տեղաբան կանչելու եւ իր ձեռքով յանձնելու վիճակացոյցները։ Տարին երկու անգամ — կիսամեային եւ տարեվերջին — սրտատրոփ կը սպասէինք, որ մեր տեսուչին սենեակը մանենք ու առնենք մեր նիշերը։ Այս առթիւ Լ․ Շանթ 5-6 վայրկեան մեզ կը պահէր իր թովր, կը բանար վիճակացոյցը եւ կը խօսէր մեր աշխատանքի արդիւնքներուն մասին, երբեմն իր զահուանկութիւնը յայտնելով, երբեմն դիտողութիւններ բնակով։ Քաջայերանքի իր խօսքը կը վերջացնէր զրեթէ միշտ նոյն յորդորով․— «Աշխատանք, աղած, աշխատանքը սուրբ է, աշխատանքով կարելի է յաղթել ամէն դժուարութեան»։

Այդ տարին (չեմ յիշեր թուականը) երբ ես ալ իմ կարգիս մտայ սենեակը, Շանթ բացաւ վիճակացոյցը, աչք մը նետեց նիշերուս վրայ եւ ըսաւ․ — Ինչո՞ւ նիշերդ նախկին փայլը չունին․ որոշ դասերու համար ստացած դաստականներդ նուազած են․․․

— Տրամադրութիւններս լաւ չեն, պարոն Շանթ։

— Տրամադրութիւն, — զարմացաւ «չին աստուածներսու հեղինակը, — տրամադրութիւնը կոպտած է առողջութեան հետ։ Ստամոքսդ եւ աղիքներդ լաւ կ'աշխատին»։

Երեսը նայեցայ զարմացած, մինչ ինք չարունակեց․

— Լեարդիդ վիճակը լա՞ւ է․ բժիշկին պացի՞ր․․․

— Առողջութիւնս լաւ է, պարոն Շանթ, հոգեկան վիճակս է, որ քիչ մը փոխուած է․․․

— Դէ՛, ի հարկէ, կ'ըմբռնեմ, երիտասարդ ես, կրիսս հոգեկան խըռովքներ ալ ունենալ։ Բայց երբ մարդ առողջ է՝ տրամադրութիւն ըսուածն ալ առողջ կը մնայ։

Այս էր Լ․ Շանթի «կենսափիլիսոփայութեան» հիմնական ըմբռնողը․

digitised by A.R.A.R.®

թիւեր: Հոգին նիւթ է եւ ամէն ինչ կախում ունի նիւթի ստացած ժիւնակէն:



Ոչ մէկուն համար գաղտնիք էր Լ. Շանթի կուսակցական բլլայը: Ո՞ր թուականին եւ ի՞նչ պարագաներու տակ ան դարձած էր Հ. Յ. Դաշնակցութեան անդամ՝ ծանօթ չէ ինծի: Երբ ուսանող էինք Պէյրութի Հայ Ծեմարանին՝ բոլորս ալ գիտէինք, թէ ան կը պատկանէր Դաշնակցութեան մեծ ընտանիքին, սակայն հաղուադիւտ ասիւթներու միայն կարելի էր զինք տեսնել ակումբին մէջ: Ժողովներուն չէր մասնակցեր իբրեւ «վեթերան ընկեր» մէկ կամ երկու անգամ պատահած է, որ նախագահէ Մայիս 28ի հանդէսներուն:

Լ. Շանթի մասին գրող հին սերունդի բոլոր վկաններն ալ կը հաստատեն, թէ ան կուսակցական բլլայով հանդերձ, որեւէ աստիճան չէ կազմած գործադիր մարմիններու: Այսպէս, օրինակ, Սիմոն Վրացեան իր «Անհիմն և Լուսինեայ» հատորին մէջ, յուշերը պատմելով Լ. Շանթի մասին, կը գրէ.

«Շանթը դաշնակցական էր, ինչպէս դաշնակցական էին Անարմանեանը, Զարգարեանը, Գանիկ Վարաժեանը, Սիւսանթոն եւ Երիշ մեծանունը հայ գրագէտներ: Իր խառնուածքով, սակայն, նա երբեք իսկում ցոյց չէր տուել կուսակցական գործօն կեանքում զեր կատարելութիւն: Գոնէ ինձ ծանօթ չէր միմիայն: Այդ պատճառով՝ մեծ եղաւ իմ գարնանը, երբ 1947 թ. Բնդահնուր Ժուղովում Շանթը ներկայացաւ իբրեւ «մարտնչող» դաշնակցական՝ արտասովոր եռանդով մասնակցելով կուսակցական բոլոր հարցերի քննարկման, արդէն ժողովական եւ արդէն նախագահ, երբեմն նայնիսկ աշխատելով իր համագործակցողները պարտադրել իր ընկերներին: Հակառակ իր լաւաբանացի տարիքին, նա րազատիկ աշխուժութիւն էր ցոյց տալիս՝ քննադատելու Զիլապահի գէպի ժողովական պարտականութիւնները»:

Կարելւոր ժողովի մը ընթացքին Շանթի ցուցաբերած եռանդն ու պարտաճանաչութիւնը չեն ժխտեր այն իրողութիւնը, թէ ընդհանրապէս կուսակցական գործիչի խառնուածք չունէր ան: Աւելի ճիշդ՝ առանց դործելու՝ կուսակցական, զաղափարի հաւատացեալ մնաց Շանթ իր ամբողջ կեանքի ընթացքին: Իննոնցմէ չէզու, որոնք անդրադարձաւ իրենց անցած-գացած կեանքին ակոսասանքով բռնած են. «Գրիչը չքողեց, որ մարտիկ դառնամ, սուրը չքողեց, որ գրող դառնամ» (Ն. Ողբայեան): Ո՛չ, մեր պատմութեան ամէնէն դժուարին ու ամէնէն մոռալ տարիներուն գրիչը չինկաւ Շանթի ձեռքէն: Դարձեալ Ս. Վրացեանն է, որ կը վկայէ, խօսելով Հայաստանի Հանրապետութեան վերջին ծանր օրերու մասին.

«Ենթանմի մընութեամբ այնպէս ծանրացաւ, որ ո՛չ միայն կոմունայի մասին նարի չէր մտածել, այլեւ իրար տեսնելը դժուարացաւ: Շանթը փակուեց իր սենեակում եւ այլեւս դուրսը չէր երեւում: Ի՞նչ էր անում նա մեռակ, ի՞նչ էր մտածում: Հետագային իմացայ, որ այդ օրերին էր աւարտել «Շրջաբայանքը»:

Պատճառների հարց, քննականաբար, որուն երբեք չգաւաճանեց:

Իբրեւ մանկավարժ ալ Շանթ ամբողջ հազիւ հակառակ էր, որ պատահին գիրքն ու ակումբով մէկ կողմ դրած՝ արտադպրոցական աշխատանքներով տարուի: Անհրաժեշտ կը գտնէր, որ ուսանողը ուսանողութիւն ընէ լրջօրէն, պաշար հաւաքէ, կազմուի մաքուր ու նկարագրով եւ այնուհետեւ միայն, եթէ կը փափաքէ, նկատելի հանրային կեանքի հոսանքին մէջ: Մաքուր ստալին հերթին, ապա ինչ, ապա կուսակցականը: Ձուտ մանկավարժական տեսակէտէ մղուած՝ Շանթ կը խորհէր, թէ առանց մարդ ըլլալու՝ կարելի չէ լաւ հայ եւ լաւ կուսակցական բլլայ: Իսկ լաւ մարդ ըլլալ իրեն

Համար կը նշանակէր նկարագիր կերտել, ազնիւ սկզբունքներ ձեռք բերել եւ միտք ու հոգի մշակել:

Երբ ձեւարանի վերջին դասարանի ուսանող էինք, մօտ 18-19 տարեկան երիտասարդներ, Շանթ կը շարունակէր տակաւին արգիլել մեզի տկուժ-րային ու ժողովական ամէն գործունէութիւն: Մեզի հասակակից այլ ուսանողներ անգամ էին Զաւարեան Ուսանողական Միութեան: Մենք՝ գիշերօթիկներս հակադէմիան տակ կը գտնուէինք, որով արտօնութիւն չունէինք ժողովի ելլելու: Ի հարկէ, նման պարագաներու արգելքը անտեսող «փախուսաները» անխուսափելի կը դառնային:

Շանթի ի դուրս գրած արգելքն ու յանդիմանութիւնները ի վերջոյ օրակարգի նիւթ դարձան կուսակցութեան ղեկավար մարմնի սեղանին վրայ եւ պատուիրակութիւն մը եկաւ «հաշիւ պահանջելու» ձեւարանի տնօրէնէն: Ինչո՞ւ բացուած էր այս հոստատութիւնը, ինչո՞ւ կ'ըլլային բազմապիսի գոհոգութիւններ կանգուն պահելու համար դայն:

— Մարդ եւ հայ մտաւորական պատրաստելու համար, — պնդած էր Շանթ:

— Մեզի գաղափարական ազգային պրօթիշներ պէտք են, — առարկած էին պատուիրակութեան անդամները:

Մենք այս վէճին մանրամասնութիւնները դուրսէ դուրս լսողաց էինք: Այն գիտեմ միայն, որ Շանթ տեղի տուաւ դուրսի ճնշումին տակ եւ արտօնեց, որ Շաքաթ իրիկունները երթանք «Զաւարեան»ի ժողովներուն:

Սկզբունքը ուրիշ է, կեանքը՝ ուրիշ: Եւ յաճախ յաղթողը կեանքը կ'ըլլայ, կեանքի օւժեղ հոսանքը: Տարիներու ընթացքին Շանթ ստիպուած էր եղած շատ բան զիջելու մանկավարժական իր սկզբունքներէն: Սակայն պայքարելով, դիմադրելով, շատերու հետ պէշ մարդ դառնալով:

Այսպէս, օրինակ, երբ ձեւարանը նոր հիմնուեցաւ, Շանթ կը խորհէր, թէ օրը հինգ դասապատճիւնէի բաւական է եւ դպրոցը կը փակէր ժամը մէկին: Երկու տարի հաջիւ դիմացաւ այս դրութիւնը, ծնողներու բողոքին առջեւ Շանթ ստիպուեցաւ տեղի տալ եւ դասաւանդութիւնները շարունակել մինչեւ իրիկուան ժամը 4ը:

Ձեւարանի կրթական ծրագիրը ամբողջապէս ֆրանսական պաշարովային յարմարեցնելու պահանջին դէմ նոյնպէս Շանթ պայքար մղեց երկար տարեկ:

— Ես այս դպրոցը պաշարօրէյալէ համար շեմ բացած - ով կ'ուղէ յաջողի, ով չի յաջողի՝ կը տիրանայ ձեւարանի վկայականին: Այս վարժարանը հիմնուած է հայ մտաւորական ուժեր պատրաստելու նպատակով, Հեւսեւարսը Ե՛ւ մէկ զիջում հայագիտական նիւթերէ: Պաշարօրէյան երբ նպատակակէտ դառնայ՝ ձեւարանը կը վերածուի սովորական թատրոնի մը...

Որքա՞ն վէճ ու տարակարծութիւն ստեղծած է այս հարցը մէկ կողմէ Շանթի եւ ծնողներու միջեւ, միւս կողմէ՝ մանկավարժական ժողովներու մէջ:

Այս հարցին մէջ ալ կեանքի հոսանքը յաղթանակեց՝ ի մեծ ցաւ ձեւարանի տնօրէնին, որ աստիճանաբար ստիպուած էր զիջում կատարելու ծնողներուն: Անեք կը պահանջէին պետական վկայականը, որպէսզի իրենց դուստրները համալսարան կարենան մտնել, երկրաշափ, քփէշի, դեղազործ կամ փաստաբան դառնալ:

Շանթ կրթական ամէն հարցի կը մօտենար նախ իրրեւ մտնկավարժ, սուպ իրրեւ ազատախոհ հայ մտաւորական: Կուսակցական մտահոգութիւնները քնաւ տեղ չունէին դպրոց վարելու իր եղանակին մէջ:

Կը յիշեմ, ձեմարանի մէջ կը պաշտօնավարէին ո՛չ միայն շէշոք, այլ լեւ՝ ուրիշ կուսակցութեանց պատկանող ուսուցիչներ։ Վերջինս վնաս ունի, կը բռնէ, որ իր պաշտօնը լաւ կը կատարէ», կը կրկնէր Շանթ առարկողներուն։ Պատահեցաւ, որ հակառակորդ կուսակցութեան պատկանող ուսուցիչ մը ի յայտ դալ իբրեւ տեղւոյն գերագոյն մարմնի գործօն անդամ։ Եղածը զայն թանկութիւն մը չէր անշուշտ, բայց անսովոր եւ շատ ակնբախ երեւոյթ՝ պաշտօնական շրջանակները խրտւեցնելու համար։ Իժգոհութիւն, բողոք եւ յիշեալ ուսուցիչը ձեմարանէն հեռացնելու պահանջ։

— Բայց ինչո՞ւ, — կը յամառէր Շանթ, — ես իր դաստաւանութեանէն գոհ եմ, իր ընթացքէն ալ դժգոհելու պատճառ մը չունիմ։

Գաղափարական միութեան, ներդաշնակ համագործակցութեան, ընտանեկան հարազատութեան անուանով կրկնուած պատճառաբանութիւնները յողթանակեցին եւ Շանթ անպոկեցաւ տեղի տալ։

Ա՛խ այս կեանքի պահանջը...

Շանթի ակզրուեցնելը չէին խորտակուեր, բայց կը նահանջէին երբեմն։

Շանթ կը հաւատար, որ ռզտակար մէկը զատնալու եւ մինչեւ իսկ աղցին լաւ ծառայելու համար, ամէն անձ հաւատարիմ պէտք է մնայ իր խառնուածքին ու կոչումին։ Այլապէս դուր կ'անցնին տարիները եւ մարդ կը դառնայ ռաճ մը (ձախողած մը), ինչպէս կ'ըսեն Փրանսացիք։

Երիտասարդ օկնակ ուսուցիչ էի ձեմարանի մէջ, ձեմարանը աւարտելէս ետք, երբ չեմ գիտեր ինչպէս եւ ինչ անհրաժեշտութեամբ կուսակցական-վարչական պաշտօն մը փաթեցին վզիս։ Արդէն իսկ հրատարակած էի «Տուներու նիւթը» բանաստեղծութիւններուս հատորը եւ կը շարունակէի նոր բաներ ալ գրել եւ տպել։

Երբեք չեմ մոռնար այդ առաւօտը. նոր մտած էի դպրոց եւ ազատ պահէս օգտուելով կ'աշխատէի ուսուցչարանին մէջ։ Յանկարծ յայտնուեցաւ Շանթ եւ ձեռքը ուսիս դնելով ըսաւ.

— Կ'աշխատի՞ս։

— Այո, պարոն Շանթ, տետրակ կը սրբագրեմ։

— Այս պահուս աղատ ես ուրեմն, եկուր սենեակս։

Անսովոր երեւոյթ էր այս հրահէրը։ Արդեօք դիտողութիւն մը ունէր ընելէ անփորձ ուսուցիչի իմ թերութիւններուս վերաբերեալ։ Անխորժ զգացումով մը մտայ սենեակը։

— Նստի՛, քնդի ըսելիք ունիմ։

Պահ մը լռեց, նայեցաւ աչքերուս, հազաց, սպա շարունակեց.

— Լսեցի, որ քնդի ինչ-որ պաշտօն են տուել կուսակցութեան մէջ, ճի՞շդ է։

— Այո, պարոն Շանթ, դժբախտաբար ճիշդ է, ես չէի ուզեր, հակառակ կամքիս պարտադրեցին։

— Այդպէս կ'ըլլայ, տղա՛ս, հակառակ կամքիդ տեղի կու տաս։ Եւ անգամ մը, որ տեղի տուիր՝ կը զլորիս-կ'երթաս, կեանքը անողոք է, կեանքի անիւր կը հզմէ քեզ, եթէ չգիտնաս ընտրել ճամբադ... Դուն գրական շնորհներով օժտուած տղայ ես, ի՞նչ գործ ունիս կուսակցական պաշտօններու վրայ... Ժողովներ, անխել ժողովներ... մեղք չէ՞ ուժերուդ։ Այդ գործերը ուրիշներ ալ կրնան կատարել, քեզմէ շատ աւելի լաւ եւ աւելի սիրով։

— Իրաւունք ունիք, պարոն Շանթ։

— Նայէ, — շարունակեց Շանթ, — իմ կեանքս քեզի օրինակ։ Այս-

քան տարուան կուսակցական եմ, ոչ մէկ ասեմ, ոչ մէկ մարմնի անդամ չեմ հղած: Կարծես ինծի ալ չե՞ն ատաղձարկած: Պիտի գիտնաս գիմադրել, պիտի գիտնաս ո՛չ ըսել: Տարիները կ'անցնին ու ետ չեն դառնար...

Դեռ ականջներու մէջ կը հնչեն Շանթի արտասանած այս բառերը: Հոգեւ կը վկայէր, թէ Շանթ իրականք ունի:

Բայց ուրկէ՞ ճարել իր երկաթեայ կամքը եւ ակզունքներու անտեղի-տալի ուժը:

Բանաստեղծ, վիպագիր եւ թատերագիր Շանթ բնական հետեւութեամբ մը պիտի կարծուի, թէ առաւելապէս սրտի եւ զգացումի մարդ պէտք է ըլլար նաեւ կեանքի մէջ: Այդպէս շէր սակայն՝ դոնէ ինքզինք այդպէս ցոյց չէր տար: Վերապահ եւ «կոնկուած», ոչ ոքի առջեւ սովորութիւն ունէր իր ներքին աշխարհը բանալու, զգացական զեղումներ ունենալով: Իր յարաբերութիւններու ընթացքին միշտ միտքն ու տրամաբանութիւնը եղած են տիրապետող: Ամբողջ քան տարի մենք զինք տեսած ենք անխռով, հաւատարմ-կշիռ եւ ինքնավստահ:

Մէկ անգամ միայն տեսած եմ Շանթի յուզումն ու արցունքը, այն ալ երբ իր կիներ՝ տիկին Զաւոն մահացաւ եւ յուղարկւաւորութիւնը կատարելէ ետք խուժրով վերադարձանք իր մեծ տղան՝ պարոն Սուրէնի բնակարանը: Զորեղ նկարագրի տէր Շանթի ջիւղերը թուլցած էին. այդ տկարութիւնը տեւեց պահ մը միայն, յետոյ իսկոյն գոտաւ իր ինքնութիւնը եւ դառնալով հար-ոին ըսաւ.

— Զեփիւտ, աղջիկս, այսուհետեւ ես ու ձեր տան անդամն եմ:

Անգամ մը, Ժանբօրէն ողբերգական այլ կացութեան մը առջեւ Շանթի ուժեղ կեցածքը մեզ բոլորս զարմացուց: Պատերազմի շրջանին էր, իր միջինեկ որդին՝ Վիգէնը նշանածին հետ զոհ դասեր էր Գերիինի ունեղ ում-րակոծումներուն: Լուր հասաւ, թէ մտաւորականի խմորով օժտուած համա-կրելի եւ արժէքաւոր այդ երիտասարդը ուղղակի փոշիացած էր ապաստա-նարանի մը մէջ, ռումբի հարուածին տակ: Ուսուցչական կազմը սահմակած էր. բայց կը խորհէինք Շանթի հակազդեցութեան, աւելի ճիշդ՝ անմխի-թաբ տառապանքի մասին: Ինչպէ՞ս պիտի տուար յատուցած տուրիքի տէր զրազէտը իր զուկի կորուստի ծանր վիշտին: Դպրոց պիտի դա՞ր, թէ պի-տի քաշուէր առանձնասենեակը երկար ատեն:

Լուրը տարածուելուն յաջորդ օրն իսկ Շանթ սովորականին պէս դուպ-րոց մտաւ անայլայլ, քաղաքավարութեամբ բարեկեց մեզ եւ քաշուեցաւ տեսարանի իր սենեակը:

Ուսուցիչներու խումբս խորհրդակցութեան նստանք ընդհանուր հակիչ տիկին Գոհար Յովհաննէսեանին հետ, որ ազնիւ սրտի տէր բարի կին մըն էր: Երթալի՞նք Շանթին ցաւակցութիւն յայտնելու, թէ ոչ. պատշա՞ճ էր, թէ անտեղի. մեր ներկայութեամբ եւ խօսքերով աւելի ծանրացուցած պի-տի չըլլալի՞նք Շանթի հայրական վիշտը:

Ի վերջոյ որոշեցինք մտնել տեսարան եւ մեր վշտակցութիւնը յայտ-նել իրեն: Տառամանով, քաշուելով, տիկին Գոհարի ատաղձարկութեամբ բախեցինք իր դռուը:

— Մտէ՛ք, — լուեցաւ ներսէն Շանթի հնչեղ ձայնը:

Մտանք եւ մասլ զէմքերով շարուեցանք պատին տակ. ոչ ոք կը հա-մարձակէր խօսք բանալ. բոլորիս աչքը յատած կը մնար տիկին Գոհարին վրայ, որ համարձակեցաւ քանի մը բառ թոթովել:

— Գիտէ՞ք, պարոն Շանթ, շա՛տ, շա՛տ ցաւեցանք պատահած անընդհատ զէպքին համար, չենք գիտեր ինչպէ՞ս յայտնենք մեր ցաւեցութիւնները։

— Այո՛, — ըսաւ Շանթ զուսպ շեշտով, — ցաւալի է. իսկապէս մեղք եղաւ Վիգէնին, խոստումնալից լաւ տղայ էր. ամբողջ ապագայ մը ունէր իր առջեւ...

Շանթ կը խօսէր վաղաժամ մահացող երիտասարդի մասին երբորդ պէժով եւ անպիսի անտարբերութեամբ, որ կարծես իր տղան չըլլար։ Ոչ մէկ կասկած, որ Շանթի հոգին ներսէն լուռ կը ժղկտար ու կ'արիւնէր. բայց ըստ իր սովորութեան՝ կը պահէր արտասովոր կտրով մը։ Հայր էր անշուշտ ու վստահ եմ՝ կը տառապէր հայրական վշտով, ասկայն անընկճելին ու մանտանդ իր ակարութիւնները ուրիշներու աչքին ծածկելու վարժուած մարդը կը մնար կանգուն։

Հիանալի, թէ ըմբոստանալ...

Մենք գինք միմիջարեւու տեղ ինք միմիջարեւ մեզ՝ խօսելով կեանքի ու մահուան մասին, պատերազմներու յառաջ բերած ահաւոր աղէտներու մասին ու եղբակացուց։

— Կեանքը կռիւ է, յարատեւ կռիւ. այսպէս է եղած միշտ եւ այսպէս է նաեւ այսօր։ Կեանքի բնական վիճակները ոչ թէ խաղաղութեան շրջաններն են, այլ՝ պատերազմի։ Յաղապարթեան կարճ տարիները ընդհատումն են կեանքի պայքարի բնական վիճակներուն։

Գուրաւր կանգ չըմած։ Ականջներուս մէջ կ'արժանանայէր Գոդ Վասիլի խօսքը. «Կեանքը իր փամբով, մտքը իր փամբով»։

Յաջորդ պահուն Շանթ դասարան մտաւ զսոստալով։

Շանթ խառնուածքով եւ ըմբռնումներով անհատապաշտ էր։ Պէտք չէ չփոթել անհատապաշտութիւնը եսականութեան հետ։ Համեմատ պայմաններու մէջ ապրող, աշխարհային վայելքներէ թուրովին հրաժարած գրչի այս աշխատաւորը երբեք իր ետին վայելքն ու փառաւորումը չփնտռեց։ Կեանքի հարցերուն վրայ նայելու եւ դանդաղ քաջատրեւելու իր կերպն էր անհատապաշտութիւնը։ Այսինքն՝ ամէն անհատ ինքզինք պիտի բարձրացնէ, պայքարելով կեանքի զփութութիւններուն դէմ։ Ձէր հաւատարմար մարդոց հաւատարմութեան զաղափարին։ Ահաւարակ բնութեան մէջ հաւատարմութիւն չէր գրտնէր։ Այս տեսակէտէն Շանթ հեռու էր ընկերավարական զաղափարաբանութեան դաւանանքէն։

Տէպրը, անկամը, անշնորհքը պիտի ճզմուի, պայքարողը, զօրաւորը, ընդհանրին պիտի յաղթանակէ եւ գոյութեւէ։ — ահա՛ հիմնական իր տեսակէտը այս աշխարհի հարցերու մասին։ Եւ ճիշդ այս տեսակէտէն ալ կը բերէր Շանթի անհատապաշտական համոզումը։

Ձեմ կրնար պնդել, թէ դուրս, կարեկցութիւնը եւ նման զգացումներ տնտանօթ էին իր հոգիին։ Սակայն Շանթ շունչը քրիստոնէական այն ոգին, որ սղորմածութիւն կը քարոզէ, աղքատին ու թշուառին օգնելուն մէջ կը տեսնէ մարդուս դերադոյն երջանկութիւնը։ Թեքեա Շանթի խառնուածքին տւելի լաւ պատշաճէր հետեւեալ ֆորմիլը. — «Դուսն քեզ օգնէ, որ Աստուած ալ քեզ օգնէ»։ Ամէն անհատ ինք պիտի բարձրանայ. եւ սրովհետեւ ազգն ու ընկերութիւնը անհատներու հաւաքականութիւն են, անհատի բարձրացումով կը բարձրանայ նաեւ ընկերութիւնը։

Տարօրինակ վճռականութեամբ մը Շանթ կը կարծէր ամէն խորհուրդ լուծած ըլլալ. համոզուած էր, թէ անյոյժ մնացածներն ալ կը լուծուին օր մը՝ բնութեան զաղտնիքներուն նուաճումով։ Պայծառ էր միտքը, յատակ՝

մտածողութիւնը, զոր գիտէր բանաձեւէլ նոյնքան անստուեր եւ յորդորութիւն լիզուով: Ճարտասան չէր՝ բեմական իմաստով, բայց անհրաժեշտ պարագային գիտէր խօսիլ եւ համոզել կուռ տրամաբանութեամբ:

Շանթ կը խորշէր ամէն կարգի անհաստատ, անորոշ, երկմիտ կամ բախտի խաղերուն ձգուած երեւոյթներէ: Իր խորհրդապաշտութիւնը (անվւղիւ) թատերախաղերուն կառոյցը եւ ախպարները բացատրելու սահմանում բառ է. կեանքի մէջ Շանթ ոչ թէ խորհրդապաշտ, այլ տեւաբար եղած է իրապաշտ եւ իրատես: Այս իրողութիւնը հաստատող բաւարար փաստ չէ թերեւ, սակայն Շանթը յատկանշող պարագայ մըն է նաեւ հետեւեալը. — երբ Քաղաքին վիճակահանութեան տոմսեր հրապարակելու համար անոնց հետ կապուած հարստանալու յոյսեր սկսան տեղայ երկինքէն, զրեթէ ամէն մարդ փորձուեցաւ պարբերաբար տոմս մը գնել: Մինչեւ իսկ Ն. Աղբալեան, որ կը զողար իր դահեկաններուն վրայ, երբեմն կը գնէր կէս տոմսակ մը.

— Ի՞նչ իմանաս, մէկ էլ տեսար յանկարծ զարկաւ մեծ պարգևը:

Շանթ աչ իսկ մէկ անգամ ունեցաւ այդ փորձութիւնը:

— Ես ամէն ամիս առաւ ռսկի կը շահիմ տոմսակ չղնելով, — կ'ըսէր Շանթ, իրեն յատուկ իրապաշտութեամբ եւ իր բարի փախուով զտրմացած իր նայէր Աղբալեանի մատներուն մէջ զողողացող գունազարդ թուղթի կըտորին:

Ջարմանալի հակասութիւններ պիտի տեսնէին Շանթի անմին վրայ բուր անոնք, որ զինք լաւ չէին ճանչնար: Գեղարուեստական գրականութեան նուիրուած մարդ, վէպերու հեղինակ՝ մեզի կը թելադրէր վէպ չկարդալ, այլ մեր բնթերցումներուն գլխաւոր նիւթ դարձնել գիտական գործեր. — պատմութիւն, բնախօսութիւն, հոգեբանութիւն, եւ այլն:

— Վէպ կարդալը աշխատել չի նշանակեր, վէպը իրրիւ վայելքի եւ փամփայտի ազդիւր՝ փախուստ է բուն աշխատանքէն: Ուրիշ բան է անշուշտ, երբ մէկը վէպ կը կարդայ զայն ուսումնասիրելու նպատակով. ա՛յ, ասիկա բարձրագոյն է եւ օգտակար:

Եղաւ ատեն մը, որ տարբեր հոսանքի պատկանող լիբանահայ գրողներ յաջողեցան քով քովի գալ եւ «Գրողներու միութիւն» հիմնել Պէյրութի մէջ: Միութեան մաս կազմող բոլոր անդամներու համար ալ երեւոյթը խանդավառիչ էր, բայց նպատակը անորոշ: Քով քովի գալ եւ խօսիլ. ա՛յս էր միութեան ունեցած միակ յատուկ հեռանկարը: Առաջին ժողովը պիտի դումարուէր, եթէ չեմ սխալիր, Հ.Մ.Բ.Մ.ի նախկին ակումբի սրահին մէջ: Բոլորս ալ կը փափաքէինք, որ Շանթ ներկայ ըլլար ժողովի բացումին. ուստի երեք հոգիներ պատուիրակութիւն մը գաղինք Շանթի մօտ եւ խնդրեցինք, որ իրրիւ հին սերունդի երեցագոյն ներկայացուցիչը դայ եւ նախագահէ գրողներու ժողովին:

Շանթ մտիկ րբաւ լուս, թեթեւ մը գլուխը շարժելով (Շանթի գլուխը ուսերուն վրայ թեթեւ տատանում մը ունէր ընդհանրապէս), ապա ըսաւ.

— Ի՞նչ ընելու համար կը դումարէք այս ժողովը:

— Գրողներու Միութիւն մը կ'ուզենք ստեղծել, — պատասխանեցինք եռանդով:

— Լա՛ւ, ինչո՞ւ պիտի գրադի այս միութիւնը, ինչո՞ւ պիտի լեցնէ իր աշխատանքները:

Այդ մասին շատ չէինք մտածած արդէն: Բացատրեցինք, որ այս միութիւնը անհրաժեշտութիւն մըն էր. զգալի բաց մը պիտի գոցէր մեր իրականութեան մէջ, գրողները քով քովի պիտի բերէր, եւ այլն:

— Լաւ բան է, — աւելցուց Շանթ, — եթէ պարզ գրոյցէ անդին

գործնական աշխատանքի պիտի լծուիք: Ա՛յ, օրինակ, ինչպէս մենք կ'ընէինք Յ. Թումանեանի վերնաասան մէջը. — ինքնազիր գրութեան բերել, կարգաւ սեղմ շրջանակի մը մէջ, կարծիքներու փոխանակութիւն ունենալ. ասիկա օգտակար գործ է: Մնացեալը՝ վարչութիւն, օրակարգ, վէճ՝ ձեր միութիւնն ալ կը վերածէ գոյութիւն ունեցող բաղմամբիւ ուրիշ միութիւններու պէս բանի մը:

Շանթ պազ չուր թափեց մեր խանդավառութեան վրայ եւ շներկայացաւ ժողովին: Յաջորդ օր, միութեան ստեղծումին մէջ յետին մտքեր տեսնող թերթեր ուրախութեամբ գրեցին:

— Մեծահուն զբաղէտ է. Շանթ ներկայ չեղաւ «Գրողներու միութիւն» հիմնել ուզող քանի մը Հոգիի ժողովին, որ ձախողանքի դատապարտուած ձեռնարկ է:

Ձեռնարկը չձախողեցաւ, թէեւ երկար կեանք ալ չունեցաւ: Շանթ իրաւունք ունէր: Նման միութիւններու կենսատու աւելը ստեղծագործական աշխատանքի հաղորդութիւնն է եւ քաջաշիւթանքը:

1955ին Շանթ հիւանդացաւ. Ամերիկայի շրջապտտութեն նոր էր վերադարձած աշխոյժ, առօրէ եւ լաւ տրամադրութեան մէջ: Օր մը զինք տեսայ զեղնած, տփույն. դանդաղ քայլերով կ'առաջանար գէպի տեսարան: Մեր ճանչցած Շանթը չէր. կարծես յանկարծ կորսնցուցած էր «յաւերժական եւ րիտաւարութիւնը»: Քանի մը օր ետք անկողին ինկաւ դեղնախտով: Բժիշկը յոռեանս արտաճանաչում կուտարեց եւ անհրաժեշտ գտաւ ութսունը անց եւ պողպատեայ ջիղերով այս մարդը գործողութեան ենթարկել տայ: Երբ Շանթին յայտնեցին գործողութեան անհրաժեշտութիւնը, առանց տատամսելու պատասխանեց.

— Որքան լուս, այնքան լուս. կամ այս կողմ, կամ այն կողմ. մէջ-անկը մնալ կարելի չէ:

Գործողութիւնը կատարուեցաւ եւ դժբախտաբար բժիշկի յոռետես կասկածները ճիշդ դուրս եկան. Շանթի ունեցածը մաղձապարկի խլիբէ էր, բայց ինք կը կարծէր, թէ դեղնախտին պատճառը մաղձի ճամբան փակող քարեր էին, որոնք հանուեցան, հետեւաբար պիտի ազնկնար ու ոտքի կանգնէր շուտով:

Ամէնէն իրատեսներն անգամ լաւատես կամ երազատես կը դառնան, երբ խնդիրը վերաբերի իրենց առողջութեան, վերապրելու կարելիութեան: Ի դուր չէ ըսուած՝ «մարդ յոյսով կ'ապրի», եւ այդ յոյսը, ծանր պարագաներու մոռնաւնդ, իր արեւակալութեան տակ կ'առնէ կեանքի ամէնէն մթին ուղիներն անգամ...

Շանթի մտքէն զգէշ բանն չէր անցնել. հիւանդանոցին մէջ արամադրութիւնները շատ լաւ էին եւ, տարօրինակ երեւոյթ, այցելուներու հետ կատակներ կ'ընէր:

— Կը տեսնէ՞ք, — բաւ օր մը, մահճակալին մէջ պտուկած, ցոյց տալով թեւի երակին անցուած սննդի ասեղը, — առիկա առայժմ իմ բռնաւն է...

Տուն դարձին իսկապէս ալ կապուելուի սկսաւ. խարուսիկ առողջութեան պատրանք մը, որ պիտի նահանջէր շուտով:

Վերջին երկու տարիներուն Շանթ հոգւով-արտով փարած էր ձեռնարանի մէջ նոր հիմնուած մանկապարտէզի դադափարին: Ուղղակի երջանիկ էր այդ նոր բաժինով. իր տարիներու երազն էր եղած հիմնել ձեռնարանին կից արեւար մանկապարտէզ մը եւ ճեմարանական սերունդը պատրաստել մանկապարտէզէն սկսեալ:

Շանթի այս երազը իրականութիւն դարձաւ գործակցութեամբ օրիորդի մը, որ կազմակերպական մասնաւոր կարողութիւններ ունէր եւ վարիչ-մանկապարտիզականութիւն ընածին յատկութիւն։ Օրիորդը ձեմարան եկած էր Միացեալ Նահանգներէն, քանի մը ուրիշ աղջիկներու հետ, ձեմարանի յարկին տակ հայերէն սորվելու։ Շանթ անոր վստահեցաւ հաստատութեան մանկապարտիզին կեանք տալու դժուարին գործը, եւ պէտք է ըսել, թէ օրիորդը պատուով իրագործեց իրեն վստահուած պաշտօնը։ Այնուհետեւ Շանթի եւ օրիորդին միջեւ զգալի դարձաւ յարաբերութեանց ջերմութիւն մը, որ բացայայտ էր ամէնուն համար։ Կարծես Շանթի վէպերէն կամ թատերախաղերէն մէկուն նիւթը կը կրկնուէր։— զապաքարի մը կերտումը՝ հիւսուած հոգեկան լարերու թրթռացումին հետ։

Շանթ ութսուն տարեկան մարդ էր արդէն (լեզուս առաջ չ'երթար «ծերունի» ըսելու), բայց յայտնօրէն հոգեկան վերակենդանացում մը կ'ապրէր։ Ամէն անգամ, որ խօսէր մանկապարտիզի մասին, կը զգայիր, որ բացառիկ խանդ ու ոգեւորութիւն կար իր բառերուն մէջ։

Ամբան արձակուրդին օրիորդը մեկնած էր Ամերիկա եւ խոստացած, որ դպրոցներու վերաբացումին կը վերադառնայ։

Երբ Շանթ գործողութենէն ետք տուն դնաց, ձեմարանը կարծեմ բացւած էր արդէն եւ օրիորդը տակուին չէր վերադարձած։

Կը յիշեմ հիւանդանոցի մէկ առաջին այցը Շանթին, իր բնակարանին մէջ։ Ժպիտով ընդունեց մեզ, գիշերազգեստով նստած բազկաթոռին եւ մինչեւ վերջ խօսեցաւ մանկապարտիզի մասին։

— Ի՞նչ պիտի ըլլայ այս շատ կարեւոր բաժնին վիճակը. մտահոգ եմ. վարիչ օրիորդը ուշացաւ, պիտի վերադառնա՞յ, թէ ոչ՝ վստահ չեմ։

Հարաւ միջամտեց եւ համոզիչ շեշտով ըսաւ։

— Կու գայ, հայրիկ, անպայման կու գայ, մի մտահոգութեք։

— Լաւ գործակիցներ էինք. լաւ կը հաղթանք ինձի եւ միասին հաղիւստք էինք հանած գործը... Հիմա այսպէս, մանկապարտիզը առանց վարիչի պիտի տուժէ, շատ պիտի տուժէ...

Այնուհետեւ զարմանալի պարզաբոլորութեամբ մը Շանթ խօսեցաւ օրիորդի արժանիքներուն մասին. խօսեցաւ սիրով ու ջերմութեամբ, ապա աւելցուց։

— Մեր այս գործակցութիւնը թատերախաղի մը աղուոր նիւթ կ'ընայ ըլլալ. այսպէս՝ առաջին արար՝ հանդիպում, ծրագրի պատրաստութիւն, զապաքարով յափշտակուած հոգիներու խանդավառութիւն։ Երկրորդ արար՝ աշխատանք եւ իրապարծում։ Երրորդ արար... է՛հ, ի՞նչ օգուտ, ա՛յ ուշ է, ա՛յ երբեք չի գրուիր այդ թատերախաղը...

Ժպիտ կար մեր դէմքերուն վրայ եւ թաքուն ցաւ՝ մեր հոգիներուն մէջ։

Անպիտան աղիւկը չէր եկած...

Երբ մէկը Ֆիդիլքապէս տկարանայ, աւելի կը քաղցրանայ կարծես, բուխ սիրտ կը դառնայ։

Հիւանդանոցի երկրորդ այցելութեանս Շանթի առողջական վիճակը արտաքինապէս լաւ էր կարծես, բայց ներքին քայքայումը սկսած էր։

— Ամառը կու գայ, շուտով գիւղ կը բարձրանամ, կը կազդուրուիմ. բնութիւնը ես միշտ շատ եմ սիրած, — բուռ Շանթ։

Իսկապէս ալ անհամբեր էր գիւղ բարձրանալու, ուրկէ ամէն տարի կը վերադառնար նոր եռանդով, երիտասարդացած։

Նոր էի լսոյ ընծայած «Հացի եւ լոյսի համար» վէպս. օրինակ մը նը—

ի բերքի իրեն: Հասարակ առաւ ձեռքերուն մէջ, ժպիտ մը գծագրուեցաւ դէմքին եւ սրտագին ջերմութեամբ բառաւ:

— Հարստացուցէ՛ք, հարստացուցէ՛ք մեր մշակոյթը. նոր սերունդը պէտք է շարունակէ մեկնողներուն զործը...: Եթէ կարենամ՝ ուրախութեամբ պիտի կարդամ...

Այդ օրն է, որ քիչ մը խօսեցանք իր գրականութեան մասին: Առաջին անգամ ըլլալով Շանթի շրջանացաւ: Աստուծոյ, թէ ինչպէս գրած է «Հիմնադրութեան» անդրադարձաւ թիֆլիսի եւ Պոլսոյ հայ գրական շարժումներուն, մեծ սիրով ողկողնեց Յովհ. Թումանեանի յիշատակը:

— Պարոն Շանթ, ձեր մասին գրուած քննադատութիւններն ալ կարդացած էք, — հարց տուի՝ օգտուելով առիթէն:

— Այո՛, — բառաւ, — մեծ մասը կարդացած եմ. խելօք բաներ գրուած կան. բայց կրնամ յայտնել, թէ քննադատներէն ոչ մէկը հասած է իմ հոգեկան աշխարհիս խելութեան եւ մտածումներուս ոլորտին: Գրող մը պէտք է՝ ազդուի քննադատներու ըսածներէն: Որքան մարդ՝ այնքան կարծիք: Գրողը պէտք է հաւատարիմ մնայ իր խելութեան եւ շարունակէ ստեղծագործել:

Մեր վերջին հանգիստուն էր. այլեւս յոռիայ Շանթը: Ինչպէս էր անկողին եւ օրէ օր կը մաշէր: Ճեմարանաւարտ Պարզեւր, որ իր զբօսներն գրաշարն էր եղած ու նոյն ատեն փորձերուն սրբազրիչը, ամէն օր քօփն էր եւ կու գար մեզի Շանթին լուրերը հաղորդելու: Անկողինին մէջ Շանթ ամէն ճիշդ թափած էր, որպէսզի աւարտէ մտնկալարժեքեան նուիրուած իր երկրորդ հատորը, որուն վերջին գլուխները չգրուեցան, այլ թելադրուեցան: Շանթ թելադրած էր եւ Պարզեւր գրի առած: Մինչեւ վերջին վայրկեանը Շանթ ուզած էր աշխատիլ, պայքարիլ, ստեղծել:

Օր մըն ալ Պարզեւր եկաւ եւ յայտնեց, թէ Շանթ Նարեկ էր պահանջուած:

— Հիմա, — աւելցուց ան, — ամէն օր քանի մը էջ Նարեկ կը կարդամ եւ ինք մեծ ուշադրութեամբ մտիկ կ'ընէ:

Հոգեփոխութիւն մը ունեցած էր արդեօք: Անեղբայրօրէն անհաւատ եւ կամակոր այդ անձը մահուան սեմին յանկարծ հաւատացեալ:

— Պարզեւր, աղաք, — բացագանչած էր Շանթ իրիկուն մը, — Նարեկը սխալ հասկցած են. Նարեկը աղօթագիրք չէ, այլ՝ Աստուծոյ հետ պայքարի ելած թուրք հոգիի մը աղաղակը: Լաւ կարդա՛ւ այդ էջը եւ տես, թէ ինչ կ'ընէ: Նարեկացին իր զայրոյթը կը պոռայ երկինքի երեսին, թէ ինչո՞ւ ամէն լաւ բան, անմահութիւն եւ իմաստութիւն, Արարիչը ինքը սեփականացուցած է եւ իրեն տուած միայն կաւէ փերուն գոյութիւն մը, մաքի աղօտ եւ անցաւոր ճրագ մը միայն:

Շանթ անհաւատ ապրկցաւ ու անհաւատ ալ մեռաւ, հակառակ վերջին օրերու Նարեկին:

Միակ բանը, որուն անմահութեան իսկապէս կը հաւատար, մարդուս զործն էր:

Մարդէն բան չի մնար, բայց իր զործը, եթէ արժէք մը ունի, կը մնայ...

Մ. ԻՇԽԱՆ

(Շար. 2 եւ վերջ)

ԸՆԴԵՐԿՐԵԱՅ ՏԱՌԱՊԱՆՔ

Կամզնած եմ հոս,
 ընդերկրեայ ռազիներով ցանցուած
 կայանին մէջ սա օտար,
 ուր հեռախոյս ամէն մէկ պահ
 կ'ըլլայ իմ մէջ հանգրտան մը բաժանման.
 ամէն զնացք գիտ կ'անջատէ իմ անձէս,
 ճշլովելով հեւքը ծուէն առ ծուէն՝
 տարաշխարհիկ երազներու ճայներուն...:

Ամէն զնացք կ'ոգեդինէ գիտ կրկին՝
 երջանկասոյլ իր դարձով
 եւ կը բերէ ժամանակի հետ անդարձ
 կարօտներու հեռանալու մեղեդին՝
 ողբազուրման արցունքներով կայլակուած:

Կամզնած եմ հոս,
 ընդերկրեայ տագնապներով ցանցուած
 հոծ կայանի մը ճման,
 ուր կը խուժեն մտածումիս յարածամ,
 զնացքներու պէս յարաշարժ՝
 համբանայտ խօսքեր մթին,
 հարցեր անլոյծ
 եւ անծանօթ յօրհնումով թախծերգուող՝
 հին-հին յոյզեր,
 եին բողբոջներ վշտասոյլ...:

Մագնիսական ցանցն եմ դարձած
 խռովներու քիւրախոյս.
 կեդրոնածից շունչն եմ դարձած
 սաղմնադրուող ըմբոստութեան մը թափուն,
 որոնց կանչին երկրասոյզ՝
 դեռ չէ ցայտած ո՛չ մէկ երկունք կենսագործ:

Գետաբերանն եմ դարձած
 տառապանքի բազմավտակ հեծներուն
 եւ ռիսկալ արեան ցաւոտ երակներուն,
 որոնց անգուսկ տարերքովը լիացած՝
 թռչ օր մետաքսիմ,
 լնդեղութիւմ մեարդ առ մեարդ,
 կեա՛նք, ծովերուդ անմիւթական հեշտութեան,
 digitised by A.R.A.R.@

էալքիւնն իմ տեղեւոյց՝
 քու էութեամբ ամռնելու ճշտումով,
 ամիրտուած իբրեւ հող,
 վրիժախառն իբրեւ սէր,
 զսպանակուած իբրեւ իդ...:

Շարժումներուն իմ քարացած
 ուժն եւ գործող.
 տեսիլներուն իմ մթամած
 լոյսն եւ ծիծղուն:
 Եւ, յամրացած երգ
 եւ անամաք վերք,
 երգի ու վերքի զգայնութեամբ ալիսառն՝
 անաչգարաց գոյավիճակ...:

Անքա յառած՝
 հողիդ, քարիդ,
 խոյանքներուդ քարեղէն.
 ուշքս յառած՝

ցողիդ, լոյսիդ,
 խոյակներուդ լուսեղէն
 եւ երգերուդ անբայտուր հմայքին՝
 կ'ուզեմ քացուիլ,
 Կեանք, ակումբի՛դ անհղահաս,
 արարելու հոգեծնունդն իմ խնդութեամբ՝
 տեղանքներուն անհուններով երաշակերտ...:

Կ'ուզեմ քացուիլ գրգռեցիդ՝
 միջօրէիս համբայրին պէս երաշուրթ-
 դառնալ քեզմով

համգրտան մը ծովափնեայ,
 ուր բնապաշտ ծառաւորս մէջ ճուղուիմ
 ընդդիմադէմ ճայնեմ համակ աշխարհի.
 ընդերկրեայ տաղանայներով ցանցուած՝
 ամէն անկէզ ընդզգում,
 ամէն անհաշտ մերաշխարհ,
 իբրեւ մոր տարր՝

իմացումիդ գոյակից
 եւ էատարր՝
 խորհուրդներուդ ճիշեմարոյր դաշմութեամբ...:

ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ



ԻՎԱԿԱՆԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Ս. Կ Ի Ր Ա Կ Ո Ս Ե Ա Ն

ԲԱՆԱՍՏԵՂՈՆԵՐՈՒ ԸՄԲՈՍՏ ՍԵՐՈՒՆԴԵ ԵՒ ԻՐ ԲԻՒՐԵՂԵԱՅ ՁԱՅՆԸ

Իրենց ազգային էութեան եւ գերիշխանութեան տեսականներէն ճամբայ ելած արարական նորակազմ կուսակցութիւններն ու ուսանողական եւ երիտասարդական խմբաւորումները, 1948ին, տեւականաւորէն իրենց զիրենց ղէմ յանդիման դառն պաղեստինեան ողբերգութեան եւ անկէ բխած խոր հարցադրումներուն պատասխան մը բերելու հրամայականին:

Քաղաքական, բնկերային, քաղաքակրթական եւ մշակութային մինչ այդ ախրող խախուտ կացութեանց եւ արժէքներուն սնանկացումը յայտարարող այս անակնկալ անկիւնադարձը, տուջին հերթին, իր բարերար անդրադարձը ունեցաւ դադափարարանական ժամանակակից ազնուքներէ սնանող մտաւորականներու եւ երիտասարդ բանաստեղծներու շրջանակներուն մօտ: Ողբերգութեան առաջացուցած խոր ցնցումը աւելի թափ տրւաւ մինչ այդ խմորուող գծագրութիւններուն եւ փնտրութեան, որոնք յանգեցան ազգայնական եւ բնկերպարական

առաջադրանքները փրկութեան միակ հրահարաւորութիւն բնդունող ընդհանուր կենցաւածքի մը որդեգրումին՝ նգիպտունէն մինչեւ իբրանան եւ Սուրիայէն մինչեւ Իրաք:

Մտատանջութեան, արժէքներու աւազընթաց անկումներու եւ կրքոտ պայքարներու այս նոր ժամանակաշրջանը, իր հերթին, նաեւ նոր թափ տուաւ դրական ու մշակութային հարցադրումներու, որոնց ենթահողը սկսած էին մշակել դաւաճակիւրէն սկսեալ հրապարակ իջած բառաստեղծական շարժումներն ու անհատ քերթողները(1):

Այս արագընթաց վերիվայրումներուն իբրեւ արդիւն՝ յիսունական թուականներու ուրունդը վերստին կեանք տրւաւ դարասկիզբին ընդհանրացած բնկերային եւ քաղաքական հարցեր արծարծող բանաստեղծութեան աւանդին, որուն յաջորդած էին ուժանթիւ եւ խորհրդավաշտ շարժումներուն նորարարական (անուշա իրենց ժամանակաշրջանին) աշխարհաստեղծները:

Եթէ մինչ այդ կատարուած փորձերը կը մտային հաստատել տրամաբանական բանաստեղծութեան դարձուրդացնելուն եւ զուտ բանաստեղծական բառապաշարի ըմբռնութիւն, Եզրիպոսի մէջ զբաւեւրուած քաղաքացիական եւ ընկերային ոգին (որ զխառն յատկանիշն էր մարքսեան եւ ազգայնական վարդապետութիւններու անդամադրուած երիտասարդ գրողներու ստեղծութիւններուն), իր խոր եւ ամբողջական դիմագիծը ստանալ սկսաւ Իրաքի մէջ, երբ քառասունական թուականներու վերջին տարիներուն հրապարակ իջան Պաղտատի Ազգ-Ուսուցչանոցին մէջ իրենց համալսարանական կրթութիւնը ստացող բանաստեղծներ:

Փաստօրէն, Ազգ-Ուսուցչանոցի ընդ-յատակէն խմորումներն ու ընկերվարական առաջադրանքները յաջողած էին ներգրաւել չքաւոր ընտանիքներէ եկած պատանաթափ ուսանողները: Միանկացած վարչական եւ պաշտօնական ողորդութեան վերջերուն միակ դարձանք աւրատական փոփոխութեան, այսինքն՝ պատկերացում յեղափոխութեան մէջ տեւող երիտասարդ բանաստեղծները անմիջապէս փարեցան քաղաքական եւ ընկերային բարեկարգումներու խոստումը կատարող մարքսեան վարդապետութեան:

Այսպէսով, սկզբնական շրջանին զուտ ճշտական սիրերգութիւններ մշակած իրաքցի երիտասարդ բանաստեղծները — Պատրո Շաքէր Սայեապ, Ազաբլ Ուահ-Հապ Պալեթի, Նազէ Մալաթի, Պու-լանտ Հալաթի, Շադլ Թաքա, Մահմուտ Պարիքան եւ ուրիշներ — սկսան մշակել քաղաքական եւ ընկերային առաջադրանքներէ թեւադրուած յանձնառու գրականութիւն մը, որուն դասական ճիւղին ներկայացուցիչը՝ Մուհամէտ Մահմուտ Ճաուհիրի, միաժամանակ կը հանդիսանար աւանդապաշտ բանաստեղծութեան կեդրոնական դէմքն ու տիրող վարչական գործիւն հակադրուող գանդուածներուն լոյսդիմադիր ձայնը:

Աւանդական կուրապարներով մշակ-

ւած քաղաքական բանաստեղծութեան դարձուրդ աւանդը եթէ հանդիսացաւ Սայեապ-Պալեթի-Մալաթի սերունդին հողեմտաւոր սնունդին առաջին աղբիւրը, միւս կողմէ՝ անոնք իրենց դեղաբուսատական աւելորդ ստացան զիրենք կանխած նոր-տոմանթիքներու զգացական ոլորտներէն, ինչպէս նաեւ՝ անդլիսական փրթուրթեան մէջ, որ շուրջ մը ներմուծած ձոն Քիթցի, Եթիքի, Թ. Ս. Իլերթի եւ այլ բանաստեղծներու մշակած գրական նութենէն:

Հակառակ համամարդկային նիւթեր չլափելու իրենց հասարակաց մեկնակէտին եւ արարական քերթողութիւնը իր քորացած վիճակէն դուրս բերել նպատակաւոր նորարարական միացեալ ձգտումն էր, իրաքցի երիտասարդ բանաստեղծներու տեւողը (կամ դէժ կեդրոնական դէմքերը սերունդին) չյաջողեցաւ վերածուել միակուռ շարժումի մը, որուն հասարակաց ըմբռնումները իրենց բխեղացած տարազումը կը գտնեն գրական հանգանակի մը տողերուն:

Ճիշդ է, որ թէ՛ Սայեապ, թէ՛ Մալաթի, թէ՛ Պալեթի, թէ՛ Հալաթի կ'առաջադրէին բանաստեղծութեան լեզուին ալիստեղծութիւն, այսինքն՝ բանաստեղծական լեզուն մակրայնէրու եւ անականեբու, ճոռմարտութիւններու եւ քանքարաթաքոյց նախադասութիւններու տնտեղի կուտակումներէն ազատագրել եւ խօսակցական լեզուին պատմաստներով ջլրմացնելէ ետք առաջնորդել կենսունակ մակարդակի մը:

Ճիշդ է, որ բոլորն ալ կը խօսէին արարական բանաստեղծութեան դարձուրդ յանդադրելուն ողնաշարերը կենդանացին՝ ու հրամայականին մասին եւ ըստ աւանդ կ'անդէն իրենց առաջին քայլերը:

Ճիշդ է, որ իրենց մշակած կարգ մը համամարդկային նիւթերով անոնք ո՛չ միայն աւելի կը բացուէին կեանքի երեւոյթներուն, այլեւ հիմը կը դնէին բանաստեղծական այն ալիսարհահայեացքին, որ հետագային Ժանօթ դարձաւ ընդհանրական իրապաշտութիւն աստիճանում:

ձիւղ է նսեւ, որ աւելի ուշ, լիբանանցի եւ այլ երիտասարդ բանաստեղծներու հետ (Էռուէֆ Խալ, Ատոնիս, Մալի Հաուի, Ժապրա Իպրահիմ Ժապրա, եւ այլն), իրենց գործածած միեւնոյն խորհրդանշաններով՝ անոնք մասնակցեցան խորհրդապաշտութեան նոր բովանդակութիւն եւ հասկացողութիւն բերող շարժումին...

Այնուամենայնիւ, իրենց առաջին քայլերը դասական քնարերգութիւններով սկսած այս բանաստեղծներէն իւրաքանչեւը, հազիւ քանի մը տարի անցած, սկսաւ ընթանալ բոլորովին տարբեր ուղիէ մը՝ իր սեփական դիմագիծին յստակացման ընդմէջէն նոր բանաստեղծութեան հասնելու հեռանկարով:

Օրինակի համար, Նազէք Մալաֆէ բաւարարուեցաւ որոտական բանաստեղծութեան տաղաչափական օրէնքներուն չէլ կատարած իր փոքր բարեփոխութիւններով եւ հիմնովին հակադրուեցաւ խորքէն բխող եւ անոր սրտատրոփը հանդիսացող ազատ կըտոյթին: Այսպէսով, նոր բանաստեղծութեան մը մեկնող ճամբուն վրայ հազիւ քանի մը քայլ տաւ՝ Մալաֆէ կանգ առաւ կիսադասական լուծումին սեմին եւ իր քերթողական ուժերը սպառեց շարունակ ինքզինք կըրկնելով:

Իր կարգին, յանձնառու բանաստեղծութեան սեմին վրայ պաշտպաններէն հանդիսացող Ապտըլ Ուսահապ Պալաթի, դասական լեզուին քարացած սահմանները յաղթահարելէ եւ աւանդապաշտ կաղապարներէն ազատելուն ազատագրուելէ ետք, անձնատուր եղաւ յանձնառու գրականութիւն մշակելու իր խոր տենչին:

Այնուամենայնիւ, ժամանակակից բանաստեղծին առաջնահերթ պայմաններէն մէկը դադարաւորական յոտակ դիրքորոշումը նկատող այս անհանդարտ բանաստեղծը, Էլիւարի, Արակոնի, Ներուտայի, Հիլմէթի եւ նմանօրինակ քերթողներու քաղաքական քնարերգութեան ուղին որդեգրելով՝ իրաքան եւ տարական արդի բանաստեղծութեան հաշտոյն քաջաւ բանաստեղծութիւնը դադարաւորական զէն-

քի վերածող յանձնառու քերթողութեան ծանօթ հորիզոնները: Իր ընթերցողները դասակարգային դիտակցութեան հրաւիրող առհասարակ չոր, անաշտ եւ կարծր լեզուով մը գրուած այս բիրտ քերթուածները իրենց վերջին հանգրուանին, յաջողեցան հասնիլ քերթողական բերեղեայ խոսացումի մը, երբ Պալաթի փորձեց ընկերային կացութիւններէն բարձրանալ անոնց արդիւնքը հանդիսացող բնագոյնական ոլորտներու:

1970ի սեմին գրեւորուած այս նախնականները վերածուեցան իսկական աշխարհութեան մը, երբ ուղիղ քան աւերի յեղափոխութեան եւ ըմբոստութեան ի խնդիր մշակուող յանձնառու քերթուածներ ստորագրելէ ետք, Պալաթի ըսկրտաւ երդիլ քնարական եւ բնագոյնական զերմութեամբ յաղեցած թափանցիկ քերթուածներ:

«Սիրոյ երգեր» աշխարհի եօթը գումմերում վրայ» (1976) քերթողագրքը եւ անոր յաջորդած մնացեալ մասունքները՝ «Մափսն գիրքը», «Կրակի գողիմ իմ փնտրանքներում» եւ «Շիրազի լուսինը» անուն գործերը եկան աւելի եւս խորացնելու զազափարապաշտ սիրահարին հոգւոյն բնագոյնական հրէքողմանքը՝ մահուան եւ յաւերժութեան, լինելութեան եւ անէութեան միջեւ երկարող յաւաքոփոխ ալիքածումներուն կշռոյթով բռնուած:

«Շիրազի լուսինը» հատորէն թարգմանուած «Կը ծնիմ... եւ կ'ալիմ իմ սիրով» արձակ բանաստեղծութիւնը կրնայ հանդիսանալ լաւագոյն ապացոյցներէն մէկը դադարաւորական դիրքորոշման ու բնագոյնական սիրերգութեան բնական հաշտեցումով ձեռք բերուած տրդիւնքին: Աւելին, բանաստեղծի եսին եւ ալլին, այսինքն Լարային եւ, միւս կողմէ՝ ներկայութիւն - քաղաքայինութիւն եղափոխութիւններով դարգացող զայս կրկնակորիք քերթուածը» (2), իր երկնիւղ կառուցով եւ հոգեմիջակէ յիշողութիւն անցումներով, ստեղծագործ խօսքը բարձրացուց բանաստեղծութեան «հիմնական տեսիլներ»ուն, զետիմներ՝ արմն կը յիմն եր-

կուտ քեանց միացումէն եւ հակադիրնե-
րու յայտնագործումէն մէկ էութեան մէջ,
հնարաւոր բոլոր հակադրութիւնները կա-
րայիմ մէջ մարմնաւորելու եւ հակա-
դրումը ամբողջական եւ միութեամբ երեւ-
նական պայմանի վերածելով (3) :

✱

«Սայեապի քերթադութեամբ՝ այլա-
փոխման ամբողջական հանգրտան մը կը
սկսի արարական թանաւտեղծութեան
մէջ» (4) : Բանաստեղծ մը կը միաձուլուի
բանաստեղծութեան ճակատագրին հետ եւ
ինք կը դառնայ առանցքը իր թափանցիկ,
կենդանի եւ մշտաբար քերթողութեան :
Համայնավար, ազատական, ազգայ-
նական, յեղափոխական, անհատաւոր, հա-
ւատացեալ, ռաճանթիք, իրապաշտ, խոր-
հրդապաշտ, բնագոյնապաշտ, դասա-
կան, նորարար այս արտակարգ բանաս-
տեղծին գիրքումները նրբաւոր կու-
գան, կը հակիմ եւ կը պատմեն մէկ պատ-
մաքիւն — բանաստեղծիմ պատմութիւնը :
Եւ երբ մենք կը սկսիմք ըմտնելու
այս յայտնագործումին հետ՝ անակնկալի
կու գանք, երբ կը նկատենք, որ կը կար-
գանք ամբողջ ժամանակաշրջանի մը քա-
ղաքական պատմութիւնը (5) :

Պարզ նիւթերը ամենապարզ յղացե-
ներով մշակել սկսող Պատրը Շաքէր Սայ-
եապ անուկնկալօրէն կ'անցնի մէկէ աւելի
ժամանակէ՝ բազմաժանց-
ղակ բանաստեղծութեան հանգրտանը՝
շնորհիւ իր գիմացական եւ քերթողական
հարուստ խորքին :

«Հիմն անճիւղի» անուն հատորով ան
ինքզինք պարտադրեց յիսուական թուա-
կաններու երկրորդ կիսուն, եւ ամբողջու-
կան հաստատութեամբ՝ 1960-64 ժամանա-
կաշրջանին, երբ մահուան հետ պայքա-
րող հիւժախտաւոր բանաստեղծին կեանքի
ու գրականութիւնը լիացան անանձնական
իմաստութեամբ եւ քերթուն կեանքէ մը
բխած ու բազմաթիւ հեռաւորութիւններ
ընդգրկած համամարդկային ընդարձակ

ու ամբողջական փարձառութեամբ (6) :

Համամարդկային, ողբային եւ տեմ-
նական տաղնայններն ու հոգեվիճակները
գամբողջական երեւակայութեան մը
գամբողջական խորհրդանշաններու մէջ
խտացնող հասարակական շրջանը բոլոր-
յած բանաստեղծին է ալ : Բանաստեղծա-
կան հարուստ եւ ճկուն լեզու մը ուր
խօսակցական լեզուէն այցելող վտակներն
ու արարական դասական բանաստեղծու-
թեան ճոխ եւ այլերանգ գետը կը գտնեն
իրենց նորօրեայ դիմադրելը, աւանդներն
ու նորարարական ձգտումները իր ինք-
նուրոյն դիմադրելով անհատականացնող
այս տաղանդաւոր բանաստեղծին գրչին
տակ :

Այս շրջանին, յիսուական թուական-
ն՝ թու երկրորդ կէտէն սկսեալ աշխարհ
ձեւով հոգեվիճակներն ու ժամանակները
թելադրական պատկերներու, բայց մա-
նաւանդ բազմակողմանի խորհրդանշու-
նեմով միջոցաւ արտաքինացուցած Սայեա-
պի բանաստեղծութիւնը կը գրաւէ լայն
տեղ մը արարական գրականութեան մէջ :
Մահուան, կարօտի, յուսերի, սիրոյ,
անձկութեան, յոյսի թրթռացում-
ները կը գտնան ծաղկաւարքի բանաս-
տեղծութիւն-համայնագին :

Ձուրը՝ անձրեւի կամ գետի պատկե-
րով ներկայացող, կը հանդիսանայ Պա-
տրը Շաքէր Սայեապի հիմնական խոր-
հրդանշաններէն մէկը, եթէ ոչ ամենա-
հիմնական խորհրդանշանը : Բարեկրօնան,
ստորական, քրիստոնէական, իսլամական
եւ այլ դարաւոր աւանդներու միաձուլու-
մով՝ Սայեապի քերթողութեան մէջ ջու-
րը կը ներկայանայ Միջագետքի մէջ ծաղ-
կած քաղաքակրթութիւններու մշակու-
թային բժրոնողութիւնները խտացուցած
իրիւ հասարակաց խորհրդանշան, որուն
ընդմէջէն լայն կը բացուին քաղմբանդ
կացութիւններու, փորձառութիւններու,
աւանդութեանց եւ հասկացութիւններու
այլադան ոլորտները :

Այսպէս, ողբնական շրջանի գուտ
առձնական-բնարական փորձերուն մէջ
հաղիւ և մարտող այս խորհրդանշանը,
երկրորդ հանգրտանին, այսինքն՝ ողբեր-

գաշունչ խորհրդապաշտութեան(7) շրջանին եղաւ Սայեապի շերտողութիւնը յարափոփոխ կենդանութեամբ զապանակած էական տարրերէն մէկը :

[illegible]

Օրինակ, Բրիտանոսը, որ առաջնապահար քառասունդեղին ճեքերոգույժեան մէջ իր գազաթնակէտին եւ շանի շԲրիտանոսը՝ խաչելու քրեմէն նստէ՝ լանտիւնցիներեան, կը շրջէ Աւետարանով պատկերւած եւ քրիստոնէական վարդապետութեան կողմէ Հանդիսացող Աստուածորդիի Հառեկացոյն թիւնը, երբ մերօրեայ առաջնակներու եւ քննարկարիւնիտայական հարցերու շէկացման ի խնդիր՝ Մայեապ կը դիմէ խաչելութեան ետը պնդու թուրք մամանակներու ընթացքին անդադար շարունակողութեան, որոնք զոնք ու վկան է երկրէն ծնած եւ մարդուն աստուածացման զուգարին զգուցիկ Բրիտանոսը։ Աստուածորդիին մարդեղեկացման խնդարին, Մայեապ կը մերկայէ Բրիտանոսը իր ընդառնակական պարունակէն, կը շրջէ Աստուածորդիի եւ Ս. Ներսիսընթեան գաղափարը եւ մանաւանդապէս իր կը պատասխանէ մահուան արքայարունութեանը։

Յուրաքանչյուրի հեռանկարի միջև երկարող անորոշութեան մէջ թվադատելու գաղափարաբանական մարդուն ճնշման միջոցով արդէն՝ Մայեայթի թափ կու տայ մասին ծնող ոտնաձգողութիւնը չարժանացնելու հետեւ լարման հետ ճնշմանը: Այլ ի՞նչ կարելի է:

կին ճակատագիրն ու ընթացիկությունը խթանել է առջ, իր լինելը պահանջներն իր ճակատագիրն ու գոյությունն անկախությունը կերտել ձգտող ըմբռստ մարդուն ընդդիմացիկ դիրքորոշումին մեկնելով՝ անգնազանաբար քանաստեղծը կրճատել չարժանք տարրերից ու ճակատագիրը հասցրել ճակատագրի յուրաքանչյուր արժանապատիվը ճամբարակային զինուորականության, որ յուրաքանչյուր թիւրբեղան ապագա Պատերազմի Մայնակի վաթսուհին թուրքական զինուորականության մեջ:

Այս երբեքն ներս, իր ձիվապարեն եւ
առաքական եւ միջնադարյան մշակութա-
յան ենթահողի խորհրդանշանները, գո-
հերն եւ հշտանքի վերահասակացուցած
Պոտրը Շաբէր Սալիսապի հարուստ լեզ-
վածաստեղծութեան առանձին յատու-
թեններուն վրայ ծանրաբաշխով՝ զեա-
նաստեղծութեան լեզուն երկու համար-
ներու միջև ահուտե իր հաստորին մէջ,
տղթք՝ Մաճէս Մարբրաի աղագործի
դիտել կու տայ. «Եւ քերես Սոյանապի
երբորայսիւնը բնոյշող աւմէն գտե-
րս յատկանիշը ձայնին արծէքը կտնծ-
լու, զայն զսպիւտ եւ քիւղադականու-
թեան ուժով զգտականութմ լեզուական
նիւթի մը մէջ խտացնլու նմանութիւնն
է: Ան իմ զգայ բնութեան տարբերում
զանազան ձայները, զանմէք բուզքին
վրայ իմ փախտելը քիւղադական տտու-
նը կտանցնելով, որմէք քով քովի հա-
ւաւաւորով՝ կ'աւազացնեն այնպիսի իւ-
րայատուկ դրոշմեր, որ այդ բառերում
կու տան լեզուի գրիքիտուն համար առ-
ծածօք եւ նոր հասկացութիւններու հա-
զմանակ (...)

Սոյանապ չի բաւարարուիր
սովորական մարդոց զգացած ձայններուն
ստեղծներով, այլ իմ շարժք բնութեան
բարացած տարբերը եւ կարծես քէ իմ
խօսի անմեղ լեզուով» (էջ 222-223):

Արդար ըլլալու համար պէտք է աւելցնել, որ Սոսիալի զերթողութեան գլխաւոր յատկանիշներէն մէկը նկատուող սոսիալական լիզուսամտողութիւնը ո՛ր միայն դարձաւ այս եզակի բանաստեղծին ինքնատրոյշ տրտմանութիւնը ա-

և չի չեղարացուց արդարև մը, այլև՝ արարական ժամանակակից բանաստեղծությանը հարստացուց լեզուական ախպիրի բերեղացումով մը, որ Պատրի Եաթէր Սայեանի սերնդակիցներուն եւ յաջորդներուն համար հանգիստացու բանաստեղծական մարտահրավէր՝ արարական ժամանակակից բանաստեղծութեան այս ռաւիփորային նուաճած մակարդակը չէր շնչեղու ուղղութեամբ:

Ներակացներու համար կրնանք ըսել, որ «Սայեանը եկաւ իբրեւ վկայութիւն իր ժամանակի մասին, ոչ թէ իրադարձութիւնները արձանագրելու իմաստով, այլ՝ պատմական ակնբարձր խոր գիտակցութեան իմաստով, ինչպէս նաեւ իւր արմատներուն վերադառնալու, ամենց ժամանակները պարագրելու եւ ժողովուրդին զգիլին հետ հաղորդակցելու մը՝ շանակութեամբ» (8):

Վերջապէս, «իր շրջապատին մէջ գտնուող մարդոց կարօտները ներկայացընող առասպելները ճնշելու համար» (9) հակած ախ բանաստեղծներէն է Պատրի Եաթէր Սայեան, որուն գերթողութիւնը «արտաբնացուց զդրեղութիւնը եւ եկաւ իբրեւ պատասխան իր ժամանակաշրջանին մասին» (10):

«Այսպէս կը թուի Սայեանը — յատուկ հրաշք մը: Ան հզօրացուցաւ ինքն իր նաստեղծական գրաստեղծութեան մէջ, կամ՝ պարագրելու իրադարձութեան մէջ, կամ՝ բանաստեղծական լեզուին այլափոխման ճգնաժամին է, այսինքն՝ վաղուան մէջ սպառնելու փառասիրութիւնը» (11):

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

(1) Այս ձեռագրի տկարքին հետ ամուգագրութիւնը տարբերակ եւ շուրջ յետում տարիներու վրայ երկարող խնդրոյ տարկայ շարժումները

առանձին միւս մըն եւ իրենց կարգին: Յիշեալ շարժումներուն արագ բնութագրումն իսկ զուրկու գայ այս յօդուածին սահմաններէն: Հետեւաբար, կը բաւականաճախ իրադարձութեան արձանագրումով: Յանկեալ մտերմանումս ինքնուրու համար, տես գրագիրն 1973-ի հաւաքածոյին մէջ լոյս տեսած «Լիբանանեան անմիջական բանաստեղծութիւնը» խորագրեալ մեր ռուսամատերաշինութեան առաջին (Ոգոտտա), երրորդ (Հոկտեմբեր), չորրորդ (Նոյեմբեր), այլ մասնաճիւղ երկրորդ եւ երրորդին բաժնի (Գեղարարութիւն):

(2) Այս առկայութեամբ տես տաճ. Բաւալ Ապու Տիպի «Կատուցային ուսումնասիրութիւն Պայեանի գերթող յաւիճք բանաստեղծութեան ժամանակ» շանկեղ մարդը, իրաւեան զեղյալ տնտեսք, Ժ. Կարի — 1980, Թ. 11, էջ 22-42:

(3) Նոյն, էջ 40:

(4) Իրիս Խուրի, «Ուսումնասիրութիւններ բանաստեղծութեան գեղարարութեան ի խնդր», էջ 28:

(5) Նոյն, էջ 28:

(6) Տոք. Մանէտ Սամբրաթի, «Երազդի թըն-նադատ Մանէտ Սամբրաթի հետ» (գրոյց), Խուրիական «Մասուրի» ամսագիր, Օգոստոս 1979, Թ. 100, էջ 143:

(7) Երազդուպաշտութիւն Բառով, Պատրի Եաթէր Սայեանի ճիշդագրութեան տարբերակ, Երեւանի Լուսինայի Փրոֆեսոր խորհրդակցութեան համարածանօր զոյրացը կամ այլ շարժումով մը՝ իրականացած գրական ըմբռնողութիւնը, այլ՝ «Երեւանի խորհրդակցութեան հետ հաղորդակցելու իրադարձութիւնը, ինչպէս արդարօրէն դիտելու տայ տաճ. Խալիտ Սայիտ «Երազդուպաշտութիւնը» խորագրեալ իր շանկեղ ըմբռնութեան մէջ: «Մանէտագրութեան շարժումը», Պէյրութ, 1970, Առաջին հրատարակութիւն, շատրվի միւստէ հրատարակչատուն:

(8) Խալիտ Սայիտ, Զոյն, էջ 132:

(9) Նոյն, էջ 132:

(10) Իրիս Խուրի, Զոյն, էջ 29:

(11) Նոյն, էջ 130:

«ՕԽԵՐԱՆԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

ԺԱՆԴԱՐՄԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԴԵԱՆ ԶԵՎՈՒՑՈՒՄԸ
ՀԱՅԵՐԻ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐՃՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սկզբում Ստեփանեանցը Վարչութեանս գործակալութեան ուշադրութիւնն էր դրած այն մերձ յարաբերութիւններէ պատճառով, որ պահպանում էր հակողութեան ենթակայ մի խմբակի հետ, որն իր հերթին մօտ էր կանգնած օտոյնալ-գեմոկրատական բանուորական խմբակներին: Լիկվիտացիայի ենթարկելով այդ խմբակներէ մտաւորական մասը՝ ստուգողական խուզարկութիւն եղաւ եւ Ստեփանեանցի մօտ: Նրա թղթերը պարզեցին, որ լիւնելով Խարկովի Տեխնոլոգիական Ինստիտուտի ուսանող՝ 1899 եւ 1900 թ.թ. մասնակցել է ուսանողների ընդհանուր խլրտուածներին, ուսանողական անկարողութիւնների դործով հարցաքննութեան է կանչուել եւ մտաբուելով՝ հակողութեան տակ է առնուել եւ վերադարձել Թիֆլիս՝ իր հայրենիքը, ուր ինչպէս ասուած է վերը, նորից մտնում է անբարեյոյս խմբերի մէջ: Գործափարութիւնը պարզեց, որ Խարկովի դործով նրան արատաւորող թղթերը նա շտապել է թաքցնել իր բարեկամուհի Պոլինա Զակսի մօտ, որը փոխադրուել է Սարատով: Զակսի մօտ եղած խուզարկութիւնը հարուստ նիւթ հայթայթեց այն դերի մասին, որը կատարել էր Ստեփանեանցը Խարկովում յուզուող երիտասարդութեան մէջ, սակայն այդ պահուն նրա հին դործը կարծուած էր եւ այդ ամբողջ նիւթը կարող է միայն ապացոյց ծառայել, որ հայ յեղափոխականները պատրաստ են անկոչելու Խուստտանի ընդհանուր յեղափոխական դործին: Որ Ստեփանեանցը միաժամանակ հայ ազգայնական յեղափոխական է, ինչպէս իրանց անուանում են՝ հայ հայրենասէր, այդ մասին վերկայում է նրա մօտ բռնուած գրադրութիւնը Ռոսիկանութեան Դեպարտամենտի կողմից փնտրուած Լեւոն (?) Սարգսեանի մօր հետ, Սարգսեանի(87), որը տպած էլ գտնուած է Ժընեւում, մօտիկ յարաբերութիւններ է պահպանում արտասահմանի հայոց ընդհանուր յարժման ղեկավարների հետ եւ օժանդակում հայոց նոր յեղափոխական «Pro Armenia» Թերթի(88) հրատարակութեան: Այս վերջին հանգամանքի ապացոյց են ծառայում նրա մօրը դըրած ինքնագիր նամակները, խնդրելով օժանդակել այդ լրագրին թէ՛ անձնական միջոցներով եւ թէ՛ ազդելով Բաքուի հայ կապիտալիստների վրայ, որոնց թուին է պատկանում նա (միլիոնի անշարժ կարողութիւն եւ դրամագույն ունի): Ստեփանեանցը միաժամանակ գրադրութեան մէջ էր թէ՛ նըրա (?) եւ թէ՛ նրա նոր արտասահմանից վերադարձած Գրիստաֆոր եղբոր եւ շատ ուրիշ անձանց հետ, որոնք անց էին կացնում հայոց ազգայնական միառումը, կազմակերպելով ուսուցարական հիմունքներով, այսինքն առանց կառավարական իշխանութեան թոյլտուութեան, հայոց հրատարակչական ընկե-

րութիւն — «Ազգազգրական Ընկերութիւն» (89) անունով, որը պիտի փոխարինէ արդէն արատաւորուած ու խափանուած Հայոց Հրատարակչական Ընկերութեանը եւ նմանուի գոյութիւն ունեցող վրացականին, որի վնասակար գործունէութիւնը նոյնպէս յայտնաբերուած է արդէն:

«Անմահութեան ոգին խօսքի մէջ է, եւ ինքն էլ ուզում եւս ձեռք մեկնել նրանց, որ պիտի գան, մէկը կը լինի գաւթէ կապար տարի անց, նրա շրթներին կը կնկնամանայ քո երգը, խօսքը, կ'ապրես մի անգամ եւս» (էջ 317):

Մատանը ուրիշ բան չ'ընէր արդէն գիրքի առաջին էջերուն, այսինքն՝ իր բոլոր լսած կամ տեսած բաները կ'արձանագրէ: Տիրանն ու Արուսեակը ծերունիներէն կը փրկեն կորսուած դաւաճներու եւ անծանօթ մարդոց ամբողջ աշխարհը, այսինքն՝ պատմութիւնները, զրոյցները,

օրհանգիւսները, աղօթքները, հաւատալիքները, եւայլն, զորս ժամանակը եւ պայմանները կը փորձեն ընթել:

Տարբոյր մեծնող ու յառնող աստուածն է: Այն բոլոր զրոյցները, որոնք կապուած են իր շարժումներուն ու քայլերուն, կը վերադառնան իրեն հետ...: Անցեալին՝ իրեն հետ պատահած զէպքը արդէն խօսք է, առասպել եւ ժամանակին հետ կը ճամբորդէ: Եւ մեծնող բնութեան վերադարձումը տուող աստուածը բանա-հաւաք աստուածը կ'ըլլայ նաեւ, խօսքը կը փրկէ ժամանակէն, կորուստէն, յարութիւն կու տայ անոր:

Յարութեան, վերադարձումի ու անմահութեան գաղափարը (Իրականութիւնը) կու գան Տարբոյրն ու խօսքին ընդմէջէն, այսինքն՝ այն երկու տարբերուն, որոնք կը գիտնան ժամանակին: Հաւանորար, յաճախ այդ երկուքը կը նշանան: Ահա Տարբոյրն գտած ու փրկած մազաղաթի էջը, որ Տիրայրը հետեւեալ մտքերուն կ'առաջնորդէ:

«Դու տեսնո՞ւ ես, իմչպէս քահի վրայ յանկարծ յայտ աշխարհ է ելում գանգը, պատկերացրու ինձ, բոլոր գանգերը շատ մնան եմ, զիմագծերն եմ միայն մարդկանց գանգաւում: Միայն զու մայր այս տաղերին, ես գրանք տաք, միտում միտքի ձեռքերով եմ գրել ու նայել եմ նրանց իմ կենդան աշխարհ, այս տաղերը գրելիս իմ շրթերին ժպիտ էր եւ քեզ մնում չէի հատաւում մահուան: Այժմ ես չկամ, դու ընթերցում ես այս տաղերը, քո գրում կենդանութեան եմ իմ մտքերը, տաղանգները, կրքերը եւ գու մի պահ ապրում ես ինձ մնամ: Ոչ, մի պահ ես ապրում եմ, կենդանութեան եմ քո մէջ: Բարձր աստ այս խօսքերը: «Ես ապրում եմ, ես կամ, ես ձեր կողքին եմ», Նսեցի՞ր քո ձայնը: Ես էի՞ քո կողքին կանգնած, սպիտակ ոսկորներս եմ գետնի տակ, աշխարհի տեղ խոռոչները հողով եմ լրացւած, մեռեալի ծիծաղով ծիծաղում եմ տաւամներս: Միայն մի յառաջադրանք, ապրի՛ր և մերի՛ր, եթէ տխրեցրի քեզ...» (էջ 323):

Ահա գիրքը, որ գիտացած է ժամանակին, իսկ մարդը, որ չէր կրնար հաշտը

ւի մահուան գաղափարին հետ, համոզ-
ւիլ՝ թէ կրնայ մեռնիլ, արդէն փոշիացած
է եւ հոյսիսկ անուէր անծանօթ կը մնայ:
Հակադրութիւնը բիրտ է եւ ուժգին.
այդ խոռոչներուն տեղ այլեւս եղած էն...
Իսկ երբ մարդը վայրկեան մը կը կար-
գայ մազադաթը, անծանօթ գրիչը պահ-
ւի կը կենդանանայ: Վէպի վերջաւորու-
թեան նոյն ապրումները պիտի խոռվեն
Տիրանը — ան արդէն կը զգայ անցնող
ժամանակը՝ յուշերուն մէջ, արձանա-
դրած նոթերու տարեթիւերուն վրայ,
մենցող փոքրիկներու աղմուկին մէջ, ժա-
մանակը կ'անցնի մէջէն եւ ինքզինք զեն-
Պարանական ժամացոյց կը զգայ: Գի-
տէ, թէ նոյն բանը այլեւս կը կատարուի
իրեն հետ նաեւ, կը փորձէ իմաստաւո-
րել անցնող իւրաքանչիւր վայրկեանը,
սակայն ամէն իմաստ իրեն կը թուի ա-
նիմատ (էջ 523):

Կը վերադառնանք սկզբնական հար-
ցին: Մարդն է «կայ» ըսողը, իր շրջա-
պտտի ու իրերը շնչաւորողը. անոնք կը
մնան, իսկ ինք կը կորսուի... Ժամանա-
կին մէջ միմիայն խօսքն է, որ կը ճամ-
բորդէ...

VII.—

Եթէ անհատական մակարդակի վրայ
տալանալը մարդուն պայքարն է ժամա-
նակին դէմ, հաւաքական մակարդակի
վրայ՝ անոր շրջապատին ու ընկերու-
թեան հարցն է, որ հոս կը յղուի ազգա-
յին հարցին:

Ազգային յղումը այս բազմամա-
կարդակ զվէպին մէջ քանի մը գիծերով
կը զարգանայ: Սակայն այդ բոլորը տեղ
մը զիրար կ'ամբողջացնեն:

Ան Տիրանն ու Արուսեակը կ'երթան
ազգային զիջական վէպին բանաւոր պա-
տումները հաւաքելու, ինչ որ մեր հաւա-
քական անդեալին ամբողջական դիմագի-
ծը կազմելու կը նմանի, սակայն անով
չեն բաւականանար, անոր կողքին անոնք
կ'ուզեն, որ արձանագրուին նաեւ Արեւ-
մրտահայաստանէն եկած գաղթականնե-
րներու պատմութիւնը, իւրաքանչիւրին

կրած տառապանքները, իսկ երբ Մաթա-
նը կ'ըսէ, որ այդ նիւթերէն թաւական
հաւաքուած կայ, ինչո՞ւ կ'արժանազրէք,
Արուսեակի պատասխանը կ'ըլլայ. «Բայց
սա՛նս մեր կեանքի մէկ քնկարն է» (էջ
450):

Հետաքրքրականօրէն՝ ինչ որ անհատ
մարդը կը փորձէ ժամանակի հարուած-
ներուն դէմ ինքզինք պաշտպանելու հա-
մար, նոյն գէնքը, աշխիւքն՝ խօսքը կամ
գիրը հաւաքականութիւնը կը գործածէ
իր հաւաքական դիմագիծն ու կեանքը,
էրկի՛րը փրկելու, ժամանակի կորուս-
տէն պաշտպանելու համար: Քիչ մը ան-
դին, այս իմաստով յատկանշական է ինչ
որ Մաթանը կ'ըսէ.

«Թերեւս հայ բանահաւաքները, ճար-
տարապետները, հետգետները մի մուք
նախագագաւում ունէին, որ երկիրը պէտք
է կորսուի: Տեսէ՛ք ինչ մանրամասնու-
թեամբ են նկարագրում ամէն եկեղեցի.
ամէն ճամապարհ, գիւղ, քաղաք, մեծ ու
փոքր աւաններ, ուրեր, ձորեր, գետ-
նաւքներ, գիւղեր, որ այդ ամէնը միայն
թղթի վրայ պիտի մնայ: Երկիրը կորսը-
ւեց, մնաց նկարագիրը (...): Ամէն ինչ
նկարագրում է վերջին անգամ տեւեղի
տիրութեամբ, երաժշտի մեղամագձոտ
մանրամասնութեամբ. վառ, Տիգրանա-
յիրտ, Մուշ, Երզնկա, Կարին, Կարս:
Թղթին էին յանձնում՝ վաճ, կամուրջ,
հեփաք, էպոս, գրայցներ, անձնանուն-
ներ, նկարում ու նկարագրում էին մարդ-
կանց, ճրանց հասակը, մակաւոր գծա-
գրութիւնը, աչքերի գոյնը, ամբիւրի ձե-
ւոյթը, սովորութիւնները, տարազը.
կարծես զգում էին, որ շատով պիտի
դատարկուէր աղջ Արեւմտեան Հայաստա-
նը» (էջ 450):

Կորսուած մարդոց պէս կորսուած
ամբողջ աշխարհամաս մը, որ մասնա-
գիծներու, բանահաւաքներու ու հնա-
դէտներու գիրքին շնորհիւ կը մնայ: Քիչ
մը փարատութիւն, անհեթեթ, դաժան
կամ տխուր կացութիւն է, որուն հետ
անկարելի կը թուի հաշտուիլ, սակայն
ժամանակի աւերներուն դիմաց կրկին
դիւրն է, որ կը փրկէ այս բոլորը:

Բայց այս բոլորին զուգահեռ, մեռ-

նող ու յառնող բնութեան հետ, կեանքին հետ, դիրքին հետ, քաղաքներուն հետ, կայ տմբողջ կեանքը, երկիրը:

Մեծամօրի Հեթանոսական տաճարի ու հողերէն դուրս ելած քաղաքին կողքին կը բարձրանայ աթոմակայանն ու նոր տաճար: Տաւրոսը պիտի գայ, առժամեայ սենեակ մը պիտի տնենայ եւ, յաջորդ տարի, պիտի տնենէ, որ այդ տմբողջ շէնքը կը քանդուի՝ անոր տեղ նոր մը ստեղծելու համար...:

Ասոր լուսազոյն օրինակը՝ Վանատաւրին բանեցուցած «Հայաստան» ճաշարանն է, որ քէշ մը ամէն ինչ է, — իջեան, պանդոկ, օդատուն, տաղաւար, եւայլն: «Հայաստան»ի ներկայութիւնը, իր անւան պէս, յատկօրէն ու ցցուն կերպով խորհրդանշական է, որովհետեւ միայնակաճի ու խճողուած լրջանի մը մէջ կը դնուի, ուր կարելի է մեքենաներ տեսնել Վանէն, Տիգրանակերտէն, Նախիջեւանէն, Մուշէն, Ակնէն, Կիլիկիայէն, Ջէլթուսէն, Աշտարակէն եւ Արեւելահայաստանի ու Արեւմտահայաստանի բոլոր լրջաններէն...: Գիրքի աւարտին՝ հին շինութեան տեղ «Հայաստան» հիւրանոցը կը լինուի, այսինքն՝ այդ տմբողջութենէն կազմուած երկիրը, յառնող հայրենիքը...:

Սակայն այս եւս տմբողջական կարելի չէ նկատել, որովհետեւ մեծնող ու յառնող պատանի աստուածը՝ Տաւրոսը, իր տունը առկաին շինուած ինկատներ, տակաւին ժամանակաւոր կարգադրութիւններով կը բնակի հոս ու հոն...:

Ինչ որ տմբոյնկաւայ զրօտաշրջիկներուն կ'ըսէ Տաւրոսը Սեւանի մէջ՝ յստակ է եւ, քէշ մըն ալ, պատգամի ձեւ կ'առնէ.

«Ատէ՛ք, Տաւրոսը կանչում է բայրիչ, քոյ գամ եւ քոյ մեր լեռների կատարն»

(Եւր. 2 եւ վերջ)

ըր գառարկ չքողմեմ (էջ 509):

Մինչ այդ ան պիտի շարունակէ մընալ պատմական Հայաստանի բոլոր լեռնային գագաթներուն...: Եւ քանի երկիրը չէ միացած, տմբողջութիւնը չէ վերագտած, բնականաբար Տաւրոսին տունը չի կրնար շինուիլ տակաւին...: Ազգային դիպացանովէպի հերոսներուն վերջին զարմը տակաւին բանտարկուած կը մնայ ժայռին մէջ...:

VIII —

Թաւափեանի «Մեծնող-յառնող» բոլոր գիրքերը գործի աւարտին կու գան եւ համադրական, տմբողջական պատկեր մը կը կազմեն, առանց վերջնական բլաւալ պատրանքը կամ յաւակնոտութիւնը տալու:

Մարդիկ, որոնք կը ծնին ու կը մեռնին: Մնող ու մեռնող սովորութիւններ: Մեռնող ու ծնող քաղաքներ, բնութեան առեղծուածային ուժը, որ կեանք կու տայ ամէն զարնան հետ, կը նորոգէ մարդերը, խօսքը եւ ամէն ինչ: Կը մեռնին ու կը ծնին առասպելներ:

Մեծամօրի Հեթանոսական հեթանոսներուն մօտ կը բարձրանայ աթոմակայանն ու նոր աւանը, հին Նրեւանը նոր դիմադրի կ'առնէ: Այս բոլորին մէջ կարելի է հանդիպել հայկական դիպարանութեան բնատիպերուն, որոնք կարծէք նոր մարմնաւորումներով միշտ մեր չուրջ կը դնուին, իսկ այս բոլորին շունչ կու տայ կեանքի առեղծուածային ուժը, պատանի աստուածը, Տաւրոսը, որ իր շունչով կը նորոգէ ու կը թարմացնէ բոլորը:

Այս բոլորին աւերներ ու այս բոլորէն անդին՝ կը մնայ խօսքը, գիրքը, որ առասպելներ կը ստեղծէ եւ կը ճամբորդէ մարդը ջնջող ժամանակին մէջ...:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Կ. Շ Ա Հ Ի Ն Ե Ա Ն

ՊԵՐԹՈՒՆ ՊՐԵՒՏԻ ԴԻԻԳԱԶՆԵՐԳԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ԸՄԲՈՆՈՒՄԸ

Իբրևն էտք, եւրոպական թատրոնին մէջ ամէնէն հետաքրքրական երևույթը Պրեխթն է, որուն պատշաճ է մօտենալ նոյն այն ոգիով, ինչ որ ան ցուցաբերած է դինք կանխող եւ իր կողմէ գաւառապետական պիտակուած թատերական աւանգույթի մը դիմաց: Այդ սպին էսպէս քննադատական է, եւ Պրեխթի կարգ մը թատերգութիւնները, վերջին հաշուով, այլ հեղինակներու գործերուն քննադատական վերամշակումներն են:

Պրեխթ ծնած է Գերմանիա, Օկերպուրկի մէջ, 1898ին, զաւակը՝ գործարանատիրոջ մը: Ուսանած է բնագիտութիւն եւ բժշկութիւն Մինխիխի համալսարանին մէջ: Սակայն, բժշկութիւն ուսանելու ընթացքին՝ Արալին Ալիսարհամարտի վերջին տարին զօրակուած է եւ, սպառնալով տարւելն էտք, հրաժարած համալսարանական ուսումնառութենէ: Բանակի մէջ իր ծառայութեան ընթացքին պատերազմի դառնութիւնները տեսած ու ճաշակած Պրեխթ, պատերազմէն հտք, դարձած է խաղաղապաշտ՝ բառին լայն առումով: Ժողովրդային բանաստեղծութիւններ յօրինելով, զանոնք երգած է փողոցներու մէջ՝ կիթառի ընկերակցութեամբ, եւ ասպա, 1922ին, արդէրգերը խմբած՝ «Տնային քանադակներ» անունով հատորին մէջ: 1918ին իր առաջին թատերգութիւնը՝ «Պապա»ը հրատարակելէ հտք, գրած է այլ 39 թատերգութիւններ, որոնց մէջ առաւել ուշագործներն են «Երեք գրուցնց օփերան» (1928), «Կալիլէայի կեանքը» (1941) «Մայր Քաջութիւն եւ իր գաւազները»

(1939), «Սեծուանցի քարի կիմը» (1941) եւ «Կովկասեան կաւնէ շրջանակը» (1945), եւ այլն: Ինչպէս Շէյքսպիրի, նոյնպէս Պրեխթի թատերգութիւններէն ոմանք այլ հեղինակներու գործերու վերամշակումներ են, որոնք բաւորովին թարմ ըստեղծագործութիւններու հնչողութիւնը ունին:

Երբ նացիները իշխանութեան գլուխ անցան Գերմանիոյ մէջ, մարքեան քաջայայտ համոզումներ ունեցող Պրեխթ մեկնեցաւ երկրէն ու, 1933էն մինչեւ 1948, ապրեցաւ ռաբանսկեան երկրներու եւ Միացեալ Նահանգներու մէջ: 1948ին Արեւելեան Գերմանիոյ կառավարութենէն ստացաւ Պրեխթի վերագաղնալու առաջարկ մը եւ ընդառաջելով ատոր, 1949ին իր կեոջ՝ Հելէն Ուէյկըլի հետ Պրեխթի մէջ հիմնեց նշանաւոր Պերլիմըր անսամպլը, զոր մեծ յաջողութեամբ ղեկավարեց մինչեւ իր մահը՝ 1956:



Թէեւ Պրեխթ գրել սկսած է 1918ին, սակայն անոր ստեղծագործական կեանքին ամենակարեւոր հանգրուանը կը նշուի 1937ի եւ 1945ի միջեւ ինկած ժամանակաշրջանը, որուն ընթացքին կ'արտադրէ իր գլխաւոր գործերը՝ «Մայր Քաջութիւն», «Կալիլէայի կեանքը», «Սեծուանցի քարի կիմը» եւ «Կովկասեան կաւնէ շրջանակը»: 1931ին հիմը դնելով «Գիւցազներգակ թատրոն» իր սեփական եւ թատերական վերոյիշեալ հանգրուանը (1937-1945) կարելի էտք, Պր-

րեխթ լայնօրէն կ'ազդէ բեմագրական ար-
ւեստին վրայ, 1949ին Հիմնուած Պրեի-
նրոյ անսամպլի ճամբով: «Եւ ուզեցի
թատրոնին մէջ կիրարկել այն նախադա-
սաւթիւնը, որ կ'ըսէ, թէ կարելոքը աշ-
խարհի բացատրութիւնը չէ, այլ՝ ամոք
փոփոխութիւնը», կը յայտարարէ Պրեիթ
(1953): Բայց ան նոր աշխարհէ մը ներս
մուտք չի գործեր, այլ Հին աշխարհ մը
կ'արժեւորէ տարբեր ձեւով: Արժէքներու
փոխադրումով, յուսախաբանութեամբ, առանձ-
նութեամբ, ու անհնթեթեմութեամբ լեցուն
աշխարհ մը, զոր, իրենց կարգին, պե-
ղած են Իբսէն, Սթրինդերկ ու Ջեյմս, եւ
զոր Պրեիթ կը փորձէ բացայայտել
ամբողջական ընդգրկումով ու արմատա-
կան քննադատութեամբ: Անոր ստեղծա-
գործութեան հիմնական մտահոգութիւնը
կը կազմեն հարստութեան ու սեռանդի
հանդէպ մարդուն անյազ քաղցը եւ անոնց
համար միշտ պայքարը, մարդկային
մարմնի: Եւ հոգիի ապականումը եւ կեան-
քի անհնթեթեմութիւնը: Իր «Փռնի տրամա-
քանութիւնը» թատրոնին մէջ խորագրով
ստեղծուած Պրեիթի մէջ Պրեիթ կ'ըսէ,
թէ ներկայ գիտական դարուն թատրոնի
մէջ մեր ստեղծագործական կեցուածքը
բնութեան և ընկերութեան հանդէպ պէտք
է ըլլայ քննադատական կեցուածք: «Դե-
տին եւ՛ղէկ» մեր կեցածքը կ'ըլլայ եւ-
մբ կամեմունքով, պաշտօնով ծառիմ
հանդէպ՝ կ'ըլլայ ծառիմ պատուաստու-
մը, շարժումին հանդէպ՝ ինքնաշարժնե-
րու եւ օդանւերու յղացումը, եւ ընկե-
րութեան հա՛ղէկ՝ ընկերութեան փոփո-
խութիւնը: Մենք ընկերային կեանքի մա-
սին մեր պատկերները կը ստեղծենք գե-
տերու վրայ ամբարտաւան կառուցողնե-
րուն, պտուղներ ցանկացնելով, ինքնու-
շարժներ յղացողներուն եւ ընկերութիւնը
փոփոխողներուն համար: Մենք ա՛յս մար-
դիկը կը հրաւիրենք մեր թատրոնները եւ
ա՛նցմէ կը պահանջենք, որ չմոռնան ի-
րենց հանձնի եւ տաքութեան քիւնները, որ-
պէսզի աշխարհը անոնց ուղեղներուն ու
սոսորուն տրամադրութեամբ տակ քննմէ,
զայն փոխելու եւ ցարգացնելու համար
ինչպէս որ յարմար կը տեսնեն»(1):

Ըստ Պրեիթի, երբ ներկային տունը-
ւած թատերգութիւններ կը ներկայացը-
նենք պատմական կաղապարով, այն պայ-
մանները, որոնց մէջ կ'ապրի հանդիսա-
տեալ, թատերգութեան ընդմէջէն անոր
պիտի ներկայանան իրեն առանձնաշա-
տուկ բան մը: Պրեիթ այս պարագան կը
նկատէ «քննադատութեան սկիզբը»:

«Սակայն քննադատութեամբ մարդ չի կըր-
նար զպատմական պայմաններուն նայիլ
կամ զանոնք թատերգութեան մէջ օգտա-
գործել իբրեւ մութ ուժեր, այլ պէտք է
նկատի առնէ, որ ատոմէ մտադր կազմէ
ստեղծուած են»(2):

Յորքին մէջ Պրեիթի քննադատու-
թեան գլխաւոր առարկան Իբսէնէն ետք
Եւրոպայի մէջ գերիշխող բնապայտական
թատրոնն է, զոր Պրեիթ կը կոչէ «արիս-
տոտէլեան»: Ան աչգպէս կը կոչէ որեւէ
թատրոն, որուն միջոցով «միտածուում»
մը կը կատարուի բեմին եւ նաեւ դիտատե-
սին մէջէն, այդ իրադրութեան համար Ա-
րիստոտէլի սկզբունքները օգտագործուին
կամ ոչ: Այս հիմունքով, զինք կանխող
բոլոր ժամանակային անհերքելի գրեթէ բո-
լոր սկզբունքները կարելի է համարել «ա-
րիստոտէլեան», որովհետեւ, վերջին
հայտնով, անոնք ծառայած են այդ «միտ-
ածուում»ին: Թատրոնը սահմանելէ ետք
իրեն «մարդոց միջեւ պատահած իրական
կամ օրինուած զէպէրու կենդանի պատ-
կերներու արտադրումը՝ զբաղեցնելու եւ
պատկերելու, Պրեիթ կ'ըսէ. «Այս այլա-
զան պատկերներու պատմաւած հանդէպ
օտարմանը քնաւ կապ չունի պատկերին և
բնատիպին միմեանքեան ատկերմանին հետ:
Պատկեր» երաւ աննշաւթիւնը, եւ նայնիսկ
անոնց պատկերներու փոքր հաւանականու-
թիւնը կարելոք չէ, եթէ աննշաւթիւնը
որոշ կայունութիւն մը կը պահէ եւ փոքր
հաւանականութիւնը կը մնայ նոյնատե-
սակ»(3):

Պրեիթի կողմէ քննադատուած «ա-
րիստոտէլեան» եւ առաջարկուած «գիւ-
յադերիզակ» թատրոններուն միջեւ գրա-
նըւող տարբերութիւններէն Ռայմոնտ
Ռոյթերմը կ'առանձնացնէ հետեւեալ չոր-
սը(4):

ԴԻԻՑԱԶՆԵՐԳԱԿ ԹԱՏՐՈՆ

ԱՐԻՄՏՈՏԵԼԵԱՆ ԹԱՏՐՈՆ

1.— Այս քատրոնը հանդիսատեսը կը վերածէ դիտողի մը, սակայն կ'արք-նցնէ անոր գործելու կարողութիւնը:

2.— Կը ներկայացնէ աշխարհի մէկ պատկերը, որուն մէջ հանդիսատեսը դէմ առ դէմ կը գտնուի բանի մը հետ եւ կը ստիպուի ուսումնասիրել գայն:

3.— Հոս իւրաքանչիւր տեսարան գոյութիւն աւելի առանձնաբեր, իրեն դիտուելիք բան մը, եւ կը զարգանայ յանկարծական ռատումներով:

4.— Այս քատրոնը իր գործողութեան ընթացքին մարդը ցոյց կու տայ ի՞նչ գիտէ արտադրելու հալածայթի մը մէջ, հետեւաբար՝ աչք մարդը կ'ըլլայ ենթակայ բննադատութեան ու փոփոխութեան:

Վերոյիւեայ տարբերութիւններէն կըրնանք հետեւցնել, որ Պրեխթի դիւզագ-նէրգակ Թատրոնը եւ տրիստոֆիան Թատրոնը իրարմէ կը տարբերին դիտաւորաբար երկու հակադրութիւններով՝ «միաձուլում»-ի եւ «օտարացում»-ի հակադրութեամբ, եւ «հակասադրականութեան» ու «ընկերային իրապարտութեան» հակադրութեամբ:

Մարդիկ իրենք գիրենք եւ իրենց կացութիւնները կերտելու հորովոյթին մէջ ցոյց տալու համար՝ Պրեխթ զարգացուց բնագործեան ու դերակատարումի մեթոտ մը. որուն կորիզը կը կազմէ «օտարացում»-ի յղացքը: Ըստ այս յղացքին, Թատրոնի մէջ ինչ որ բեմի վրայ կը պատահի, ապրուած ըլլալէ աւելի պիտի ըլլայ ներկայացուած:

«Այն» որ չի փոխուիր երկար ժամանակ, կը թուի, թէ անփոփոխելի է: Արդարեւ, ամէնաւերջ մեզի կը հանդիպին այն աստիճան քաջայայտ իրողութիւններ, որ կը կարծեսզ, թէ մենք բնաւ կտրիւք յաւիճիք գտնուիք հասկնալու համար որեւէ ճիշդ թափելու: Մարդաց միասնաբար ապրելու իրողութիւնը ա՞նց կը թուի, թէ մարդկային իսկական իրականութիւնն է: Որովհետեւ մահուիք, որ տարեցներու աշխարհին մէջ կը մեծնայ,

1.— Այս քատրոնը հանդիսատեսը կը ներգրաւէ իր բնական գործողութեան մէջ ու կը սպառէ անոր գործելու կարողութիւնը:

2.— Կը փոխանցէ փորձառութիւն մը հանդիսատեսին, մինչեւ որ վերջիմե այդ փորձառութիւնը ապրի քատրական կերպարներու հետ:

3.— Հոս իւրաքանչիւր տեսարան կը կերտուի արիշ տեսարանի մը համար, գործողութեան զարգացումին մէջ իրեն հզափոխական անխուսափելիութիւն:

4.— Մարդը քատրական գործողութեան մէջ կ'առնուի ինչպէս որ ճանցընաւ, տրուած է անփոփոխ:

հարցերը կ'ըմբռնէ այնպէս՝ ինչպէս անո՞ք այդ աշխարհին մէջ կ'ընթանան: Եւ հարցերու այդ ընթացքը սովորական կը դառնայ իրեն համար: Եթէ գտնուի մէկը, որ ատկէ աւելին ցանկայալ ճաշուքիւնը ունենայ, գայն կը ցանկայ միայն իրեն քաջառութիւն: Եւ մոյմիսկ երբ ան կը յայտնաբերէ, թէ ինչ որ «ճակատագիրը» իրեն պարտադրած է, այլ բան չէ, քան այն, որ ընկերութիւնը ընտրած է իրեն համար, աչք ընկերութիւնը — իրեն պէս էականերու այն հսկայ համախմբումը, որ իրեն ամբողջութիւն աւելի մեծ է, քան զամբողջ այն մասերուն, որոնցմէ կը բաղկանայ ան — իրեն պիտի թափ ազդեցութեան կամ փոփոխութեան ենթակայ չեղող իրողութիւնը անոր համար սովորական է: Եւ ք՞վ կը կտակածի իրեն համար սովորական եղող բանի մը վրայ: Ու որպէսզի այս բոլոր իրականութիւնը իրական երեւելի լինի, անոր չափ մասնականութիւն երեւի տնոր, աներածեղտ է, որ ան իրեն համար զարգաց՞է աչք զարմացական մայրուածքը, որով մեծ կայիլէնն մայնցու աչք ու ձախ երեւցող կայսրուած լապտերի մը: Կայիլէն աչք ցնցումներով երացու աչքնալէս, որ կարծես գտնուի աչք ձեռով չէր մայա-

տեսած աւ անոնց շարժումը չէր հասկը-
ցած, ինչ որ գիմֆ առաջնորդեց յայտնա-
բերելու ճօնաճակի կանոնը: Ամերսթեյտ
է, որ քատրոնը, ընկերային կեանքի մա-
սին փոխանցած իր պատկերներում ընդ-
մէջէն, ստարածէ այս որքան դժուար,
նայնքան օգտակար նայաւածքը: Թատրո-
նը պէտք է զարմացնէ՝ իր հանդիսատես-
ները: Եւ այս կը կատարուի օգտագոր-
ծումովը քեֆնիքի մը, որ հանդիսատեսը
կը մղէ սովորականը ամենովոր նկատե-
լուս(5):

Եթէ Սթանիսլասկի իր իւրաքանչիւր
գերատեղը կը քաջալերէր, որպէսզի վեր-
ջինս իր բեմական կերպարը ապրի ո՛չ մի-
այն բեմի վրայ, այլեւ՝ անկէ դուրս, ինքն
իրեն հարց տալով, թէ այդ կերպարը ի՞նչ
պիտի ընէր կամ ընէր թատերգութեան
մէջ գտնուող կացութիւններէն տարբեր
կացութիւններու մէջ, մինչեւ որ գերա-
կատարը ամբողջովին իր կերպարէն ներս
մտնէ ու առանձնէ զայն, Պրեխթ կ'ըսէր,
թէ գերասանը պէտք է միայն ցոյց տայ
կերպարը: Կամ, աւելի լաւ կ'ըլլայ, որ
զայն միայն չփորձարկէ: Սակայն այս չի
նշանակեր, թէ երբ ան պիտի ներկայացնէ
կրֆոս մարդիկ, ինք պաշտօնիւ պէտք է
մնայ: Այդ մէկը կը մշտնապէս միայն ա'յն՝
որ ամբողջացումները հիմնականին մէջ
պիտի չհամարեն կերպարին զգացումնե-
րուն, այնպէս որ՝ իր հանդիսատեսներուն
զգացումները հիմնականին մէջ չփոխուին
իր կերպարին զգացումներուն(6):

Պրեխթ իր այս առաջադրանքը իրա-
դրեցելու համար փորձերու ընթացքին
գերակատարներուն կը թելադրէր իրենց
խօսքերուն սկիզբը կոչել «ան ըսու» ար-
տալայտութիւնը կամ այդ խօսքերը վե-
րածել երրորդ դէմքի եւ անպեսլ ժամա-
նակի կամ գերերու փոխանակում կատա-
րել գերասաններուն միջեւ: Խորքին մէջ,
ինչ որ Պրեխթ կը մերժէր, թատրոնին
մէջ զգացումներու ինքնանպատակ օգտա-
գործումն էր, եւ ինչ որ կ'առաջադրէր,
այդ զգացումներուն միայն անհրաժեշտ
պարագային օգտագործումը՝ յաւելեալ
թափ հաղորդելու մտքի մը նոր մղում
ապրել արարել մը: Այսուհանդերձ, երբ
ամերիկացի քննադատ Սէմ Ուանամաքը

«Մայր Քաջութիւն» թատերախաղին մէջ
Հելէն Ուէյկելի գերակատարումին մա-
սին գրեց, թէ անիկա «գրեթէ չի տար-
բերիր Սթանիսլասկիի դարձեւն արեւ-
նիսանալիօրէն մարգուտ գերասանի
մեկնաբանումէն», Պրեխթ զգուհեցաւ իր
տեսութեանց սխալ բացատրութենէն եւ
յայտարարեց, թէ ինքզինք կը համարէ
ուսողութեան մեծ ուսուցիչ մը, որ ստա-
ցած է հետեւեալ երկտողը. «Յարգելի/
պարա՛ն, ես ինչ քիչ ըստ ձեռի եւ ըստ
Էսքանա համաձայն եմ, որ երկու առա-
ւել երկու կ'ընէ հիմք(7):

Հակառակ զաղափարական գետնի վը-
րայ իր համայնափարական շնորհած հա-
կումներուն, Պրեխթի թատերգութիւննե-
րը կը շրջանցեն զաղափարական զաղափա-
րաբանութեան ծիրերը: Ռայմոն Ուիլ-
յամս կը նշէ, որ առանց ուրիշներու կող-
մէ ստեղծուած նիւթին, Պրեխթի թատե-
րական իրագործումը, որ քննադատական
ու վերափոխիչ նկարագիր կը կրէ, չէր
կրնար գոյութիւն ունենալ: Բայց հիմա,
երբ կատարուած է այդ նուաճումը,
«մեծ պէտք է պայքարին» մտնելու հա-
մար, ինչպէս ի՞նք՝ Պրեխթ պնդուծ է, նոր
տեսակի աշխարհ մը(8):

4. ՇԱՀԻՆԵԱՆ

ՄԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Պրեխթ Պրեխթ. «Փոքր արժանաւորու-
թիւնը թատրոնին մէջ», «Օտար գրականութեան»
նոր ստեղծական արարատաւ հասմտայ հանգիստ
1975ի 2րդ թիւը, էջ 119:

(2) Նայն տեղը, էջ 126:

(3) Նայն տեղը, էջ 118:

(4) Raymond Williams, «Drama
from Ibsen to Brecht», Penguin bookg,
1978, էջ 317:

(5) Պ. Պրեխթ. «Փոքր արժանաւորութիւնը
թատրոնին մէջ», էջ 127:

(6) Նայն տեղը, էջ 128:

(7) Յրեմի Մ. Ուայթիմի մէկ գործին ա-
րարելին հաւաքական քարտեզագրութիւնը, հրատա-
րակուած՝ Եփեսոսիւմ «Տարալի Մարիֆէ» հը-
րատարակչաւան կողմէ, Փանթը, 1970, էջ 130:

(8) R. Williams, «Drama from Ibsen
to Brecht», էջ 332:

A.R.A.R.®

digitised by

ԿԳՄԱՐՆԵՐ

ՅԵՐԹԱՎԱՆ... ԿԱՄԱՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ... ԻՊ... Բ... ՅԵՐԹԱՆԲԱՐԵԽՂՃՈՒԹԻՒՆ ՅԵՐԹԱՎԱՆ... (Բ)

«Բագին»-ի նախորդ թիւով ընթերցողը տեսաւ Օշականի երեսնեան հատորին մէջ տեղաւորուած «Դամիւշ վարուժան» մենագրութեան պատահած աղէտը, որ, զփրախտարար, արկածի մը հետեւանք չէ, այլ ժառ կը կազմէ հրատարակչական ա՛յն վարքադէին, որ մեր երկրին մէջ անկուր հե- տեւողականութեա՛ր մը կը շարունակէ իր աւերը, հանդիսատեսի մեր բարե- հա՛ն աշխարհն առջեւ, օր ցերեկով:

Հարցը, ի հարկէ, տպագրական հնարաւոր թերիներուն չի վերաբերիր: Տպագրական մարդին մէջ ոչ ոք, մինչեւ անգամ Եւրոպայի հռչակուած հրա- տարակչաւուները չեն կրնար միակտուր փառքով մը փայլիլ: Ասկէ առաջ ա- ոխի՞ եղած է այս մասին խօսելու, եւ չեղտու, որ հրատարակչական ձեռ- նագիրը, մա՛նաւանդ անոր որբագրական երեսը դաւադիր գործ է եւ դիւրին չէ մեքենական ճշգրտութեամբ մը աւարտել տուեալ հատորը, հանդէսը կամ թիւթը, բայց անուշադրութեան ու տնրծախնդիր վերաբերու՛ին մէջ զուցէ մրցակից լուսինք մենք ու անմրցակից կը մնայ յա՛տկապէս հայրենի հրա- տարակչութիւնը, ի՛ մասնաւորի, երբ ձեռք կը զարնէ արեւմտահայ դրաղէ- տի մը գործին, հակառակ անոր, որ այսօր ուժեղ անձնակազմերու պոհա- սէն չեն տառապիր Արարատի շուրին:

Պիտի բռնեք իսկոյն, որ պետական վերադիրը կրող այդ օրդաններուն թույլ տուած կարգ մը վրէպներ իրենց յաճախակիութեամբ ու անտու- թեամբ ոչ-պատուարեր ըլլալով հանդերձ, կրնան, առանց մեծ դժուարու- թեան, արագորուիլ նո՛նիսկ պարզ ընթերցողին կողմէ:

Իցի՛ւ թէ նաեւ Օշականի երեսնեան հատորին մէջ վիտաղագ բոլոր վրէպները նոյն նկարագիրը ունենային եւ ընթացեկ թափթփածութեան մը հետեւանք միայն ըլլար կատարուած փողոտամբ: Այդպէս չէ առկայն: Փա- ղափորական ու տեսական բնոյթ կրող հատուածներուն մէջ կատարուած սրբապիղծ միջամտութիւններուն չափ տղխաւի լոյսն է անփութութիւնը նոյնիսկ զուտ գրական էջերուն առջեւ:

Դժուար է խօսիլ կիրարկուած կամայականութեան բոլոր երեսներուն մասին ու ներկայացնիլ աղէտին ամբողջական պատկերը այս էջերուն, ու ճիշդ ասոր համար դատողական ու պատմական խախտումներուն աւերնիքը, տպագրատպաւոր էջերու եւ պատմութեան շարքէն մենք որդեգրենք ներ- կայացնելի մէկական նմոյշ միայն, Օշականի արձակ բանաստեղծութեան գո- հարներէն «Արիւր»-ին պատահած աղէտը եւ նշանաւոր «Նախալագին» կրած նոր զփրախտութիւնը:

Ահաւոր է երեսոյթը, բայց աննախադէպ չէ՛՜ նոր չէ նաեւ անոր շարժառիթը, տարրիւր մտածումներ, աշխարհահայեացքներ, լեզու ու ոճեր չկարենաւ: Հանդուրժելու ա՛յն սահմանափակութիւնը, որ ստալինեան մուշ- երեսնամեակին թափանցեց Հայաստան, այլ՝ Ստալինի չթացումէն երեսուն տարի ե՛տք անգամ կը շարունակէ իր չարաշուք փանտալոթիւնը:

Աւելի պերճախօս են փաստերը:

digitised by A.R.A.R.®

ԸՆԹԱՑԻԿ ՎՐԷՊՆԵՐ

...Առատ կուրծքը շատ նայուածքներ ընդունէր էր ու ամաշկոտ հ-
րեսը շատ...

էջ 23

Բայց ամէն սուղուկի գլուխ անցնելու...

էջ 24

Ասատուրին ականջին կարգուիլ բառը պահ մը կախուեցաւ, ծաւալ-
ւեցաւ...

էջ 85

Գմբէթին վրայ ցցուած ապակիէ աշտը լոյսը կը ցրէիմ ասդին-անդին:

էջ 88

Հակառակ իր գլուխը հրկայն-հրկայն շոքելում...

էջ 101

Տոպիճ իրապէս մեծ հոգիով մը կը շալակէր չիֆթէն ու կ'իյնար մա-
ցառներուն մէջ:

էջ 105

Դիւրի՞ն բան է հոգին շահելը, անդիականին մէջ տեղ ունենայը:

էջ 115-116

Բաճանաւն ասոր համար էլ խորհեցաւ:

էջ 125

...Կը բանաւ իրենց ծխախոտի տոպրակները, կը փաթաթեմ հաստ-
հաստ սիգարներ...

էջ 136

Հովութիմ հայրը լեռը մեծցած մարդու վայրենութիւնն ու...

էջ 144

Տարիներ անցել էիմ իր գալէն:

էջ 152

Ժամանակին հետ քիչ-քիչ մաշուեցաւ ան ալ:

էջ 152

...Հին երգեր կու գային իր շուրթերու վրայ, անհասկնալի բառերով:

էջ 162

Թափափուած ըլլալուն մուրհակները ձեռքէ ձեռք կ'անցնէին:

էջ 162

Մէկ քանիսները խաչ հանելով փութացին ժամ:

էջ 166

Խակական խնթն էր ան, ամբողջ գեղին մէջ կը պտըտեցնէր խորտակ-
ւած իր...

էջ 229

Մութը մեծ զգեստի մը պէս կ'իյնայ ձեւերուն վրայ, ու իրերը կը
դադարիմ ապրելէ:

էջ 258

...Իր ափերուն վրայ պզտիկ ձեւերը կը մարին դիմացէ դիմաց, եւ
եզրերիմ շարուած բլուրներուն...

էջ 279

Աչքին դիպաւ թարմ հողակոյտ, որ առջիմ օրը կը սկսէր իր անսահման կեանքին...

էջ 298

Մատին Ծայրովը դիպաւ նայուածքի գունտերուն, որոնք...

էջ 298

Ասկէ սքափուեցաւ հորէն:

էջ 299

Ու փեռայ չեղաւ, շուրջների կարդին երթալու համար տունը զոքանչին...

էջ 307

Կատմերը զալարագին կը դառնան ասին մէջ միտելու:

էջ 316

Երեք օր քնեցաւ անիկա, մեռելի մը պէս:

էջ 328

Աչքերը կողպուած էին:

էջ 369

Բա՛յց... ու չհամարձակուեցաւ բանաձեւել մտածումը:

էջ 374

Գլխաւորաբար Վենետիկը՝ որ իր մէկ մարամիմ գրչովը...

էջ 384

Եւ կամ հակառակէն՝ բախտին լքուած, ուրացուած, մոռացուելու, մեռնելու աստիճան:

էջ 385

...նուազ ուժգնութեամբ իրենց արձադանդը ունեցող՝ գրողների հոգիին խորը:

էջ 388

...Երկուքն ալ մէկ ու նոյն վիճակներում անդրադարձ:

էջ 390

...Իմ ժողովրդի հոգեղալտէն իմ վերաբերելի՜ պարզ, խորունկ, իրաւ առաջադրութեանց սիրոյն...

էջ 391

Ինք կ'ըսէ տեղ մը, թէ Աթենք չէ գնացած եւ թէ համերական վարժութիւններ չունի:

էջ 398

...Կր հասկցուի, թէ ի՞նչ սրբազան խորութիւններ, ի՞նչ աստուածային շնորհներ նպաստած են շինելու այս կաղապարը:

էջ 400

Իր ջլատամանն Ուզ տաւոր է, քան Վլադիմիր Գրիգորի Կերոսը...

էջ 408

...Գողտր զգայութեան, համեմատ, ինքնաբաւ, հոգեղէնին լարուած ուժերու համադրում մը իբրեւ:

էջ 404

Կայ անշուշտ, Փրանսիացի իմ գրականութեան մէջ:

էջ 451

Քեանքիմ ժամուցքը որքան էլ անկատար ու տկար...

էջ 454

ՈՋ - ԸՆԹԱՑԻԿ ՎՐԷՊՆԵՐ ԵՒ «ԸՆԹԱՑԻԿ» ԲԱՆԵՐ

Անոնց մէջէն կատարել արդար գտումը, տալ արժանաւորին վարձքը ու ավարժէ՛ք արդիւնքն ալ թաղել պատմութեան փոշիին տակ,

«Համապատկեր», Ա. հատոր, էջ 2

Անոնց մէջէն կատարել արդար գտումը, տալ արժանաւորին իր վարձքը ու ավարժա՛ք արդիւնքն ալ թաղել պատմութեան փոշիին տակ,

Երեւանեան հրատարակութիւն, էջ 380

Մարդեր էին, իրարու ժամանակակից, շատ մը կէտերու մէջ իրարու ներհակ մտայնութիւններով, նկարագրի շեշտ հակադրութիւններով, բայց ունէին նոյն ատեն հասարակաց ալ հակումներ:

«Համապատկեր», Ա. հատոր, էջ 4

Մարդեր էին, իրարու ժամանակակից, շատ մը կէտերու մէջ իրարու ներհակ մտայնութիւններով, նկարագրի շեշտ հակադրութիւններով, բայց ունէին նոյն ատեն հասարակաց ալ հակումներ:

Երեւանեան հրատարակութիւն, էջ 382-383

...Որոնցմէ երկրորդին մէջ գմայլելի արուեստագէտ մը ինքն իր դըլ-խուն ժանր ասեղնագործութիւններու վրայ հազիւ քանի մը պուտ գոյն կը յաջողի կորդել ցեղային հոգիին միջիմէն:

«Համապատկեր», Ա. հատոր, էջ 11

...Որոնցմէ երկրորդին մէջ գմայլելի արուեստագէտ մը ինքն իր դըլ-խուն ժանր ստեղծագործութիւններու վրայ հազիւ քանի մը պուտ գոյն կը յաջողի կորդել ցեղային հոգիին մէջիմէն:

Երեւանեան հրատարակութիւն, էջ 390

Համոզուած եմ, որ այդ շրջանը ազգային ընդհանուր մշակույթի պատմութեան մէջ, խղճամբո՛ւ...

«Համապատկեր», Ա. հատոր, էջ 15

Համոզուած եմ իր այդ շրջանը ազգային ընդհանուր մշակույթին պատմութեան մէջ, խղճամբո՛ւ...

Երեւանեան հրատարակութիւն, էջ 392

...Բայց առաւելապէս ուղղուած են այն հասարակութեան, որ հազիւ թէ կ'այցելի գրելու փառասիրութենէն...

«Համապատկեր», Ա. հատոր, էջ 19

...Բայց առաւելապէս ուղղուած են այն հասարակութեան, որ հազիւ թէ կ'այցելուի գրելու փառասիրութենէն...

Երեւանեան հրատարակութիւն, էջ 396

Սփիւռքի մէջ մենք գիտենք, թէ որքան մեծ է թիւը այն մարդիկնե-րուն, որոնք ի վիճակի են եղած համեստ մատենադարան մը կազմելու, օտար ընտելապոյն հատորներու կողքին հայ լեզուով ալ բախտաւոր գիրքեր հիւրընկալող: Հերոսական է այս ըմտրամի՛ւն դուրս, կեցուածքը պարզ մար-դաց զարմեալ, քրոմէ կարելի չբի՛ւն օրինակի համար, Ամերիկայի մէջ, «Հայ-

բնիք» Խանդավազ Երանյան, լախյալիս մեծամասնությամբ մը բանադրմանը գոյատևող ընթերցողներու բանակ մը Խանդավազելով։ Ուրիշ խնդիր՝ այդ գրականութեամբ Ուրիշ, տեսակարար տարագրութիւնը։ Փետրը չի դադարիր փաստելով։ Սփիւռքի պայմաններու ծնունդ, ներկայ աշխատանքը իր տեղը կ'ուզէ այդ մատենադարաններէն ու այդ սիրտերէն ներս։

«Համապատկեր», Ա. Հատոր, էջ 19

Սփիւռքի մէջ մենք պիտենք, թէ որքան մեծ է թիւը այն մարդիկնեւրուն, որոնք ի վիճակի են եղած Համեստ մատենադարան մը կազմելու, օտար ընտելադասն Հատորներու կողքին հայ լեզուով ալ լատինատառ գիրքեր հիւրընկալող։ Սփիւռքի պայմաններու ծնունդ, ներկայ աշխատանքը իր տեղը կ'ուզէ այդ մատենադարաններէն ու այդ սիրտերէն ներս։

Երեւանեան հրատարակութիւն, էջ 396

Իր մէկ գործը, զոր կ'որակէ «Վիպասանութիւն», արդիւնք «Համբալ տիրոջ» (Իրն են բառերը), աշակերտական ոտանաւոր մը չէ մինակ, այլ նաեւ փաստ մը...

«Սիւն», 1945, էջ 15

Իր մէկ գործը, զոր կ'որակէ «Վիպասանութիւն», արդիւնք «Համբալ տիրոջ» (Իրն են բառերը), աշակերտական ոտանաւոր մը չէ մինակ, այլ նաեւ փաստ մը...

Երեւանեան հրատարակութիւն, էջ 398

Ինչպէս նաեւ իր ժամանակուան կրօնական մեծ կարգերու հիմնադիրներու (Դավիթիկեան, Եւայլմ) նկարագիրը։

«Սիւն», 1945, էջ 17

Ինչպէս նաեւ իր ժամանակուան մեծ կարգերու հիմնադիրներու նկարագիրը։

Երեւանեան հրատարակութիւն, էջ 400

Անոնց մէջ կայ մեր միջին դարը, մեր գերութիւնը, մեր անմահ երազանքը, մեր հայութիւնը, արեւելեան քաղցրութիւնը ու ինչ որ այս ժողովուրդը ազատեց է՝ իր հոգեղէն անհուն պայծառութիւնը։

«Սիւն», 1945, էջ 53

Անոնց մէջ կայ մեր միջին դարը, մեր գերութիւնը, մեր անմահ երազանքը, մեր հայութիւնը, արեւելեան քաղցրութիւնը ու ինչ որ ժողովուրդը ազատեց է՝ իր հոգեղէն անհուն պայծառութիւնը։

Երեւանեան հրատարակութիւն, էջ 401

...Ու մեր լեռներուն, մեր դաշտերուն մեզմօտ, մեզմէ բխող հրապոյրը, մեր տրամութիւնը, մեր խորունկ շէնութիւնը, մեր գլխաւորեալ ամբողջ սարուածը...

«Սիւն», 1945, էջ 45

...Ու մեր լեռներուն, մեր դաշտերուն մեզմօտ, մեզմէ բխող հրապոյրը, մեր տրամութիւնը, մեր խորունկ շէնութիւնը մեր մէջ, սեր գլխաւորեալ ամբողջ սարուածը...

Երեւանեան հրատարակութիւն, էջ 402

Իրերեւ ծաւալ գրեթէ կը մնայ եզակի, եթէ նկատի չունենանք...

«Սիւն», 1945, էջ 150

Իրերեւ ծաւալ կը մնայ եզակի, եթէ նկատի չունենանք...

Երեւանեան հրատարակութիւն, էջ 403

Տուի թիւը իր ոստանաւորներուն, 15000 տող, որոնց վրայ երբ...

«Սիռն», 1945, էջ 150

Իր ոստանաւորներուն թիւը 15.000-էն անլի է, որոնց վրայ երբ...

Երեսման հրատարակութիւն, էջ 403

Կրնան անոնք բարձրաթոիշ, վսեմաճաճանշ, շատ ներամաղ արժա-
նիքներ չունենալ,

«Սիռն», 1945, էջ 152

Կրնան անոնք բարձրաթոիշ, վսեմաճաճանշ, շատ ներամաղ արժէքներ
չունենալ,

Երեսման հրատարակութիւն, էջ 405

Արդարեւ, ուր այս ժողովուրդը ինքզինքը ամէնէն լայն կերպով ար-
տայայտուած գիտէ, եթէ ոչ «Առաւօտ լուսոյ»ի մէջ, «Ի բէմ հայցեմք»ի մէջ,
«Նարահարաշ»ի մէջ, «Այսօր ամիսաշ»ի մէջ...

«Սիռն», 1945, էջ 158

Արդարեւ, ուր այս ժողովուրդը ինքզինքը ամէնէն լայն կերպով
արտայայտուած գիտէ, եթէ ոչ «Առաւօտ լուսոյ»ի մէջ, «Ի բէմ հայցեմք»ի
մէջ, «Այսօր ամիսաշ»ի մէջ...

Երեսման հրատարակութիւն, էջ 405

...Բայց կենդանի, բայց պատահական բաներուն զուսպ թրաժիգովը:

«Համապատկեր», Բ. Հատոր, էջ 371

...Բայց կենդանի, բայց պատահական բաներուն զուսպ թրաժիգովը:

Երեսման հրատարակութիւն, էջ 408

Ո՞վ է ստեղծած բառին ու պատկերին, զգացումին ու ասոր շղարշին
(մերեցէ՛ք այս բառին. իմ պատանութիւնը հերքական ու հերետիկա՛ն միաց-
մանը մէջ մեծցաւ Սիպիլին, Զօյանեանին, Մալեգեանին եւ... Եղաւարդ Գօ-
լանեանին, ու ասոնք հոս ըսելու անկեղծութիւնը չեմ սկսեցօծել ոչ մէկ յե-
տին մտքով), ցաւին ու անոր բոցին, երազին եւ ասոր շապիկին, սա տարօ-
րինակ, միշտ կ'ըսեմ՝ անկարելի դաշնութիւնը, սիրանքը, սա անտիպ ու
վերջական հրաշքը:

«Համապատկեր», Բ. Հատոր, էջ 375

Ո՞վ է ստեղծած բառին ու պատկերին, զգացումին ու ասոր շղարշին,
ցաւին ու անոր բոցին, երազին եւ ասոր շապիկին սա տարօրինակ, միշտ կ'ը-
սեմ՝ անկարելի դաշնութիւնը, սիրանքը, սա անտիպ ու վերջական հրաշքը:

Երեսման հրատարակութիւն, էջ 408

Ու այս ամէնը իրենց եղբրական իմաստին կը բարձրանան, երբ այդ
տղուն շուրջը գիտենք կարաւանը մարդոց, անոնք ալ պակասաւոր, մեծափառ,
եզակի, անհուն քերթողներ, որոնք...

«Համապատկեր», Բ. Հատոր, էջ 376

Ու այս ամէնը իրենց եղբրական իմաստին կը բարձրանան, երբ այդ
տղուն շուրջը գիտենք կարաւանը մարդոց, անոնք ալ պակասաւոր, մեծա-
փառ, եզակի, անհուն քերթողներ, որոնք...

Երեսման հրատարակութիւն, էջ 409

ՊԵՏՈՐԱԾ ԱՆՔԻՒՐԸ

Անոր փայփայանքը կ'իշխայ մեծութիւններում եւ փառաբանումներում վրայ: Մարդերը կը խեղճանան այդ նուագէն ու ջութերը կը խենթանան անոր թրթռումէն:

«Խորհուրդներու մեհեանք», էջ 102

Անոր փայփայանքը կ'իշխայ մեծութիւններում այդ նուագէն ու ջութերը կը խենթանան անոր թրթռումէն:

Երեւանի քաղաքապետութիւն, էջ 286

Դուք ցացիր. ան ալ գնաց:

«Խորհուրդներու մեհեանք», էջ 102

Դուք ցացիր. ան ալ գնաց:

Երեւանի քաղաքապետութիւն, էջ 287

Դուք տեսար, թէ ինչպէս մաղերուն արեւին տակը անոր երեսները պառկեալ են, ինչպէս խմելու անոր խոզիկն, անմահ ու մահաբեր կաթիլի մը նման...

«Խորհուրդներու մեհեանք», էջ 102

Դուք տեսար, թէ ինչպէս մաղերուն արեւին տակը անոր երեսները պառկեալ են, ինչպէս խմելու անոր խոզիկն, անմահ ու մահաբեր կաթիլի մը նման...

Երեւանի քաղաքապետութիւն, էջ 287

Ձեռն աւարտած խորհուրդը օրհնուած ջութերուն: Պատարագն ունիմ ղեռ կարելի բոլոր սրբութիւններուն...

«Խորհուրդներու մեհեանք», էջ 103

Ձեռն աւարտած խորհուրդը օրհնուած ջութերուն: Պատարագն ունիմ ղեռ կարելի բոլոր սրբութիւններուն...

Երեւանի քաղաքապետութիւն, էջ 287-288

Դուք վերցուր զիս այս հղիւրդութեանց համդէպն. դուք պաշտպանէ զիս մըրիկէն, քրտն երկու քերտն ալ կարմիր են, արիւնով աւ հրդեհով: Ձի դուք կը զանգնաս հրաքայտները: Անոնց քոթիմ քեզի պէտ բարի քերտն պակաս չեղան:

Եկուր ինծի նուիրական աւագան, եկուր՝ քու բերեղիդ հաւատքովը ու քու նուագիդ յոյսովը:

«Խորհուրդներու մեհեանք», էջ 103

Դուք վերցուր ինձի նուիրական աւագան, եկուր՝ քու բերեղիդ հաւատքովը ու քու նուագիդ յոյսովը:

Երեւանի քաղաքապետութիւն, էջ 288

Ինծի՛, իմ աղբւրս, ինծի՛ նորէն: Ու մէկը կ'ընկերանայ ինծի քերտն մարէն, քու հայելիդ վրայ:

«Խորհուրդներու մեհեանք», էջ 103

Ինձի՛, իմ աղբւրս, ինձի՛ նորէն, քու հայելիդ վրայ:

Երեւանի քաղաքապետութիւն, էջ 288

Սորվեցուր անոր քու դերդ, քու բարձրագոյն դերդ, երբ կ'անցնիս կանանչ ծղօտի մը անջնէն գողալով ու սիրելով:

«Խորհուրդներու մեհեանք», էջ 104

Սորվեցուր կանանչ ծղօտի մը անջնէն գողալով ու սիրելով:

Երեւանի քաղաքապետութիւն, էջ 288

ԵՒ ԽՈՂԽՈՂՈՒԱԾ «ՇԱՀՊԱԶ»

- Կան ալ, որ յաջողութեամբ յոյսին կը նային, գողտուկ ու ներսէն :
«Խոնարհները», էջ 289
- Կան ալ, որ յաջողութեամբ յոյսին կը նային, գողտուկ ու ներսէն :
Երեւանեան հրատարակութիւն, էջ 292
- Ե՛ս գիտեմ : Որեւէ կապ չկայ այս բառերուն ու քահանային քա-
րողին մէջ :
«Խոնարհները», էջ 290
- Ե՛ս գիտեմ : Որեւէ բառ չկայ այս բառերուն ու քահանային քա-
րողին մէջ :
Երեւանեան հրատարակութիւն, էջ 293
- Պատկերը նորէն տարաւ զինքը գիշերին :
«Խոնարհները», էջ 294
- Պատուէրը ճորէն տարաւ զինքը գիշերին :
Երեւանեան հրատարակութիւն, էջ 298
- Քիչ-քիչ գիշերուան յամառ զգայութիւնները անցան երկրորդ գիծի :
«Խոնարհները», էջ 296
- Քիչ-քիչ գիշերուան... զգայութիւնները անցան երկրորդ գիծի :
Երեւանեան հրատարակութիւն, էջ 300
- ...Ատեն չէ գտած յայտնելու, հոս սղտիկ բերանէ մը ու քանի մը
զովքերէ՝ կը տրուի ամէնուն հասողութեամբ :
«Խոնարհները», էջ 300
- ...Ատեն չէ գտած յայտնելու, հոս սղտիկ բերանէ մը ու քանի մը
զովքերէ՝ կը տրուի ամէնուն հոկողութեամբ :
Երեւանեան հրատարակութիւն, էջ 304
- Ու անուններ, ու տառապանքներ, ու զրկանքներ, ու երջանկութիւն
ու սէր :
«Խոնարհները», էջ 300
- Ու անուններ, ու տառապանքներ, ու զրկանքներ, ու երջանկութիւն
ու սէր :
Երեւանեան հրատարակութիւն, էջ 304
- Քիչ խօսեցաւ հարսին հետ, որ արտակարգ զգայութեամբ պատանի
մըն էր...
«Խոնարհները», էջ 303
- Քիչ խօսեցաւ հարսին հետ, որ արտակարգ զգայութեամբ պատանի
մըն էր...
Երեւանեան հրատարակութիւն, էջ 307
- Ու լեզուին վրայ լեզի բանի մը տարտամ հետքը, որ կը փախչէր ա-
ռաջին ջուրին :
«Խոնարհները», էջ 303
- Ու լեզուին վրայ լեզի բանի մը տարտամ հետքը, որ կը փախչէր ա-
ռաջին ջուրին :
Երեւանեան հրատարակութիւն, էջ 308

Օր մը, չեմ գիտեր ինչպէս տուն մտաւ պզտիկ հազ մը...

«Խոնարհները», էջ 303

Օր մը, չեմ գիտեր ինչպէս ներս մտաւ պզտիկ հազ մը...

Երեսնեան հրատարակութիւն, էջ 308

Շահագործ ծունկի է, գլուխը նայած կողմին:

«Խոնարհները», էջ 308

Շահագործ ծունկի է,...

Երեսնեան հրատարակութիւն, էջ 313

Կոնակին՝ բարձ: Աչքերուն՝ արիւն դոյն պայծառութիւն:

«Խոնարհները», էջ 308

Կոնակին բարձ: Աչքերուն՝ արեամ դոյն պայծառութիւն:

Երեսնեան հրատարակութիւն, էջ 313

...իւր հպարտութիւնը, դահլիճիւն՝ մեր յիմար, մեր խղճալի ծանա-
րամտութեան վրայ:

«Խոնարհները», էջ 315

...իւր հպարտութիւնը, դահլիճիւն՝ մեր յիմար, մեր խղճալի ման-
րամտութեան վրայ:

Երեսնեան հրատարակութիւն, էջ 321

Ու անոր հագարով դիմայիդումները զաղտնիք չունէին:

«Խոնարհները», էջ 316

Ու անոր հագարաւոր դիմայիդումները զաղտնիք չունէին:

Երեսնեան հրատարակութիւն, էջ 322

Ու եթէ երեւոյթներուն տիրապետումը դուրս էր իր հասողութենէն,
անոնց ազդեցութիւնն ալ տեղոյն էր բաւական...

«Խոնարհները», էջ 318

Ու եթէ երեւոյթներուն տիրապետումը դուրս էր իր հսկողութենէն,
անոնց ազդեցութիւնն ալ տեղոյն էր բաւական...

Երեսնեան հրատարակութիւն, էջ 324

Արեւը կը փռուէր վրան գեղին շղարշի մը պէս, որուն յատակը սեւ
նետած ըլլար:

«Խոնարհները», էջ 319

Արեւը կը փռուէր վրան գեղին շղարշի մը պէս, որուն յատակը սեւ
նետած ըլլար:

Երեսնեան հրատարակութիւն, էջ 325

Պահապանին հասակը ազատած էր բարտիներէն:

«Խոնարհները», էջ 320

Պահապանին հասակը ազատ էր բարտիներէն:

Երեսնեան հրատարակութիւն, էջ 326

Մէկէն կոկորդէն դուրս եկաւ հագորդը, այնքան ճիւղով, որ լերան տա-
կէն կը բարձրանար:

«Խոնարհները», էջ 321

Մէկէն կոկորդէն դուրս եկաւ հագորդը, այնքան ճիւղով, որ ասես լե-
րան տակէն կը բարձրանար:

Երեսնեան հրատարակութիւն, էջ 328

Ու անոնց վիզերուն անհամար աղեղներէմ հինայուած ու սուր կը-
տուցներուն կը նայէր, երբ...

«Խոնարհները», էջ 327

Ու անոնց վիզերուն անհամար աղեղներուն, հինայուած ու սուր կը-
տուցներուն կը նայէր, երբ...

Երեսմեամ հրատարակութիւն, էջ 335

Ու անոր հովը դարձեալ, մաղբերուն համաշափ աղեղէն, որ ճակատը
կը բանայ ու դանկը կը կամարէ:

«Խոնարհները», էջ 337

Ու անոր հովը դարձեալ, մաղբերուն համաշափ աղեղէն, որ ճակատը
կը բանայ ու դանկը կը վարէ:

Երեսմեամ հրատարակութիւն, էջ 344

Անոր մարմինէն չէր պակսած տակաւին այն հովը, որ էրիկ մարգերը
կ'ունենան միմէն իրենց սեռական բնազդներուն շփումը:

«Խոնարհները», էջ 342

Անոր մարմինէն չէր պակսած տակաւին այն հովը, որ էրիկ մարգերը
կ'ունենան միմէն իրենց սեռական բնազդներուն շփումը:

Երեսմեամ հրատարակութիւն, էջ 350

Գեղին մէջ երեսոյթները այնքան կանգնուի կը յաջորդեն իրարու,
որ...

«Խոնարհները», էջ 343

Գեղին մէջ երեսոյթները այնքան կանգնուոր կը յաջորդեն իրարու,
որ...

Երեսմեամ հրատարակութիւն, էջ 351

Իր ձեռքերը կը տաշէին փայտի կտոր մը, բայց իր ներսը կնոջ պատ-
կերը կը պաշտուէր:

«Խոնարհները», էջ 347

Իր ձեռքերը կը տաշէին փայտի կտոր մը, բայց իր ներսը կնոջ պատ-
կերը կը պաշտպանէր:

Երեսմեամ հրատարակութիւն, էջ 356

Ու մինչեւ լուս, անիկա աչքին առջեւը պահեց աղքատիկ աղջկան այդ
պատկերը:

«Խոնարհները», էջ 348

Ու մինչեւ լոյս, անիկա աչքին առջեւը պահեց աղքատիկ աղջկան այդ
պատկերը:

Երեսմեամ հրատարակութիւն, էջ 357

Երբեմն բառերը հնչումին հակառակը պատմեցին:

«Խոնարհները», էջ 357

...Բառերը հնչումին հակառակը պատմեցին:

Երեսմեամ հրատարակութիւն, էջ 367

Կամացուկ մը բռնեց քնէն, ճիշդ այնպէս, ինչպէս ըրած էր Շողիկ
դիւերը:

«Խոնարհները», էջ 363

Կամացուկ մը բռնեց քնէն, ճիշդ այնպէս, ինչպէս ըրած էր Շողիկ
դիւերը:

Երեսմեամ հրատարակութիւն, էջ 373

«Դամիլի վարուժամ» մենագրության մէջ կատարուած բազմադէմ նախնիքին ու նախորդ էջերուն արուած նորնաման նմոշներուն գումարը ամբողջութիւնը չի հերկայացներ Օշականի երեւանեան հատորին մէջ թոյլ տրուած զաղափարական ու լեզուական աղաւաղումներուն, այնուամենայնիւ, մատնանշումները բաւարար պատկերացում մը կու տան տխուր երեւոյթին մասին:

Բայց ասիկա Օշականի հրատարակե՞լ եղաւ չիմա:

Բայց Երեւանի հրատարակչական մաքսատուններուն մէջ միայն Օշականին վիճակուած բախտ եղաւ այս դժբախտութիւնը:

«Բազմն»ի ընթերցողները արդէն գիտեն, որ կոստան Ջարեանի «Նաւուն փոխարէն» իր քովանդակութենէն կիսովին պարպուած ու գրեթէ սեռափոխուած գործ մը տրուեցաւ Հայաստանի մարդուն ձեռքը:

Շահան Շահնուրի «Նախամըշ» իր ուժական մասերէն դրկելէ ետք:

Վահան Թէքեանը՝ լեզուի ու իմաստի հարիւրաւոր խախտումներով:

Շարքին մէջ կան եւ ուրիշներ, բայց չխօսինք ուրիշներու մասին, կանգ առնենք հոս ու յիշենք կրկին՝

Օշական, Ջարեան, Շահնուր, Թէքեան:

Մենք չենք գիտեր, թէ նման կարկառուն գէմքերուն զաղափարական աշխարհին, հայեացքներուն, յղացումներուն, արժեքափերուն, բառին ու արձեւտին հանդէպ յարգանք չունեցող մարդերը, սոցադրական գործերու այս վարիշները, խմբագիրները, օրագրիչները, պիտի ըսէինք՝ ստալինականութիւնը շարունակող այս նոր ստալինականները ինչպէ՞ս կ'ակնկալեն, որ ուրիշները յարգանք ունենան իրենց հանդէպ, երբ կը ժպտին այսպէս որակը բառակի վերածել ու աղանատել նուիրական հասկացողութիւնները:

Ջարենց կ'ըսէ.

Դու Եկատին* ևս, որ շատ անգամ

Մի ենչիւմ, մի յամգ, մի մեւոցի,

Անգամ մի ասումամ, անգամ մի յամգ

Երգդ փոխում է անկարծ անկամ կարօտի:

Կամ դաւաճում շնչոյն, կամ ուրիշներ, կամ քառեր:

Ջարենցէն առաջ Օշականի գիտէր արուեստի այդ օրէնքը ու կը կիրարկէր անդամանը, ու կ'ուսուցանէր անդամանը, գաւաճան շնչոյն, կըշռոյթներէ, բառերէ, հնչիւններէ գերծ մնալու համար երկրորդ, երրորդ, հինգերորդ, ութերորդ անգամ կը գրէր նոյն էջը, մինչ ահա, հայրենիքի մէջ, ուրիշներ կը գաւաճեն իր անդամանին, յայտնարեւած իրաւին, հեռանկարային թափանցումներուն, կեցութեան՝ յաղաւելով, յարգարելով, առաւաղելով:

Ու զարմանալին այն է, որ այս նոյն մարդերը, մեր զրականութիւնը խողովող այս նորատեսակ զահիճները լորձնաշուրթն փառաբանանքին կ'արժանանան ազատութեան մէջ բարբառող արտասահմանի ձայնափողներուն եւ կը վայելին լուռ մեղսակցութիւնը այն միւսներուն, որոնք կը շնչեն՝ սկրզբունքի վերածած:

Ճորտին վայել յայտնաթիւնը,

Թէ ոսկի է լուսթիւնը:

Երանի՜ թէ յիսուն տարի եւս շրտարակէին Օշականը, շարունակէին հայժոյճի Օշականին, շարունակէին հայրենիքի դաւաճան հռչակել գիշը: Այո՛, Օշականը հայրենիքի դաւաճան հռչակելու անհեթեթութիւնը աւելի հանգուրժելի էր, քան Օշականին դաւաճանելու այս սրբապիղծ իրականութիւնը:

ԿԱԳԻՆԻ 1981 Ի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

ՀԵՂԻՆԱԿ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻՒ
Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Թ Ի Ւ Ն		
Վ. ԴԱԻԹԵԱՆ	Ո՛ւր ես գնում	1
Վ. ԹԵՔԵԱՆ-ՓԱՆՈՍԵԱՆ	Եղերեբ	1
» »	Մոխիրէ ծառ	8
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Հագնեանցիտ	1
» »	Ականեալ ձայներ արեան յիշողութեմէն	4
» »	Եփրատ	7
Մ. ՀԱՃԵԱՆ	Կապոյտ երգ	2
» »	Երգը, որ կը դողար իր մէջ	6
» »	Ապստամբ	6
» »	Փաղաճացիմ	6
» »	Ահա թէ ո՛վ եմք	11
Ա. ՃԻՒՂԵԱՆ	Արիւն	2
» »	Լոյս-ձայն-ձեւ-գոյն	5
» »	Asteroids	8
» »	Ցաւը	8
» »	Մուշրակ	8
» »	Դեռահի աղբահաւաք	10
Շ. ՔԷՕՐՕՂԼԵԱՆ	Մեմք՝ քառեր	2
Պ. ՀԵՐԵԱՆ	Անտառու	8
» »	Օղակին մէջ	7
» »	Թախծու շուրջպար հարսանեկան	11
Փ. ՃԵՐԱՆԵԱՆ	Սողոմ Բաղաճի մէջ	4
» »	Արցունքներ	4
» »	Օրօր իշխալիմ	9
Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ	Խամանիկը ամձրեւիմ տակ	5
» »	Ծիածանի տունկերը	5
» »	Մայրուղի	5
Շ. ՓԵԿԻ	Գիշերը (Քարգմ. Մ. Իշխան)	5
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Աստանդական կարօտով	6
» »	Վերայառնում	6
» »	Հագիններու վաղամեռ	6
» »	Դարպասներուն անցեալիդ	11

Հեղինակ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻԻ
Կ. ՇԱՀԻՆԵԱՆ	Հնչեակ ամվերդ գուգադարի	7
» »	Սովորական առանձնութիւն	7
ԵՂ. ՊՕՅԱՃԵԱՆ	Մարդը մարէն	7
Գ. ԹԵՄԻՋԵԱՆ	Շարժում թիւ 1	8
Պ. Շ. ՍԱՅԵԱՊ	Գետը եւ մահը	10
Ա. ՌԻ. ՊԱՅԵԱԹԻ	Կը ծնիւմ... եւ կ'այրիւմ իմ սիրով	10
Պ. ՀԱՅՏԱՐԻ	Երկու դէմքեր	10
Գ. ՊՐԼՏԵԱՆ	Ապստամբ	12

Ա Ր Զ Ա Կ

Մ. ԳԱԼՇՈՅԵԱՆ	Զարի Միլոն	1
Կ. ԱՐՄԵՆԵԱՆ	Սիւտ դուռը	2
Ա. ԱՔԵԼԵԱՆ	Պանդակ	2
Ս. ԽԱՆՁԱԴԵԱՆ	Վարդ Մաշտոցի	3
Ն. ԳԻՄԱՔՍԵԱՆ	Մասանկո	3
» »	Հայ անհատ	7
» »	Մահուամ քաղամբ	11
Ժ. Խ. ԺՊՐԱՆ	Մարգարէն (Խայացուց՝ Եր. Տ. Գարանեան)	3
» »	» »	4
» »	» »	5
» »	» »	6
» »	» »	7
» »	» »	8
Վ. ՕՇԱԿԱՆ	Փախստականը	4
Մ. ՊԶԱԲՃԵԱՆ	«L'Impression»	4
» »	17. 39ի շոգեկառքը	11
Ր. ԲԵՊԱՊՃԵԱՆ	Ցուլացումներ	5
» »	Այցելութիւնը	8
Գ. ԱՃԵՄԵԱՆ	Երբ	6
ՇԱՀԱՆԳՈՒԽՏ	Պատերազմը... աղջիկները... հայրերը	6
» »	Տղամուտ սենեակի մը հանգիստումը	10
Ն. ՏԵՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ	Վերադարձ թռուցիկը	7
Մ. ՀԱՃԵԱՆ	Բանդագուշամբ	8
Ն. ՊԵՇԵԿՈՒՇԵԱՆ	Գարբիէլ Գարբիէլեան կը պատմէ դերասան Շարունիի մասին	9
Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ	Յասմիկ	9
ՌՈՒՐԵՆ	Գեալշօ Մանուկ	9
Հ. ԶԱՐԴԱՐԵԱՆ	Պուէտը	10
Ա. ԳԱՐԻԲԵԼԵԱՆ	Այցելուս	10
» »	Իմ աւ քաղիմ	10
Պ. ՍՆԱՊԵԱՆ	Միջնաբար	10
Զ. ՈՐԲՈՒՆԻ	Երբ գնացմանը կ'աշտան	12

Հեղինակ	Խորագիր	Թիտ
---------	---------	-----

Թ Ա Տ Ե Ր Գ Ո Ի Թ Ի Ի Ն

Հեղինակ	Դեպի պրոպետ գրականություն հեղինակում	2
»	Հոգու գաղափար	5
»	»	6
»	»	7
»	»	8
Փ. Վեպիկ	Իրիկուն (հայացուց՝ Տ. Անեման)	10

Յ Ո Ւ Շ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն – Վ Կ Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

Պ. Մեղակ	Հեղական յուշեր	1
Մ. Ս. Հեղական	Մանկ եւ քաղաք	1
Հ. ՍԱՀԱՆ	Քարից բխած տաղանդ	1
Մ. ՍԱՐԳՍՅԱՆ	Նա իր ժողովրդին	1
Պ. Ջեթթուր	Կարսի խորություն	1
Ա. ՍԱՀԱՆ	Ջարթի՛ր, լաօ	1
Գ. ԱՅԵՄԵՆ	Իրաւունք չունիս, Մուշեղ	1
Դ. ՅՈՒՀԱՆՅԱՆ	Հէ՛յ, Մուշեղ	1
Մ. ՏԵՐ ԳՈՒԼԱՆՅԱՆ	Ո՛ր կ'երթաս, կռուի	1
ՀՐ. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ	Իր երկրի գաղափար	4
Վ. ԲԱԼԱՅԱՆ	Ջարթի՛ր, լաօ, մընիմ ինքի	4
Մ. ԻՇԽԱՆ	Լեռն Շանթի կեանք	11
»	»	12

Ի Մ Ա Յ Ա Կ Ա Ն Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ

»	Վերջին գրքեր	1
Ն. ԱՂԱԿԱՆ	Դիմանկարի էսքիզ	1
Ն. ԳԻՄԱՔՍՅԱՆ	Քաղաքացի՛մ՝ Մուշեղ Գալշեյանի մէջ	1
»	Աշխատանք եւ հաճոյք	5
»	Կեղծ արուեստի մասին	9
»	Գրականությունը Հայաստանի մէջ	10
Յ. ԿԱՐԱՊԵՆՅԱՆ	Մթին ձորի լուսէ մարդը	1
Վ. ՕՇԵԿԱՆ	Մուշեղ Գալշեյանի արուեստը	1
Ա. ԹՈՓՉԱՆ	Մարդու ներկայությունը չափանիշը	1
Յ. ՊԵՐՊԵՆՅԱՆ	Միայնակ ծառը	1
»	Մատի՛կ՝ Որդունի գրականություններն ենք	2
»	»	3

Հեղինակ	Խորագիր	Թիի
» »	Թարգմանական ասանդր	7
» »	Ա. Դաւթեանի «Որբանուհի եւ հրազները»	8
» »	Զորայր Խալափեանի «Մեռնող-յառնող»ը	11
» »	» » » »	12
Մ. ԳԱԼՇՈՅԵԱՆ	Բարբիտե ծաղիկ արանդը	1
» »	Սկզբունք եւ եղանակ	4
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	«Մաղկած զարհր»	1
» »	Հ. Մարտիրոսեանի «Ես ու դու»ը	9
ԵՐ. Տ. ԳԱՐԱՅԵԱՆ	Ժպտան Խալիլ Ժպտանի «Մարդարէն»	2
Լ. ՄԿՐՏՁԵԱՆ	Ալեքսանդր Զինովի	
» »	վերջին գրքի առթիւ	2
» »	Խնչ է մտածում Ալեքսանդր Սալմեիցիները իր գրքերի մասին	8
Ա. ԶԻՆՈՎԵԻ	Վերջապահ	2
Ս. ԿԻՐԱՆՈՍԵԱՆ	Զրոյց Վահէ Քաչայի հետ	2
» »	Մ. Իշխանի «Թատերադրութիւն»ը	6
» »	Իրաւեան արդի բանաստեղծութիւնը	10
» »	Բանաստեղծներու ըմբոստ սերունդը եւ իր բիրեղեայ ձայնը	12
Ն. ԶԱՐԻՆՈՏԵԱՆ	Արդի գրականութեան դիմագիծը եւ տագնապը	3
» »	» » » »	5
» »	» » » »	8
» »	» » » »	11
Մ. Ս. ՀԵՐԿԵԼԵԱՆ	Թուրքի Նախնայ Կամ «Շարժում» հանդիպարութեան հիմնադիրը	3
» »	Գեղանկարիչ «Մարգարէն»	5
» »	Արշիլ Կորի Ատոյեան	8
Ս. ՍԱՆԻՆԵԱՆ	Դանիէլ Գեֆօ-Ռոքինզոն Կարօ	3
» »	Գրքի վերադարձը	4
Յ. ՔԻՐԻՔՃԵԱՆ	Թիւրքի ու քերթի՝ այսօր	3
Է. ՅԱՎՀԱՆՆԻՍԵԱՆ	Փառաբանեանք եւ նրա արտօնութիւնը	3
» »	Վասիլի Ալեքսանովը	6
ՍՏ. ԹՈՓՁԵԱՆ	Կապույտ աշխարհ	4
Շ. ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ	Զապէլ Եսայեանի «Արդի»ը	4
» »	«Մարտի տուն»	9
Ա. ՏԵՐ ՄԻՆԱՍԵԱՆ	Հայ յեղափոխական շարժումը 1890էն 1903	5
» »	(Հայացուց՝ Յ. Քիւրճեան)	
» »	» » » »	6
» »	» » » »	7
» »	Տեղեկագրի նախը	8
» »	» »	9
» »	» »	10
» »	» »	11
» »	» »	12
Ա. ԺՂԱՆՈՎ	Զեկայց	5
Օ. ՍԱՆԱՀԻՆԵԱՆ	Զոչչեկոն՝ մարտնչող ու քնարական	5

Հեղինակ	Խորհուրդ	Թիտ
Վ. ԱՔՍԻՈՆՈՎ	Թե ինչպե՞ս մարդիկ «Արտածման ապրանք կը դառնան» Խորհրդային Միության մեջ	6
Կ. ՄՈՒՐԱՏԵԱՆ	Նամակ՝ Րիչըրտ Մարեֆ հրատարակչության	6
Բ. ՀԻԻՃՍ	Դառն Աֆիլեյի յաղթանակը	6
Ն. ՏԵՐ ՍԱՐԳՍԵԱՆ	«Երկու սերունդ»	6
Վ. ՔԻՆՈՑԵԱՆ	Բանաստեղծությունը իբրև սրբազան առանձին բարգավաճական հայ բանաստեղծությունը	7
Ա. ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ	Սարգսյան մարդը «Հանդիպումներ Ռուբենի Սարգսյանի հետ» հատորին ընդմեջին դիտում	7
» » »	Թ. Թաքանյանի «Գրքեր որդիական»	8
» » »	«Մարտիկայ սարի ամպերը»	9
» » »	«Օթրանայի տեղեկագիրը»	8
» » »	» »	9
» » »	» »	10
» » »	» »	11
» » »	» »	12
Կ. ԱՂԱԲԵՆԱՆ	ժամանակակից հերոսի արձանագրություն	9
Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ	Հատուկ՝ Վ. Պետրոսյանի գեղարվեստ	9
Կ. ՇԱՀԻՆԵԱՆ	Զ. Մելիքանյանի «Բանաստեղծություն»	9
» »	Պերսոնալ Պրեյսի դիտարկումները բարձրագույն ըմբռնում	12
ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ	Եզմիկ կը դառնա Օգոստոսի մեջ	10
» » »	Հայ գիրքը՝ տաղանդը հայուն	11
Բ. ՏԵՐ ՊՈՓԼԱՆ	Փոյ Վիպարի «Երկունք»	10
» » »	Երկու խոսք	10

Խ Մ Բ Ա Գ Ի Ա Կ Ա Ն Ն Ո Ր Ե Ր

Թիտ՝ 1, 2, 3, 4, 5, 6, 8, 9

Ն Շ Մ Ա Ր Ն Ե Ր

Թիտ՝ 2, 4, 5, 6, 9, 11, 12

Մ Շ Ա Կ Ո Ւ Թ Ա Ց Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Թիտ՝ 2, 3, 5, 6, 7, 8, 11

digitised by A.R.A.R.@

● «Բաղին»ի խմբագրության տրամադրության ստեղծվելը գտնուի Յ. Օշակյանի անտիպ վեպերէն «Սահակ Պարզեւեան»ի ձեռագիրը, շուրջ չորս հարիւր էջ, որուն հրատարակութեան պիտի սկսիմք մեր յաջորդ տարւան առաջին թիւով: Ետագրութեան մը մէկ երրորդին իրագործումն է «Սահակ Պարզեւեան»ը, սը իբրեւ հերոս ունի Արւեստագէտ սերունդէն գրագէտ մը, որուն մտածումներուն, ապրումներուն, յարաբերութիւններուն, քնիչքներուն ու անկումներուն հետ Օշակյանի գրականութեան մէջ կը բացուի մոր աշխարհ մը — Բաղինը՝ իր բազմապիսի երեսներով, բարդութիւններով, լայնքով, մութերով:

«Սահակ Պարզեւեան»ի ձեռագիրը մեզի տրամադրուած է Կիւիկիոյ կաթողիկոսութեան կողմէ:

● 1981ը մահուան 40ամեակն էր վազգէն Շաշանեանի, իսկ 1983ը՝ ծննդեան 80ամեակը: Միաժամանակ ծննդեան եւ մահուան առիթներով քարմացնելու համար եղեռնաբախտ զոհուած յիշատակն ու կտակած գրականութեան հմայքը, «Բաղին»ի խմբագրութիւնը որոշած է երկու այս քուակամներուն միջեւ ինկող տարին (1982) ամոր մուրեւ բացառիկ թիւ մը, որ յայտ պիտի տեսնէ Յուլիան: Առ այդ արդէն կատարուած են սրտ աշխատանքներ ու կը շարունակուին մեր պրպտումներն ու յարաբերութիւնները՝ ի խնդիր հնարաւոր լաւագոյնին:

● Յաջորդ տարւան համար սպաւտված ենք աշխատակցութիւնը աւագ եւ միջին սերունդէն շուրջ տասը դէմքերու, որոնց ստեղծագործական ու վերլուծական գրութիւններուն կողքին միշտ իրենց ստորագրութիւնը պիտի ունենան «Բաղին»ի մէջ կազմուարուած ծանօթ երիտասարդները:

● Մեր հետագայ թիւերէն մէկուն մէջ, ու լայն տարածքի մը վրայ, մանրամասն քննութեան պիտի ենթարկուի Լեւոն Զաւէն Սիրմէլեանի «Ձեզ եմ գիտում, տիկիներ եւ պարոններ» հատորին երեսներն երատարակութիւնը:

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵՐԻՆ

ԼԻՐԱՆԱՆ	50 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	27 ՏՈՂԱՐ
ՀԱՏԱՎԱՋԱՌ	5 Լ. ՈՍԿԻ

بَاكِينُ

مجلة شهرية، أدبية وفنية علمية
المدير المسؤول
السيد أرثين كارنيك قراغبيان

•

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•

ԲԱԿԻՆ

ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Խմբագիր
ԳՐԱՄԱՍԻՍԻԱՆ

Խմբագրության տնօրենը
ՅԱՐՈՒՆԻՅԱՆ ԳՐԱԳԻՐԵԱՆ
ԱՄՍԳԻՍ ԿՈՐԵՍՊՈՆԵՆՏ

B. P. 11 - 8404 - Beyrouth - LIBAN
Tel. 296898